Յուրաքանչյուր նախագիծ բաղկացած է բլոկչեյնի վրա հիմնված որոշակի ծառայությունից և այն մշակող ինստիտուցիոնալ կառուցվածքից: Տարբեր նախագծերից հավաքված տվյալների համադրելիությունը և արդյունքների ընդհանրացման հնարավորությունն ապահովելու համար մշակվել է դեպքերի ուսումնասիրության գնահատման հատուկ շրջանակ՝ ինչպես ցույց է տրված Նկար 1-ում: Շրջանակում հաշվի ենք առել մի շարք տարրեր, որոնք ընդգրկում են յուրաքանչյուր դեպքի ինստիտուցիոնալ, գործառնական, տեխնիկական և տնտեսական կողմերը: Դրանք կարելի է խմբավորել չորս շերտի մեջ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում ենք ստորև: Տվյալների հավաքման փուլում այս շրջանակը վերածվել է կառուցվածքային հարցազրույցի ձևաչափի: Մինչև մշակող թիմի ներկայացուցչի հետ հարցազրույցն իրականացվել է նախագծի փաստաթղթային հետազոտություն: Տեղեկությունների ամբողջականությունն ու ճշգրտությունն ապահովելու նպատակով հարցազրույցները մեծ մասամբ լրացվել են տնտեսական մանրամասն թվային տվյալներ պարունակող լրացուցիչ փաստաթղթով: Այս գլխում նախ առավել մանրամասն ներկայացնում ենք յուրաքանչյուր նախագիծը (Բաժին 2.2), ապա անցնում դեպքերի հորիզոնական համեմատությանը (Բաժին 2.3):

3. Լայնածավալ կիրառության օրինակ է քննարկվում հավելվածում: Ներկայացնում ենք ԱԱՀ-ի խարդախության դեմ պայքարի կիրառության ընդհանուր նկարագիրը՝ քննարկելով հնարավոր օգուտներն ու իրականացման տեխնոլոգիական խոչընդոտները:

Աղյուսակ 1. Բլոկչեյն նախագծերի ցանկ

1. Նախագծի անվանումը՝ Exonum-ի՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան: **Իրականացման երկիրը՝** Վրաստան: **Իրականացման ոլորտը՝** հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան, անշարժ գույքի գործարքներ: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** ազգային:

2. Նախագծի անվանումը՝ Blockcerts կրթական հավաստագրեր: **Իրականացման երկիրը՝** Մալթա: **Իրականացման ոլորտը՝** կրթական հավաստագրերի ստուգում, անձնական փաստաթղթերի պահպանում և փոխանցում: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** ազգային:

3. Նախագծի անվանումը՝ Chromaway անշարժ գույքի գործարքներ: **Իրականացման երկիրը՝** Շվեդիա: **Իրականացման ոլորտը՝** անշարժ գույքի գործարքներ, հողի նկատմամբ սեփականության իրավունքների փոխանցում: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** ազգային:

4. Նախագծի անվանումը՝ uPort ապակենտրոնացված ինքնություն: **Իրականացման երկիրը՝** Շվեյցարիա: **Իրականացման ոլորտը՝** թվային ինքնություն՝ բնակության հաստատման, էլեկտրոնային քվեարկության, հեծանիվների վարձույթի և կայանման վճարումների համար: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** տեղական՝ Ցուգի քաղաքապետարան:

5. Նախագծի անվանումը՝ Infrachain կառավարման շրջանակ: **Իրականացման երկիրը՝** Լյուքսեմբուրգ: **Իրականացման ոլորտը՝** բլոկչեյնի կառավարում: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** ազգային:

6. Նախագծի անվանումը՝ կենսաթոշակային ենթակառուցվածք: **Իրականացման երկիրը՝** Նիդեռլանդներ: **Իրականացման ոլորտը՝** կենսաթոշակային համակարգի կառավարում: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** ազգային:

7. Նախագծի անվանումը՝ Stadjerspas խելացի վաուչերներ: **Իրականացման երկիրը՝** Նիդեռլանդներ: **Իրականացման ոլորտը՝** ցածր եկամուտ ունեցող բնակիչների նպաստների կառավարում: **Ներգրավված կառավարման մակարդակը՝** տեղական՝ Գրոնինգենի քաղաքապետարան:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Նախագծի բնութագրեր

Այս բաժինն ընդգրկում է երկիրը կամ երկրները, որոնց սպասարկում է նախագիծը, և ներգրավված կառավարման մակարդակը: Նկարագրվում են նաև բլոկչեյնի փորձնական ներդրմամբ մատուցվող կամ հնարավոր դարձող ծառայությունները: Գնահատման շրջանակի այս տարրը ուսումնասիրում է նաև, թե արդյոք փորձնական ներդրումը կիրառվում է մի քանի ոլորտներում և մի քանի երկրներում: Նկարագրվում է բլոկչեյն ծառայությունում տեղադրության միջոցով արժեք ստեղծելու ձևը: Տեղադրությունը կարող է արժեք տալ անհատականացման, տեղադրության վրա հիմնված համայնքի կամ վերլուծական գիտելիքի ձևավորման միջոցով: Վերջապես, այս տարրը նկարագրում է հանրային ծառայությունում բլոկչեյնի ներդրման համար մշակված ծրագրային ապահովման բաց լինելու աստիճանը: Այն կարող է տատանվել ամբողջովին բաց կոդովից մինչև ամբողջովին սեփականատիրական ծրագրային ապահովում:

Գործառույթներ, կառավարում և օգտագործում

Գնահատման շրջանակի երկրորդ շերտը բացահայտում է բլոկչեյնի վրա հիմնված ծառայության գործառույթները, ինչպես նախագծի կոնսորցիումի, այնպես էլ բլոկչեյնի արձանագրության կառավարման կառուցվածքները և ծառայության ընթացիկ օգտագործումը: Գործառույթների մասով թվարկվում են բլոկչեյն հարթակի կատարած գործողությունները, օրինակ՝ ծագման ապացուցումը, գործարքների ավտոմատ կատարումը կամ ինքնության ստուգումը: Ուսումնասիրում ենք նաև, թե բլոկչեյն լուծումն ինչ չափով կարող է վերացնել գոյություն ունեցող հանրային ծառայությունների և հաստատությունների միջնորդական դերը:

Նկար 1. Դեպքերի ուսումնասիրության գնահատման շրջանակ

1. Դեպքի ուսումնասիրության ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ, մատուցվող կամ հնարավոր դարձող հանրային ծառայություններ, միջսահմանային բաղադրիչներ, միջոլորտային բաղադրիչներ, տեղադրությամբ արժեքի ստեղծում, ծրագրային ապահովման բաց լինելը: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություններ, տրամադրվող գործառույթներ: **3. Կառավարում.** կոնսորցիումում ներառված դերեր, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն, կոնսորցիումի կառավարում: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում, տարողություն, թողունակություն, մասշտաբայնացման հնարավորություն, օգտագործման հասունություն: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ, ոչ DLT համակարգեր, API շերտ, DLT հարթակի շերտ, ենթակառուցվածքի շերտ: **6. Ծախսեր.** սկզբնական փուլից մինչև գործառնական պատրաստություն միանվագ ծախսեր և պարբերական ծախսեր: **7. Օգուտներ.** քանակական և որակական օգուտներ: Դասավորություն՝ վերևում ընդհանուր բնութագրերը, դրանց տակ զուգահեռ՝ գործառույթները, կառավարումը և օգտագործումը, հաջորդ ամբողջական շերտում՝ տեխնիկական ճարտարապետությունը, ներքևում կողք կողքի՝ ծախսերն ու օգուտները:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Բլոկչեյնի տվյալ ճարտարապետության որդեգրած կառավարման մոդելի առումով տարբերակում ենք չորս նախատիպ, որոնք միմյանցից տարբերվում են գործարքների վավերացման՝ հաստատման կամ գրանցման, և գործարքներին մասնակցության՝ ընթերցման կամ գրառման բաց լինելու աստիճանով՝

• բլոկչեյնի այն ճարտարապետությունը, որտեղ համապատասխան սարքավորում ունեցող ցանկացած անձ կարող է վավերացնել կամ գրանցել գործարքները, կոչվում է առանց թույլտվության,

• այն ճարտարապետությունը, որտեղ միայն ընտրված որոշակի հանգույցներ կարող են վավերացնել կամ գրանցել գործարքները, կոչվում է թույլտվությամբ,

• այն ճարտարապետությունը, որտեղ ցանկացած անձ կարող է արձանագրության միջոցով մասնակցել գործարքներին, կոչվում է հանրային,

• այն ճարտարապետությունը, որտեղ միայն ընտրված մասնակիցները կարող են արձանագրության միջոցով մասնակցել գործարքներին, կոչվում է մասնավոր:

Ընդհանուր առմամբ կարելի է տարբերակել բլոկչեյնի չորս հիմնական տեսակ՝ հանրային՝ առանց թույլտվության, հանրային՝ թույլտվությամբ, մասնավոր՝ թույլտվությամբ և մասնավոր՝ առանց թույլտվության բլոկչեյններ, որոնց ամփոփ պատկերը ներկայացված է Աղյուսակ 2-ում: Կանաչ կետերը վավերացնող հանգույցներն են. դրանք կարող են վավերացնել համակարգի գործարքները և մասնակցել կոնսենսուսի մեխանիզմին:[4] Կապույտ կետերը ներկայացնում են ցանցի այն մասնակիցներին, որոնք կարող են գործարքներ կատարել, սակայն չեն կարող մասնակցել վավերացման մեխանիզմին: Այսինքն՝ կապույտ կետերով նշված օգտատերերը չեն մասնակցում կոնսենսուսի մեխանիզմին: Կարմիր օղակը ցույց է տալիս, որ գործարքների պատմությունը կարող են տեսնել միայն օղակի ներսի հանգույցները: Առանց օղակի պատկերները նշանակում են, որ համացանցին միացած ցանկացած անձ կարող է տեսնել բլոկչեյնի գործարքների պատմությունը:

4. Բաշխված ցանցերում կոնսենսուսի մեխանիզմն անհրաժեշտ է բոլոր հանգույցների միջև ընդհանուր գրանցամատյանի միասնական տարբերակը պահպանելու համար: Բլոկչեյն համակարգերում գործարքների հաջորդ բլոկը վավերացնում է կամ մեկ հանգույց, կամ որոշումն ընդունվում է քվեարկությամբ: Կոնսենսուսի ալգորիթմները տարբերվում են որոշակի ժամանակահատվածի համար այդ մեկ հանգույցի ընտրության եղանակներով: Հանրային բլոկչեյններում կիրառվում է պատահական նշանակման որևէ ձև, մինչդեռ մասնավոր բլոկչեյնները՝ հայտնի հանգույցներով, կարող են վավերացնողներին նշանակել համակարգված, օրինակ՝ հերթագայությամբ, կամ կիրառել քվեարկություն:

Աղյուսակ 2. Բլոկչեյնի նախատիպեր

Բլոկչեյնի տեսակը՝ հանրային՝ առանց թույլտվության: **Բացատրություն՝** այս համակարգերում բոլորը կարող են մասնակցել բլոկչեյնի կոնսենսուսի մեխանիզմին: Բացի դրանից, աշխարհում համացանցին միացած ցանկացած անձ կարող է գործարքներ կատարել և տեսնել գործարքների ամբողջական մատյանը: **Օրինակներ՝** Bitcoin, LiteCoin, Ethereum: **Պատկերի իմաստը՝** գործարք կատարող և վավերացնող հանգույցների բաց ցանց՝ առանց պատմության տեսանելիությունը սահմանափակող օղակի:

Բլոկչեյնի տեսակը՝ հանրային՝ թույլտվությամբ: **Բացատրություն՝** այս համակարգերում համացանցին միացած ցանկացած անձ կարող է գործարքներ կատարել և տեսնել բլոկչեյնի գործարքների մատյանը, սակայն կոնսենսուսի մեխանիզմին կարող է մասնակցել միայն սահմանափակ թվով հանգույց: **Օրինակներ՝** Ripple, Ethereum-ի մասնավոր տարբերակներ: **Պատկերի իմաստը՝** բաց մասնակցություն՝ վավերացնող հանգույցների սահմանափակ խմբով, առանց տեսանելիությունը սահմանափակող օղակի:

Բլոկչեյնի տեսակը՝ մասնավոր՝ թույլտվությամբ: **Բացատրություն՝** այս համակարգերում գործարքներ կատարելու և գործարքների մատյանը դիտելու հնարավորությունը սահմանափակված է համակարգի մասնակից հանգույցներով, իսկ բլոկչեյն համակարգի ճարտարապետը կամ սեփականատերը կարող է որոշել՝ ով կարող է մասնակցել համակարգին և որ հանգույցը՝ կոնսենսուսի մեխանիզմին: **Օրինակներ՝** Rubix, Hyperledger: **Պատկերի իմաստը՝** սահմանափակ մասնակիցներ և վավերացնողներ՝ պատմության տեսանելիությունը սահմանափակող կարմիր օղակով:

Բլոկչեյնի տեսակը՝ մասնավոր՝ առանց թույլտվության: **Բացատրություն՝** այս համակարգերը սահմանափակում են այն անձանց շրջանակը, որոնք կարող են գործարքներ կատարել և տեսնել գործարքների մատյանը, սակայն կոնսենսուսի մեխանիզմը բաց է բոլորի համար: **Օրինակ՝** Exonum՝ մասամբ: **Պատկերի իմաստը՝** պատմության սահմանափակ տեսանելիություն՝ կոնսենսուսին բաց մասնակցությամբ:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Կոնսորցիումի կառավարումը բնորոշվում է ընդհանուր կազմակերպական կառուցվածքով՝ կենտրոնացվածից մինչև ապակենտրոնացված: Կառավարման կառուցվածքը վերաբերում է նախագծի վերահսկման և ուղղորդման եղանակին: Ապակենտրոնացված կառավարումը նշանակում է, որ կոնսորցիումի բոլոր շահակիցներն ունեն որոշումների կայացման հավասար ձայնի իրավունք, իսկ կենտրոնացված կառավարումը՝ որ կենտրոնական կողմը կարող է որոշումներ ընդունել ծառայության ներդրման ուղղության և իրականացման վերաբերյալ:

Օգտագործման դիտարկումը ուսումնասիրում է նախագծում ներկայում գործարքներ կատարող օգտատերերի ընդհանուր թիվը: Հավաքվում են նաև տվյալներ ենթադրվող թողունակության և փորձնական ներդրման ընթացքում վայրկյանում կատարվող գործարքների փաստացի թվի վերաբերյալ: Թիմերից պահանջվել են նաև տեղեկություններ համակարգի տարողության մասին՝ այն

օգտատերերի թվի իմաստով, որոնց բլոկչեյն համակարգը կարող է առանց դժվարության սպասարկել: Տարողությունը պետք է հաշվի առնել ծառայության մասշտաբի ընդլայնումը դիտարկելիս:

Տեխնիկական ճարտարապետություն

Բլոկչեյնի տեխնիկական ճարտարապետության նկարագրության համար օգտագործում ենք շերտավոր մոդել: Այս հիերարխիկ շրջանակը տարբերակում է ներգրավված DLT և ոչ DLT համակարգերը, իսկ DLT մասում առանձնացնում է չորս ուղղահայաց բլոկ՝ ենթակառուցվածքներից և արձանագրություններից մինչև կիրառական ծրագրավորման միջերեսներ՝ API-ներ, և օգտատիրական հավելվածներ:

Ծախսեր և օգուտներ

Գնահատման շրջանակի չորրորդ տարրը վերլուծում է բլոկչեյն ծառայության մշակման և գործարկման ծախսերն ու օգուտները: Ընդհանուր ծախսերը բաժանվում են միանվագ և պարբերական խմբերի: Միանվագ ծախսերն ընդգրկում են հետազոտություններն ու մշակումները (R&D), նախագծի կառավարումը, սարքավորումների և ծրագրային ապահովման ձեռքբերումը, տեղադրումը, ինտեգրումը, փորձարկումն ու վավերացումը: Պարբերական ծախսերն ընդգրկում են անձնակազմի, շահագործման և պահպանման ծախսերը:

Օգուտների մասով տարբերակվում են քանակական և որակական օգուտներ: Քանակական օգուտներն են՝

• ծախսերի խնայողությունը, օրինակ՝ մեկ գործարքի գրանցման ծախսի կրճատումը՝ գործող համակարգի համեմատ,

• կարողությունների աճը, օրինակ՝ ժամանակի մեկ միավորում գրանցվող գործարքների ծավալի ավելացումը,

• արդյունավետության աճը, օրինակ՝ գործարքի ավարտման ժամանակի կրճատումը՝ գործող համակարգի համեմատ:

Որակական օգուտներն են՝

• հուսալիության բարձրացումը, օրինակ՝ կիբեռհարձակումների, համակարգի խափանումների կամ զգայուն տվյալների արտահոսքի ռիսկի նվազեցումը,

• բնապահպանական օգուտները, օրինակ՝ համակարգի աշխատանքը պահպանելու համար անհրաժեշտ էներգիայի նվազումը,

• հաշվետվողականության և կեղծումներից պաշտպանվածության բարելավումը, օրինակ՝ գործարքների և համակարգի ընթացիկ վիճակի թափանցիկության ու հետագծելիության բարձրացումը:

Փորձարկումների համեմատաբար վաղ փուլը և մեր հավաքած տվյալների բնույթը թույլ չեն տալիս կատարել բիզնես և նախագծային ռիսկերի համակարգված վերլուծություն: Մասնավորապես, չկարողացանք ռիսկերի նվազման քանակական գնահատական տալ: Այդպիսի վերլուծություն կարելի է կատարել ապագայում, երբ հասանելի լինեն ավելի շատ նախագծերի տվյալներ:

2.2. Առանձին դեպքերի ուսումնասիրություններ

Այս բաժնում մանրամասն ներկայացնում ենք ուսումնասիրության մեջ հետազոտված յոթ նախագծերից յուրաքանչյուրը:

2.2.1. Exonum՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան. Վրաստան

Նկար 2. Exonum-ի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան Վրաստանում: 1. Ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ՝ ազգային, հանրային ծառայություններ՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցում և ստուգում, միջսահմանային բաղադրիչ՝ չկա, միջոլորտային բաղադրիչ՝ չկա, տեղադրությամբ ստեղծվող արժեք՝ տեղադրությունն ինքն է ծառայության առարկան, ծրագրային ապահովման բաց լինելը՝ բաց կոդով: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություններ՝ չկան, գործառույթ՝ ծագման ապացուցում՝ գրառման իսկության տեխնիկական հավաստմամբ: **3. Կառավարում.** ներգրավված դերեր՝ կառավարություն, բաց կոդի համայնք, տեխնոլոգիական մատակարար, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ հանրային՝ առանց թույլտվության և մասնավոր՝ թույլտվությամբ, կոնսորցիումի կառավարում՝ կենտրոնացված՝ NAPR: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում՝ ավելի քան 100 հազար սեփականության իրավունք, տարողություն՝ անհայտ, թողունակություն՝ անհայտ, մասշտաբայնացման հնարավորություն՝ մասնավոր բլոկչեյնում 5000 գործարք/վրկ, հասունություն՝ գործառնական շահագործում: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ՝ NAPR-ի վարչարարական հավելված, ոչ DLT համակարգեր՝ NAPR-ի հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման համակարգ, API շերտ՝ գրանցամատյանի վարչարարական API, DLT հարթակի շերտ՝ մասնավոր բլոկչեյնի մասնավոր կոնսենսուս և աշխատանքի ապացույց՝ PoW, ենթակառուցվածքային շերտ՝ հայտնի հանգույցներ և Bitcoin բլոկչեյն: **6. Ծախսեր.** միանվագ՝ կազմակերպական կարողությունների ձևավորման և մշակման ծախսեր, պարբերական՝ Bitcoin գործարքների վճարներ և շահագործման ծախսեր: **7. Օգուտներ.** քանակական՝ քաղվածքի գրանցումը 400 անգամ ավելի արագ է, գործառնական ծախսերը՝ 90%-ով ցածր, որակական՝ թափանցիկության, խափանումների նկատմամբ դիմակայունության և հասկանալիության բարելավում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծի թիմի հաղորդած տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Վրաստանի Հանրապետության Հանրային ռեեստրի ազգային գործակալությունը (NAPR) բլոկչեյն տեխնոլոգիան օգտագործում է քաղաքացիներին հողի նկատմամբ սեփականության իրավունքի թվային հավաստագիր տրամադրելու համար: Դրա համար ավելացվում է Bitcoin բլոկչեյնում գործարքի հրապարակման ծածկագրային ապացույց: NAPR-ը գործընկերություն է հաստատել Bitcoin արձանագրության վրա հիմնված լուծումներ տրամադրող Bitfury Group-ի հետ, և նախագիծը մեկնարկել է 2016 թվականի ապրիլին (Bitfury Group, 2017): Այն օգնում է Վրաստանին պայքարել կոռուպցիայի դեմ և լուծել սեփականության պահանջների շուրջ վեճերը (Eurasianet, 2017): Բլոկչեյնի օգտագործման նպատակն անշարժ գույքի վերաբերյալ գրառումների նկատմամբ հանրային վստահության բարձրացումն է:

Հողի նկատմամբ սեփականության իրավունքի ավելացման կամ փոփոխման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ քայլերով, որոնք պատկերված են ստորև բերված նկարում՝

1. քաղաքացին, ինչպես ավանդական համակարգում, սպասարկման սրահին կամ նոտարին դիմում է հողի նկատմամբ սեփականության իրավունքի քաղվածքը գրանցելու կամ ստուգելու խնդրանքով,

2. նոտարը հողի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցում է մասնավոր Exonum բլոկչեյնում,


3. մասնավոր Exonum բլոկչեյնի հեշերը խարսխվում են հանրային Bitcoin բլոկչեյնում: Սա երաշխավորում է Exonum բլոկչեյնի բոլոր գործարքների ամբողջականությունը՝ մինչև Bitcoin բլոկչեյնում վերջին խարսխված բլոկը,

4. NAPR-ը քաղաքացուն տրամադրում է նրա գույքի թվային հավաստագիրը՝ ուղեկցված Bitcoin բլոկչեյնում հրապարակված քաղվածքի բնօրինակ լինելը հաստատող ծածկագրային ապացույցով:

5. քաղաքացու տեսանկյունից միակ տարբերությունն այն է, որ նա այժմ կարող է ստուգել հողի նկատմամբ սեփականության իրավունքի իսկությունը: Դա կարող է անել Վրաստանի ցանկացած քաղաքացի:

Նկար 3. NAPR-ի կողմից հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման գործընթացը

Նկար 3. NAPR-ի կողմից հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման գործընթացը



1 Քաղաքացին նոտարին ուղարկում է գրանցման դիմումը:
2 Նոտարը գրանցումն ավելացնում է մասնավոր Exonum բլոկչեյնին:
3 Exonum-ի հեշերը խարսխվում են հանրային Bitcoin բլոկչեյնում:
4 NAPR-ը քաղաքացուն տրամադրում է ծածկագրային ապացույցով հավաստագիր:
5 Քաղաքացին և հանրությունը կարող են ստուգել իսկությունը:

JRC, 2019 · Հայերեն վերակառուցում

Դերակատարներ և բաղադրիչներ՝ քաղաքացի, հանրություն, NAPR, նոտար, Exonum բլոկչեյն և Bitcoin բլոկչեյն: NAPR-ը, նոտարը և Exonum բլոկչեյնը պատկերված են ընդհանուր սահմանագծի ներսում, իսկ քաղաքացին, հանրությունն ու Bitcoin բլոկչեյնը՝ դրանից դուրս: 1. Քաղաքացի → նոտար՝ գրանցման դիմումի ուղարկում: 2. Նոտար → Exonum բլոկչեյն՝ գրանցման ավելացում մասնավոր բլոկչեյնին: 3. Exonum → Bitcoin բլոկչեյն՝ հեշերի խարսխում հանրային բլոկչեյնում: 4. NAPR → քաղաքացի՝ ծածկագրային ապացույցով ուղեկցված հավաստագրի տրամադրում: 5. Քաղաքացի և հանրություն → Bitcoin բլոկչեյն՝ իսկության ստուգում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Գործառույթներ

Բլոկչեյն տեխնոլոգիան քաղաքացիներն օգտագործում են գույքի վերաբերյալ հավաստագրերը ստուգելու, իսկ նոտարները՝ նոր գրանցումներ կատարելու համար: Գրելու պահին՝ 2018 թվականի երկրորդ եռամսյակում, ծառայությունը հնարավորություն է տալիս գրանցելու հողի նկատմամբ գոյություն ունեցող սեփականության իրավունքների առուվաճառքը և նոր սեփականության իրավունքները: Ապագայում համակարգը նախատեսվում է ընդլայնել՝ ներառելով գույքի քանդման, հիփոթեքի, վարձակալության և նոտարական ծառայությունների գրանցումը (Shin, 2017):

Կառավարում

Գործարքներին կարող են մասնակցել միայն NAPR-ը, նոտարները և Վրաստանի քաղաքացիները, ուստի սա թույլտվությամբ բլոկչեյն է: Գործարքները վավերացնելու իրավունքի առումով համակարգը մասնավոր է: Փաստացի վավերացումն իրականացվում է հայտնի սերվերների կամ հանգույցների խմբի միջոցով: Այնուհետև գործարքի տվյալները հեշավորվում և գրանցվում են հանրային Bitcoin բլոկչեյնում՝ բոլոր քաղաքացիների համար թափանցիկ դարձնելով սեփականության իրավունքի գրառման գոյությունը: Ուստի համակարգը հանրային՝ թույլտվությամբ և մասնավոր՝ թույլտվությամբ բլոկչեյնների համադրություն է: Հեշը ծածկագրային ապացույց է, որ գործարքի մանրամասները համապատասխանում են մասնավոր բլոկչեյնում գրանցված տվյալներին՝ առանց դրանք իրականում տեսնելու: Կոնսորցիումի կառավարումը կենտրոնացված է, քանի որ NAPR-ը կարող է որոշել կոնսորցիումի ուղղությունը, իսկ Bitfury-ն տեխնոլոգիական մատակարարն է:

Օգտագործում

Հողի նկատմամբ սեփականության իրավունքների բլոկչեյն գրանցամատյանի ներդրումը հասուն է. գործարքի ստուգումը կատարվում է հանրային բլոկչեյն ցանցի միջոցով: 2016 թվականի ապրիլից ի վեր տեխնոլոգիայի միջոցով գրանցվել է ավելի քան 100 000 սեփականության իրավունք: Exonum արձանագրությունը մասնավոր հանգույցների միջև կարող է մշակել վայրկյանում մինչև 5000 գործարք (tps): Հետևաբար որդեգրված բլոկչեյն լուծումը գրանցման հետ կապված նեղ տեղեր չունի:

Տեխնիկական ճարտարապետություն

Նախագիծն իրականացվում է Exonum շրջանակով, որը կազմակերպություններին թույլ է տալիս կառուցել թույլտվությամբ մասնավոր կամ հանրային բլոկչեյն՝ միաժամանակ պահպանելով Bitcoin բլոկչեյնի ապահոված անվտանգությունն ու աուդիտի հնարավորությունը: Այս շրջանակը ղեկավարներին՝ տվյալ դեպքում երկրի նոտարներին, թույլ է տալիս թեթև հաճախորդ ծրագրերի միջոցով ստուգել տեղեկությունները հաճախորդի կողմում: Այն նաև հեշերը պահպանում է Bitcoin ցանցում՝ դրանք դարձնելով անփոփոխ: Ծրագրային ապահովումն ամբողջովին բաց կոդով է: Exonum շրջանակը Exonum-ի օգտատիրական API-ի միջոցով միացված է Admin NAPR հավելվածին:

Մասնավոր տվյալները հանրային Bitcoin բլոկչեյնում չեն պահպանվում: Հանրային բլոկչեյնում պահվում է համակարգի վիճակի հեշը: Մասնավոր Exonum բլոկչեյնի յուրաքանչյուր լիարժեք հանգույց՝ NAPR-ը և նոտարները, ունի տվյալների սպառիչ և արդիական պատճենը: Մասնավոր Exonum բլոկչեյնն օգտագործում է նույնականացված մասնակիցներով կոնսենսուսի մեխանիզմ՝ նման գործնական բյուզանդական խափանումների նկատմամբ դիմակայունությանը (Practical Byzantine Fault Tolerance, PBFT): Հանգույցների վնասման դեպքում բլոկչեյնի վերականգնման համար բավական է մեկ հանգույց: Այս բլոկչեյն համակարգը լիովին ինտեգրված է NAPR-ի թվային հողային իրավունքների գրանցման համակարգին: Սեփականության իրավունքները պահվում են միայն կենտրոնացված տվյալների շտեմարանում: Մասնավոր բլոկչեյնում պահպանվում են նոտարական հանգույցների ուղարկած գրանցման մանրամասները և NAPR-ում սեփականության իրավունքների տեղադրության տվյալները: Նախագծի ճանապարհային քարտեզը նախատեսում է խելացի պայմանագրերի գործառույթի ներդրում՝ ի թիվս այլոց էսքրոու ծառայություններ իրականացնելու համար:

Ծախսեր և օգուտներ

Բլոկչեյնի այս ներդրումն ապահովում է քանակական և որակական օգուտների համակցություն՝

• հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման և ստուգման ժամանակի էական կրճատում. եթե նախկինում դրանք տևում էին մոտ 1-ից 3 օր, բլոկչեյնի կիրառմամբ գործարքը կատարվում է հաշված րոպեներում,

• հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման գործընթացի թափանցիկության բարձրացում,

• քաղաքացիների համար հուսալիության բարձրացում՝ պայմանավորված NAPR-ում պահվող տվյալների ճշգրտությամբ,

• էկոհամակարգի արդյունավետության աճ. հավաստագրի ստուգման ժամանակը օրերից կրճատվել է մինչև վայրկյաններ,

• հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման ծառայության գործառնական ծախսերի՝ մինչև 90% կրճատում:

Նոր համակարգի ներդրման ծախսերը հիմնականում միանվագ են և կապված են Exonum արձանագրության հարմարեցման ու NAPR-ի և նոտարների համակարգերին ինտեգրման հետ: NAPR-ի կրած այս ծախսերն ընդգրկում են՝

• Exonum շրջանակի հիման վրա անհատականացված արձանագրության մշակման ծախսերը: Սարքավորումների ծախս չի եղել, քանի որ NAPR-ը լրացուցիչ ենթակառուցվածք գնելու կարիք չի ունեցել,

• Exonum բլոկչեյնի պահպանման և շահագործման ծախսերը,

• կազմակերպական կարողությունների ձևավորման ծախսերը՝ NAPR-ին բլոկչեյն տեխնոլոգիան հասկանալու և օգտագործելու պատրաստելու համար,

• Bitcoin բլոկչեյնում գործարքների խարսխման ծախսերը: Քանի որ գործարքները խարսխվում են խմբերով, վճարները կատարվում են պարբերաբար, այլ ոչ թե յուրաքանչյուր գործարքի համար:

Այս ծախսերի փաստացի չափերը չեն բացահայտվել: Քաղաքացիներից լրացուցիչ վճար չի գանձվում: Հատկանշական է, որ հին համակարգի մի շարք ծախսեր պահպանվում են, քանի որ բլոկչեյն համակարգը չի փոխարինում նախկին լուծմանը: Դրանք կապված են կենտրոնական թվային գրանցման համակարգի պահպանման հետ: Բացի այդ, քաղաքացիների դիմումների ստուգումը նոտարը դեռ կատարում է ձեռքով:

Հիմնական հետևություններ

• Նախագծի ներկայացուցչի խոսքով՝ այս կիրառության մեջ բլոկչեյն տեխնոլոգիայի հիմնական հավելյալ արժեքը թվային հավաստագրերի անվտանգության և հուսալիության բարձրացումն է:

• Բլոկչեյն համակարգը չի վերացնում որևէ կազմակերպության միջնորդական դերը և չի փոխարինում որևէ գործող համակարգի: Այն պարզապես ավելացնում է նոր գործառույթ՝ քաղաքացիների համար լրացուցիչ հավաստիացման ձևով: Այդ պատճառով նախկին համակարգերին ինտեգրումը համեմատաբար հեշտ է եղել:

• Հավաստագրերը ստուգվում են հանրային բլոկչեյնում, որը որևէ մասնակցի կամ մասնակիցների խմբի վերահսկողությունից դուրս է: Այս անկախ և կեղծման չենթարկվող շերտն օգնում է պայքարել խարդախության դեմ և դադարեցնել սեփականության իրավունքների շուրջ վեճերը:

• Բլոկչեյնի վրա հիմնված համակարգի ներդրման դյուրինությանն ու հաջողությանը նպաստել է Վրաստանի Հանրապետությունում NAPR-ի կազմակերպական և քաղաքական ինքնավարությունը:

• Վրաստանի օրենսդրությամբ հողի նկատմամբ սեփականության իրավունքների տվյալներն ի սկզբանե հանրային են: Այս իրավական դրույթը զգալիորեն նպաստել է բլոկչեյն տեխնոլոգիայի ներդրմանը:

• Հաջողության մեկ այլ գործոն է տեխնոլոգիայի իմացությունից օգտատիրոջ անկախությունը: Քաղաքացիները գործում են հարմար վեբ միջերեսով և ծառայությունից օգտվելու համար պարտադիր չէ, որ որևէ բան իմանան բլոկչեյնի մասին:

• Ներկայում օգտագործվում է Exonum շրջանակը, սակայն Bitcoin բլոկչեյնից կախվածությունից խուսափելու համար NAPR-ն ուսումնասիրում է այլ հանրային բլոկչեյն հարթակներ:

2.2.2. Blockcerts կրթական հավաստագրեր. Մալթա

Նկար 4. Blockcerts-ի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Կրթական հավաստագրեր Մալթայում: 1. Ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ՝ ազգային, հանրային ծառայություն՝ հավաստագրի ստուգում, միջսահմանային բաղադրիչ՝ այո, միջոլորտային բաղադրիչ՝ բիզնես և կրթություն, տեղադրությամբ ստեղծվող արժեք՝ տեղադրությունը ստատիկ է, ծրագրային ապահովում՝ բաց կոդով: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություն՝ համալսարանի հավաստագրերի ստուգման գրասենյակ, գործառույթ՝ ծագման ապացուցում՝ գրառման իսկության տեխնիկական հավաստմամբ: **3. Կառավարում.** դերեր՝ կառավարություն, բաց կոդի համայնք, տեխնոլոգիական մատակարար, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ հանրային՝ առանց թույլտվության, կոնսորցիումի կառավարում՝ խառը՝ կոնսորցիումի տարբեր գործընկերներով: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում՝ հարյուրավոր, տարողություն՝ անհայտ, թողունակություն՝ 3 գործարք/վրկ՝ Bitcoin, մասշտաբայնացում՝ 3 գործարք/վրկ՝ Bitcoin, հասունություն՝ վաղ փուլի փորձնական նախագիծ: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ՝ դրամապանակ՝ բջջային հավելված, և թողարկողի ծրագրային ապահովում, ոչ DLT համակարգեր՝ հաստատությունների հավաստագրերի շտեմարան, API շերտ՝ բլոկչեյն API-ներ՝ հաստատման և որոնման համար, DLT հարթակ՝ աշխատանքի ապացույց՝ Proof-of-Work, ենթակառուցվածք՝ Bitcoin բլոկչեյն: **6. Ծախսեր.** միանվագ՝ ինտեգրման և մշակման ծախսեր, պարբերական՝ բլոկչեյնի գործարքների և պահպանման ծախսեր: **7. Օգուտներ.** քանակական՝ վարչարարության ավելի ցածր ծախսեր, որակական՝ քաղաքացիների սեփականություն, հարմար պահպանում և ընտրովի փոխանցում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

2017 թվականի հոկտեմբերին Մալթայի կառավարությունը գործարկել է բլոկչեյն տեխնոլոգիայի միջոցով կրթական հավաստագրերի ստուգման նախագիծ: Մալթայի կրթության և զբաղվածության նախարարությունը (MEDE) որոշել է կրթության վերաբերյալ

գրառումների կառավարման համար օգտագործել Blockcerts բաց ստանդարտը: Blockcerts-ն ապահովում է արժեքային շղթայի բոլոր տարրերը՝ հավաստագրերի ստեղծումը, թողարկումը, դիտումը և ստուգումը, իսկ որպես ենթակառուցվածք օգտագործում է բլոկչեյն տեխնոլոգիան: Փորձնական նախագիծը նախաձեռնվել է քաղաքացիների համար կրթության ստուգելի ապացույց ստեղծելու նպատակով (Commission, 2017):

Blockcerts բաց ստանդարտը 2015 թվականին մշակել են Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը (MIT) և Learning Machine ստարտափը, որը մասնագիտանում է բլոկչեյնի վրա հիմնված հավաստագրման համակարգերում: Blockcerts համակարգով կրթական հավաստագրի թողարկման և ստուգման գործընթացը ներառում է հետևյալ քայլերը (Grech & Camilleri, 2017)՝

1. կրթական հաստատությունն իր շրջանավարտներին խնդրում է ներբեռնել Blockcerts հավելվածը և իրեն ավելացնել որպես թողարկող,

2. քաղաքացին՝ շրջանավարտը, տեղադրում է դրամապանակը և ընդունում թողարկողին: Այդ ընթացքում դրամապանակը գեներացնում է մասնավոր և հանրային բանալիներ,

3. քանի որ քաղաքացին թողարկողին հաստատել է որպես հավաստագրեր տրամադրողի, Blockcerts հավելվածը քաղաքացու հանրային բանալին ուղարկում է թողարկողին,

4. թողարկողը Blockcerts-ի թողարկողի միջերեսի հավելվածում ստեղծում է քաղաքացու հանրային բանալին ներառող թվային հավաստագիր: Այն ստորագրվում է թողարկողի մասնավոր բանալիով: Երբ հավաստագիրը ներառում է քաղաքացու հանրային բանալին, այն ինքնաբերաբար պահվում է նրա Blockcerts դրամապանակում,

5. թողարկողը Blockcerts-ի թողարկողի միջավայրում հեշավորում է հավաստագիրը և հեշը պահում Bitcoin բլոկչեյնում:


6. թողարկողը հավաստագիրը քաղաքացուն ուղարկում է էլեկտրոնային փոստով՝ ներառելով Blockcerts-ի URL-ը, որը հղվում է բլոկչեյնում պահվող հեշին,

7. քաղաքացին էլեկտրոնային հավաստագիրն ու URL-ը կարող է տրամադրել երրորդ կողմերին,

8. երրորդ կողմը, օրինակ՝ հնարավոր գործատուն, հավաստագիրն ու URL-ը ներմուծում է Blockcerts-ի առցանց ստուգիչի մեջ: Այն ստուգում է՝ տրամադրված հավաստագրի հեշը համապատասխանո՞ւմ է արդյոք URL-ում նշված Bitcoin բլոկչեյնի հեշին: Եթե հեշը գտնվել է, հավաստագիրը վավերացվում է: Երրորդ կողմն այժմ ունի փաստաթղթի բնօրինակ լինելու ապացույց:

Նկար 5. Blockcerts հավաստագրերի ստուգման գործընթացը

Նկար 5. Blockcerts հավաստագրերի ստուգման գործընթացը



1–3	Թողարկողի ավելացման խնդրանք ապա դրամապանակի տեղադրում և թողարկողի ընդունում ապա քաղաքացու հանրային բանալու ուղարկում թողարկողին:
4	Քաղաքացու հանրային բանալին ներառող հավաստագրի ստեղծում և ստորագրում թողարկողի մասնավոր բանալիով. հավաստագիրը պահվում է դրամապանակում:
5–6	Ստորագրված հավաստագրի հեշն ավելացվում է Bitcoin բլոկչեյնին, ապա հավաստագիրն ու հեշը էլեկտրոնային փոստով ուղարկվում են քաղաքացուն:
7–8	Քաղաքացին հավաստագիրը տրամադրում է երրորդ կողմին, որը դիմում է առցանց ստուգիչին:
8ա–բ	Ստուգիչը հաշվարկում է հավաստագրի հեշը և փնտրում Bitcoin բլոկչեյնում: Եթե հեշը գտնվել է, հավաստագիրը վավերացվում է:

JRC, 2019 · Հայերեն վերակառուցում

Դերակատարներ՝ քաղաքացի, թողարկող՝ համալսարան, երրորդ կողմեր: Blockcerts հավելվածը ներառում է Blockcerts դրամապանակ՝ հավաստագրերի տեղային պահպանում, Blockcerts թողարկողի միջերես և Blockcerts առցանց ստուգիչ: 1. Թողարկողը քաղաքացուն խնդրում է հավելվածում ավելացնել թողարկողին: 2. Քաղաքացին տեղադրում է դրամապանակը և ընդունում թողարկողին: 3. Քաղաքացու հանրային բանալին ուղարկվում է թողարկողին: 4. Թողարկողը ստեղծում է քաղաքացու հանրային բանալին ներառող հավաստագիր և ստորագրում իր մասնավոր բանալիով. այն ինքնաբերաբար պահվում է դրամապանակում: 5. Թողարկողը ստորագրված հավաստագրի հեշն ավելացնում է Bitcoin բլոկչեյնին: 6. Թողարկողը հավաստագիրն ու հեշը էլեկտրոնային փոստով ուղարկում է քաղաքացուն: 7. Քաղաքացին հավաստագիրը տրամադրում է երրորդ կողմերին: 8. Երրորդ կողմերը ստուգում են հավաստագիրը առցանց ստուգիչով: 8ա. Ստուգիչը հավաստագրից հաշվարկում է հեշը և ստուգում՝ արդյոք այն առկա է Bitcoin բլոկչեյնում: 8բ. Եթե հեշը գտնվել է, հավաստագիրը վավերացվում է:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Գործառույթներ

Նախագծի գործառույթներն են կրթական հավաստագրերի թողարկումը, հավաստագրերի ստուգումը և օգտատիրական հավելվածում անձնական հավաստագրերի պահպանումը: Blockcerts հավելվածը տրամադրում է դրամապանակ, որտեղ քաղաքացին իր գրառումների լիարժեք սեփականատերն է: Համակարգը քաղաքացուն թույլ է տալիս վերահսկել, թե երրորդ կողմերից ով կարող է տեսնել իր կրթական գրառումները և ստուգել դրանց իսկությունը: Ստուգումը կարող է կատարվել Blockcerts համընդհանուր ստուգիչով՝ բոլորի համար հասանելի վեբ էջով:[5] Տրամադրելով հավաստագրի URL-ը՝ կարելի է ստուգել հավաստագրի վավերությունը, հավաստագրի տիրոջը, թողարկման ամսաթիվը, թողարկող հաստատությունն ու գործարքի նույնացուցիչը:

Կառավարում

Կառավարման առումով ներգրավված կոնսորցիումը խառը է: MEDE-ն փորձնական նախագծի նախաձեռնողն ու հովանավորն է, սակայն նախագծին մասնակցում են նաև այլ կողմեր: Կոնսորցիումն ընդգրկում է Մալթայի արվեստի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջը (MCAST) և Զբոսաշրջային ուսումնասիրությունների ինստիտուտը (ITS): Learning Machine-ը Blockcerts կողը ներդնող տեխնոլոգիական գործընկերն է: Մալթայի նախագիծը մշակում է հավելվածի շերտ հանրային՝ առանց թույլտվության Bitcoin բլոկչեյնի վրա: Ծառայությունից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, ով կոնսորցիումի գործընկերներից մեկի թողարկած հավաստագիր ունի: Հավաստագրերի ստուգումը կատարվում է Blockcerts համընդհանուր ստուգիչով, իսկ հեշի ստուգումը՝ հանրային Bitcoin ցանցում:

5. Հասանելի է՝ https://www.blockcerts.org/:

Օգտագործում

Blockcerts բաց ստանդարտը դեռ մշակման փուլում է, ուստի Մալթայի կառավարության գործարկած փորձնական նախագիծը փոքրածավալ է: Այն ներառում է միայն երկու կրթական հաստատություն և դրանց ուսանողներին: Ստուգման ծրագրային ապահովումը ներդրված է երկու հաստատությունում, իսկ Blockcerts դրամապանակը հավաստագրերի վերահսկողությունը տալիս է ուսանողներին: Գրելու պահին՝ 2018 թվականի երկրորդ եռամսյակում, թողարկվել է ավելի քան հարյուր հավաստագիր: Երրորդ կողմերի կատարած ստուգումների թիվը հայտնի չէ: Մասշտաբայնացման հնարավորությունը կախված է ընտրված բլոկչեյն հարթակից: Blockcerts ստանդարտը հեշերը բլոկչեյնում թողարկում է փաթեթներով, ինչը նույնիսկ Bitcoin հարթակում թույլ է տալիս ընդլայնել մասշտաբը: Bitcoin-ի թողունակությունը ներկայում վայրկյանում յոթ գործարք է, սակայն փաթեթավորումը թույլ է տալիս ավելի մեծ թողունակություն ապահովել:

Թարգմանական նշում. Նկար 4-ում Bitcoin-ի համար նշված է 3 գործարք/վրկ, իսկ այս պարբերությունում՝ 7: Բնագրի թվերը պահպանվել են իրենց համապատասխան տեղերում:

Տեխնիկական ճարտարապետություն

Blockcerts-ը կազմված է բաց կոդով գրադարաններից, գործիքներից և բջջային հավելվածներից՝ անձնական հավաստագրեր ստեղծելու, պահելու, փոխանցելու և ստուգելու համար: Մասնավոր բլոկչեյն ցանցը կազմված կլինի բացառապես այն հավաստագրված հաստատություններից, որոնք Blockcerts լուծմամբ մասնակցում են կրթական հավաստագրերի գրանցմանը: Ստանդարտը նաև օգտագործում է հանրային բլոկչեյնը՝ հավաստագրերի հեշերը խարսխելով Bitcoin բլոկչեյնում: Լուծման DLT շերտը ներկայում անանուն հանգույցների միջև կիրառում է աշխատանքի ապացույցի՝ Proof-of-Work դասական կոնսենսուսի մեխանիզմը: Learning Machine-ը փորձում է իր ստանդարտը ինտեգրել մի քանի բլոկչեյն հարթակի, սակայն ներկայում օգտագործվում է միայն Bitcoin բլոկչեյնը: Պատճառը հիմնականում այն է, որ երբ Blockcerts-ը մեկնարկեց 2015 թվականին, Bitcoin-ը միակ կայուն բլոկչեյն հարթակն էր: Ներկայում, սակայն, համայնքի ջանքերի զգալի մասն ուղղված է նաև Ethereum-ի հետ փոխգործունակության ապահովմանը՝ հավաստագրեր ստեղծելու, թողարկելու, դիտելու և ստուգելու բաց բաղադրիչների հիման վրա:

Ծախսեր և օգուտներ

Վերջնական օգտատերերի համար բլոկչեյնի փորձնական նախագծի օգուտներն են՝

• քաղաքացիների սեփականության իրավունքը հավաստագրերի նկատմամբ. Blockcerts հավելվածը թույլ է տալիս ավելի մեծ վերահսկողություն ունենալ սեփական կրթական ձեռքբերումների և հավաստագրերի նկատմամբ,

• ինքնիշխանությունը. տվյալները փոխանցելու թույլտվությունը տալիս է քաղաքացին, այլ ոչ թե թողարկող հաստատությունը,

• ինքնության և մասնավոր կյանքի պաշտպանությունը. քաղաքացիները կարող են ընտրել՝ որ հավաստագրերը որ հաստատություններին տրամադրել,

• հարմար պահպանումն ու փոխանցումը, հավաստագրերի արագ ստուգումը: Թղթային պատճեններն այլևս անհրաժեշտ չեն, և վերանում է կեղծ հավաստագիր օգտագործելու ռիսկը:

Կրթական հաստատությունների համար օգուտներն են՝

• գործող կրթական գրառումների համակարգերին հեշտ ինտեգրումը՝ Blockcerts API-ների միջոցով: API-ները գործող համակարգերի ներքին ծրագրային մասը միացնում են Blockcerts հավելվածին: Արդյունքում թվային հավաստագրերը կարող են ինքնաբերաբար ստեղծվել՝ առանց թողարկողի լրացուցիչ վարչական գործողությունների: Երրորդ կողմերը ևս API-ները կարող են օգտագործել հավաստագրերի ստուգումն ավտոմատացնելու համար,

• բաց ստանդարտի հիմնական առավելությունն այն է, որ այլ կազմակերպություններ կամ երկրներ կարող են դրա հիման վրա կառուցել սեփական ստուգիչը կամ հավաստագրերի թողարկման համակարգերը և ապահովել փոխգործունակություն: Ստուգիչ համակարգը, օրինակ, ընկերությունների աշխատակիցների հավաքագրման ժամանակ կարող է ինքնաբերաբար ստուգել հավաստագրերը: Թողարկման համակարգը կարող է ինքնաբերաբար ստեղծել ստուգելի հավաստագրեր, ինչպես այս փորձնական ներդրման դեպքում,

• կրթական հաստատությունների վարչարարության ծախսերը նվազում են, քանի որ հաստատությունը հետագայում այլևս ստիպված չէ մասնակցել հավաստագրերի պատճենների կամ գնահատականների քաղվածքների վերաբերյալ հարցումներին:

Նախագծի ծախսերն են՝

• ստանդարտի մշակման ծախսերը: Մալթայի կառավարությունը պատրաստ է ֆինանսավորել Blockcerts բաց ստանդարտի զարգացումը, քանի որ դրանից շահելու է հասարակությունը:

Կառավարությունը մտադիր է այս փորձնական լուծումը տարածել կրթական հավաստագրեր թողարկող բոլոր հաստատությունների վրա, ինչպես նաև ընդլայնել այն՝ ներառելով այլ տեսակի հավաստագրեր: Ներկայում ուսումնասիրվող առաջնահերթ կիրառություններից մեկն այն է, թե Blockcerts համակարգն ինչպես կարող է օգնել պահպանել և ստուգել փախստականների փաստաթղթերը, օրինակ՝ ինքնության և իշխանությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ հավաստագրերը,

• ծառայության ներդրման և ինտեգրման ծախսերը: Տեխնոլոգիայի մշակողը մեծ ծախսեր է կրում կոնսորցիումի տարբեր գործընկերների համար հավաստագրման ավտոմատացված գործընթաց կառուցելու նպատակով: Սա Մալթայի նախագծի հիմնական ծախսային գործոնն է:

Հիմնական հետևություններ

• Մալթայի կառավարության համար փորձնական նախագծի ստեղծումն ուներ ռազմավարական նշանակություն: Կառավարությունը ցանկանում էր բլոկչեյն տեխնոլոգիայի մշակման և փորձարկման առաջամարտիկ լինել:

• Մալթայի կառավարության շարժառիթներում կար նաև գաղափարական տարր: Հիմնական շահակիցներից մի քանիսը հավատում են ինքնիշխանության գաղափարին և վերահսկողությունը հաստատություններից սովորողներին փոխանցելուն:

• Ընթացիկ կիրառությունը սահմանափակվում է կրթական հավաստագրերով, սակայն համակարգն ինքնին կարող է ընդլայնվել՝ ընդգրկելով քաղաքացիների տարբեր փաստաթղթեր, օրինակ՝ ծննդյան վկայականներ, ամուսնության վկայականներ և այլն:

• Այս դեպքը սահմանափակ չափով է պայմանավորված թողարկողների տնտեսական խթաններով: Կրթական հաստատությունները քիչ տնտեսական պատճառներ ունեն գործող կենտրոնացված լուծումները փոխելու համար: Սակայն քաղաքացիների և երրորդ կողմերի օգուտները, օրինակ՝

հարմարավետության աճն ու ժամանակի խնայողությունը, ակնհայտ են:

• Մալթայի կառավարությունն այժմ ուսումնասիրում է ընթացիկ նախագիծն ընդլայնելու և փախստականների փաստաթղթերը ևս ներառելու հնարավորությունը: Այդ նախագծում Blockcerts բաց ստանդարտները կարող են կիրառվել ինքնությունը ստուգելու և եվրոպական երկրներում փախստականների ստացած սոցիալական աջակցությունը գրանցելու համար:

• Բլոկչեյնով հավաստագրերի թողարկման և ստուգման իրավաչափությունը այս լուծումը միջազգային մասշտաբով ներդնելու հիմնական խոչընդոտն է:

2.2.3. Chromaway անշարժ գույքի գործարքներ. Շվեդիա

Նկար 6. Chromaway-ի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Անշարժ գույքի գործարքներ Շվեդիայում: 1. Ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ՝ ազգային, հանրային ծառայություններ՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում և գործարքի դյուրացում, միջսահմանային բաղադրիչ՝ չկա, միջոլորտային բաղադրիչ՝ չկա, տեղադրությամբ ստեղծվող արժեք՝ տեղադրությունն ինքն է ծառայության առարկան, ծրագրային ապահովում՝ սեփականատիրական: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություններ՝ նոտարներ, գործառույթներ՝ խելացի պայմանագրերով ավտոմատացում և համատեղ տվյալների շտեմարան: **3. Կառավարում.** դերեր՝ կառավարություն, տեխնոլոգիական մատակարար, բանկեր, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ մասնավոր՝ թույլտվությամբ, կոնսորցիումի կառավարում՝ խառը՝ կոնսորցիումի տարբեր գործընկերներով: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում՝ անհայտ, տարողություն՝ անհայտ, թողունակություն՝ անհայտ, մասշտաբայնացում՝ 160 գործարք/վրկ, հասունություն՝ գաղափարի իրագործելիության ապացույց: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ՝ խելացի պայմանագրի միջերես, ոչ DLT համակարգեր՝ Շվեդիայի հողային գրանցամատյան, API շերտ՝ միջհանգուցային API, հաճախորդի API և նախկին համակարգերի API, DLT հարթակ՝ լիազորության ապացույցի՝ Proof-of-Authority կոնսենսուս, ենթակառուցվածք՝ պահպանում PostgreSQL-ում կամ հարաբերակցական տվյալների շտեմարանի կառավարման այլ համակարգում՝ RDBMS: **6. Ծախսեր.** միանվագ՝ ինտեգրման աշխատանքներ և մշակման ծախսեր, պարբերական՝ գործարքների ծախսեր: **7. Օգուտներ.** քանակական՝ գնահատված 100 մլն եվրո, գործարքի ժամանակի ավելի քան 95% և ծախսերի 90% նվազում, որակական՝ գործարքների թափանցիկության ու անվտանգության բարձրացում և հիփոթեքի մշակման բարելավում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Անշարժ գույքի ոլորտում գործարքի արժեքը մեծ է, ինչն ընդգծում է գույքային գործարքների անվտանգության և թափանցիկության

կարևորությունը: Ներկայում անշարժ գույքի գործարքների վերջնական կարգավորումը դանդաղ է, ծախսատար և ենթակա տարբեր բիզնես ռիսկերի, այդ թվում՝ սեփականության վկայագրերի վիճարկման: Այս նախագիծը փորձում է լուծել ինչպես գույքի փոխանցման կողմերի միջև անվստահության, այնպես էլ գործարքների արագության խնդիրները: Այն 2016 թվականի սեպտեմբերին նախաձեռնել են Շվեդիայի քարտեզագրության, կադաստրի և հողային գրանցման մարմինը, Landshypotek Bank-ը, SBAB-ը, Telia-ն, Chromaway-ն ու Kairos Future-ը (Chromaway, 2017a): Նախագիծը ստեղծվել է անշարժ գույքի գործարքներն ու հիփոթեքային փաստաթղթերը վերաիմաստավորելու համար: Այն նպատակ ունի լուծելու գործող գործարքային համակարգի հիմնական խնդրահարույց կետերը՝

• թափանցիկության պակասը: Հողային մարմինը գործարքին սկզբից չի մասնակցում, այլ միանում է միայն վերջում: Գործընթացի վերջնական փուլում պետք է ուսումնասիրել մեծ ծավալի փաստաթղթեր, ինչը հետաձգում է հողի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը և անորոշություն ստեղծում գործարքի արդյունքի շուրջ,

• գրանցման դանդաղ համակարգը: Հողային մարմնի կողմից սեփականության իրավունքի հաստատումը կարող է տևել մինչև վեց ամիս,

• գնորդների և վաճառողների համաձայնությունների բարդ գործընթացը: Համակարգի նկատմամբ վստահության պակասն ու գործարքի մեծ արժեքը բարձրացնում են գործարքային ծախսերը: Սեփականության իրավունքի փոխանցումն ապահովագրելը անշարժ գույքի շուկայի գործարքային ծախսերի բնորոշ օրինակ է:

Այս նախագծի հիմքում ընկած տեխնոլոգիան ունի երկու հիմնական բաղադրիչ՝ բլոկչեյն հարթակը և խելացի պայմանագրով աշխատանքային հոսքը: Վերջինս մասնակիցներին հնարավորություն է տալիս գործարքը մշակելու ավտոմատ եղանակով: Բլոկչեյն համակարգը կենտրոնացված հարաբերակցական տվյալների

շտեմարանների հնարավորությունները համադրում է մասնավոր բլոկչեյնների հետ:

Օգտատիրոջ տեսանկյունից քաղաքացին մուտք է գործում Chromaway-ի վեբ դիտարկիչ, որը հասանելիություն է տալիս Esplix խելացի պայմանագրի մեխանիզմին: Աշխատանքային հոսքին մասնակցում են դերակատարների հինգ տեսակ՝ գնորդը, վաճառողը, անշարժ գույքի գործակալը, բանկերը և հողային գրանցամատյանը: Գույքի փոխանցման հիմքում ընկած գործարքի ամբողջ գործընթացը նկարագրված է ստորև և պատկերված Նկար 7-ում՝

1. վաճառողը մուտք է գործում Esplix,

2. վաճառողը ցանկանում է վաճառել իր գույքը և դրա համար գործարկում է խելացի պայմանագիր ու ընտրում առաջարկվող գույքը,

3. հողային գրանցամատյանը տրամադրում է վաճառողին պատկանող գույքի տեղեկությունները՝ ներառյալ հիփոթեքների գրանցումը,

4. աշխատանքային հոսք է հրավիրվում միջնորդը՝ անշարժ գույքի գործակալը: Նա նկարագրում է գույքը,

5. միջնորդն այնուհետև հրավիրում է գնորդին՝ օգտագործելով վերջինիս հանրային բանալին,

6. գնորդը գույքի համար առաջարկ է ներկայացնում՝ նշելով վճարելիք գումարը,

7. վաճառողն ընդունում կամ մերժում է գույքի համար առաջարկված գինը,

8. վաճառողի՝ գինն ընդունելուց հետո գնորդը պետք է պարտավորվի կատարել գործարքը և անցնի համաձայնությանը,

9. վաճառողն այնուհետև աշխատանքային հոսք է հրավիրում իր բանկին,

10. բանկը կարող է ավելացնել պահանջված հիփոթեքային փաստաթղթերի փաթեթը,

11. հիփոթեքային փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո վաճառողը կարող է աշխատանքային հոսք հրավիրել գնորդի բանկին,

12. գնորդի բանկը պարտավորվում է փոխանցել համաձայնեցված գումարը,

13. միջնորդն այժմ պետք է նշի, որ գնորդը փաստացի տիրապետում է գույքին,

14. միջնորդն այնուհետև աշխատանքային հոսք է հրավիրում հողային գրանցամատյանին,

15. հողային գրանցամատյանը ստուգում է՝ արդյոք բոլոր քայլերը պատշաճ են կատարվել, և փոխանցում է սեփականության իրավունքը:

Նկար 7. Chromaway-ի անշարժ գույքի փոխանցման աշխատանքային հոսքը



Հորիզոնական ընդհանուր սլաք՝ «Գրանցում բլոկչեյնում», սկզբում և վերջում՝ «Բլոկչեյն»: Դերակատարների գործողությունները միանում են այդ ընդհանուր գրանցմանը հետևյալ հերթականությամբ. վաճառող՝ 1. մուտք, 2. առաջարկի ստեղծում, հողային գրանցամատյան՝ 3. տեղեկության տրամադրում, միջնորդ՝ 4. նկարագրության ստեղծում, 5. գնորդի հրավեր, գնորդ՝ 6. գույքի համար առաջարկ, վաճառող՝ 7. ընդունում կամ մերժում, 8. պարտավորության ստանձնում, 9. վաճառողի բանկի հրավեր, վաճառողի բանկ՝ 10. հիփոթեքային փաստաթղթերի ավելացում, վաճառողից գնորդի բանկին՝ 11. հրավեր, գնորդի բանկ՝ 12. պարտավորության ստանձնում, միջնորդ՝ 13. գույքի տիրապետման նշում, 14. հողային գրանցամատյանի հրավեր, հողային գրանցամատյան՝ 15. ստուգում և սեփականության իրավունքի փոխանցում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Թարգմանական նշում. բնագրի Նկար 7-ում 8-րդ քայլը՝ պարտավորության ստանձնումը, տեղադրված է վաճառողի դիրքի մոտ, իսկ գործընթացի վերևի տեքստում այն վերագրված է գնորդին: Հայերեն վերակառուցված նկարում կողմը նշված է ըստ բնագրի քայլերի տեքստի, իսկ այս տարբերությունը բացահայտված է այստեղ:

Գործառույթներ

Լուծումը ներմուծում է բլոկչեյնի վրա հիմնված բոլորովին նոր աշխատանքային հոսք, որը պարզեցնում և ապահովում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը: Համակարգը միացված է սեփականության իրավունքները պահպանելու համար պատասխանատու Շվեդիայի հողային գրանցամատյանին: Բլոկչեյնում պահպանվում է միայն համակարգի վիճակը՝ աշխատանքային հոսքի յուրաքանչյուր քայլի կատարումից հետո: Այդպիսով ապահովվում է գործարքի մասնակիցների համաժամացումը: Բլոկչեյնում պահվող մեկ մասնավոր տարր կա՝ վաճառողի նշած գինը: Սեփականության իրավունքի փաստաթղթում պահվող բոլոր տվյալները, օրինակ՝ գույքի ֆիզիկական սահմանների և սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկությունները, Շվեդիայի օրենսդրությամբ հանրային են:

Կառավարում

Բլոկչեյնի փորձնական նախագիծը սահմանվում է որպես մասնավոր՝ թույլտվությամբ բլոկչեյն: Գործարքները վավերացնում են հայտնի հանգույցները, իսկ գործարքներ կատարելու և տվյալները տեսնելու իրավունքները տրվում են միայն հայտնի օգտատերերին: Տարբեր օգտատերերի իսկորոշման համար նախագիծն օգտագործում է կենտրոնացված նույնականացման համակարգը՝ Telia ID:

Օգտագործում

Թեև նախագիծը գոյություն ունի երկու տարի, բլոկչեյնի փորձնական ներդրումը դեռ գաղափարի իրագործելիության ապացույցի փուլում է: Կոնսորցիումն ունի աշխատող տեխնոլոգիա, սակայն տեխնիկական լուծումը դեռ ինտեգրված չէ անշարժ գույքի գործակալների միջավայրին: Բացի այդ, բլոկչեյնից տվյալների ստացումը դեռ ավտոմատ չէ: Մինչև փորձարկման փուլ անցնելը հարկավոր է հաղթահարել այս տեխնիկական խոչընդոտները: Համակարգը հիմնված է մասնավոր բլոկչեյնի կառուցվածքի վրա: Մասշտաբայնացումը խնդիր չէ, քանի որ գործարքների ծավալի աճի դեպքում հանգույցները կարող են մեծացնել կարողությունը՝ ավելացնելով սերվերներ:

Տեխնիկական ճարտարապետություն

Այս փորձնական նախագիծն օգտագործում է մասնավոր բլոկչեյն համակարգ՝ կոնսորցիումի ներսում բաշխված տվյալների շտեմարան, որը կազմում է Շվեդիայի հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանին պատկանող հանգույցների կլաստեր: Համակարգը կոչվում է Postchain: Այն ի սկզբանե օգտագործում է հարաբերակցական տվյալների շտեմարան, ինչը նշանակում է, որ կարող է անմիջապես ինտեգրվել նախկին համակարգին՝ վերացնելով ավելորդ կրկնության խնդիրները: Postchain-ն օգտագործում է PostgreSQL, և այս շտեմարանի տարողությունը բավարար է բոլոր տվյալները բլոկչեյնում պահելու համար: Օրենքներին և կարգավորումներին համապատասխանելու նպատակով նույնականացնող՝ անձնական տվյալները պահվում են շղթայից դուրս և բլոկչեյնում ներկայացվում հեշով: Հեշը հղվում է ամբողջական տեղեկությունները պարունակող փաստաթղթին: Ճարտարապետությունը ներառում է խելացի պայմանագրերի գործառույթ, որը գույքային գործարքը բաժանում է տարբեր դերակատարների կատարած գործողությունների հաջորդականության: Օգտատիրոջ նոր գործողությունը խելացի պայմանագրի նոր վիճակ է առաջացնում՝ նախապես սահմանված անցումային ֆունկցիայի համաձայն: Համակարգի յուրաքանչյուր նորացված վիճակի վերաբերյալ հաղորդագրությունն ավելացվում է բլոկչեյնին և փոխանցվում գործարքի բոլոր մասնակիցներին:

Օգտատիրական հավելվածների շերտը ներկայում պարունակում է վեբ միջերեսներ, սակայն առկա է նաև API այն օգտատերերի համար, որոնք ցանկանում են պայմանագրերի ընթացքն առաջ տանել ալգորիթմական եղանակով, օրինակ՝ բանկերի: Վարչարարական հավելված չկա, սակայն կարելի է ներդնել մշտադիտարկման հավելվածներ՝ համակարգի գործունեությունը դիտելու համար: Համակարգում տրամադրվում է API-ների երեք տեսակ՝

• միջհանգուցային API՝ հանգույցների միջև կոնսենսուսին հասնելու համար,

• հաճախորդի API, որը ստանում է հաճախորդի ստորագրած հայտարարությունները՝ Postchain-ի համար ընթեռնելի ճիշտ ձևաչափով,

• նախկին համակարգերի API՝ այն համակարգերի համար, որոնք աշխատում են ոչ թե ստորագրված հայտարարություններով, այլ մուտքանուններով: Այդ համակարգերի համար Chromaway-ը սահմանել է API սերվեր, որը նախագծի գործընկերները հարմարեցնում են՝ նախկին համակարգերը և ստորագրված հայտարարություններով աշխատող համակարգը, օրինակ՝ բլոկչեյնը, կապելու համար: Այս միջերեսներից կարող են օգտվել այն բանկերը, որոնք ցանկանում են ինքնաբերաբար իրականացնել վարկի տրամադրումը և դրա արդյունքը թարմացնել նախկին համակարգերում:

Կոնսենսուսի մեխանիզմը լիազորության ապացույցն է՝ Proof-of-Authority (PoA), գործնական բյուզանդական խափանումների նկատմամբ դիմակայունությամբ: Լիազորության ապացույցը որոշակի հանգույցներին թույլ է տալիս վավերացնել գործարքները, քանի որ համակարգում դրանք ունեն այդ լիազորությունը: Այս մեխանիզմը հարմար է միայն մասնավոր բլոկչեյնների համար, քանի որ պահանջում է, որ վավերացնողները հայտնի լինեն: Բյուզանդական խափանումների նկատմամբ դիմակայունությունը վերաբերում է համակարգին, որը թույլ է տալիս որոշակի թվով հանգույցների խափանում: Chromaway-ն օգտագործում է PFBT՝ ապահովելով կոնսենսուս նույնիսկ այն դեպքում, երբ ցանցի հանգույցների մեկ երրորդը ճիշտ չի գործում: Ներկայում բոլոր հանգույցները տեղակայված են մասնակցող դերակատարների մոտ: Հնարավոր է, որ հետագայում բանկերն ու միջնորդները ևս հանգույցներ դառնան, սակայն քաղաքացիները հանգույցներ չեն հյուրընկալի:

Թարգմանական նշում. այս պարբերությունում բնագրի հապավումը PFBT է. նույն տեխնիկական հասկացությունն այլ հատվածներում ներկայացված է PBFT ձևով:

Ծախսեր և օգուտներ

Բլոկչեյնի փորձնական նախագծի օգուտներն են՝

• գործարքային ծախսերի նվազումը: Գույքային գործարքի ժամանակը շաբաթներից կրճատվում է մինչև րոպեներ կամ ժամեր՝ կախված աշխատանքային հոսքում կողմերի գործողությունների արագությունից: Մասնավորապես, հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի ներգրավումը աշխատանքային հոսքին կտրուկ կրճատում է սեփականության իրավունքի գրանցման ժամանակը և մեծ խնայողություն ապահովում դրա ապահովագրության ծախսերում: Ներկայում անշարժ գույքի փոխանցումն ապահովագրելու ծախսը կարող է հասնել գնման արժեքի 10%-ին: Chromaway համակարգում այն կարող է նվազել մինչև 1%: Այլ դրական ազդեցությունները, օրինակ՝ թղթային գործավարության վերացումը և խարդախության ռիսկի նվազեցումը, նույնպես վերածվում են տնտեսական օգուտների,

• շուկայի գործունեության բարելավումը և ակտիվների իրացվելիության բարձրացումը: Ավելի արագ ու հուսալի աշխատանքային հոսքը վերականգնում է վստահությունը մեծարժեք գործարքների մասնակիցների միջև: Գործող կառուցվածքում մի քանի շաբաթ շարունակ նշանակալի է մնում գործարքից կողմերից մեկի դուրս գալու ռիսկը: Խելացի պայմանագրով աշխատանքային հոսքում երկու կողմերի՝ բանակցություններ սկսելու համաձայնությունից հետո նրանք ստանձնում են ավտոմատ պարտավորություն, որը բացառում է երրորդ կողմի հնարավոր միջամտությունը,

• բլոկչեյն հարթակի բաշխված բնույթի շնորհիվ արտաքին դերակատարների կողմից պահպանման համակարգի ցանկացած փոփոխության նկատմամբ դիմակայունության բարձրացումը:

Նախագծի ծախսերն են՝

• ինտեգրման ծախսերը: Բոլոր շահակիցների համար համակարգը ներդնելու նպատակով մեծ աշխատանք է պահանջվում նախկին

համակարգերին ինտեգրվելու և բանկային համակարգերի հետ փոխգործունակություն ապահովելու համար,

• շահագործման ծախսերը: Հետաքրքիր է, որ հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի տեսանկյունից այս ծախսը, ըստ սպասումների, ավելի բարձր կլինի, քան կենտրոնացված շտեմարանով լուծման դեպքում (Chromaway, 2017b): Ահը պայմանավորված է կոնսորցիումի տվյալների շտեմարանի անընդհատ կրկնօրինակմամբ՝ որպես բլոկչեյնի արձանագրության մաս, մինչդեռ կենտրոնացված համակարգում նման կրկնօրինակման կարիք չէր լինի:

Հիմնական հետևություններ

• Այս նախագիծն օգտագործում է բլոկչեյն տեխնոլոգիայի ավելի առաջադեմ գործառույթները՝ անշարժ գույքի գործարքների կատարումն ավտոմատացնելու համար: Տարբեր դերակատարներին ընդհանուր աշխատանքային հոսք տրամադրելով՝ ստացվում են արդյունավետության և տնտեսական մի շարք օգուտներ: Քաղաքացիների ֆիզիկական ներկայությունը բանկում կամ նոտարի մոտ անհրաժեշտ չէ: Համակարգային մակարդակում նոր լուծումը նվազեցնում է թղթային գործավարությունն ու խարդախության ռիսկը և էապես կրճատում գործարքային ծախսերը:

• Ավտոմատ աշխատանքային հոսքն ապահովվում է մասնավոր բլոկչեյնը որպես բաշխված շտեմարան օգտագործելով, որտեղ անանուն պահվում են տարբեր դերակատարների ներկայացրած գործարքային տվյալները: Տվյալները փոխանցվում են դերակատարների միջև և անվտանգ պահպանվում մի քանի հանգույցում: Սակայն ծառայությունը դեռ հիմնվում է կենտրոնացված համակարգերից ստացվող տվյալների վրա, օրինակ՝ գույքի մանրամասների և օգտատերերի էլեկտրոնային իսկորոշման: Մասնավորապես, էլեկտրոնային ինքնության համակարգը պետք է հաստատվի կառավարության կողմից և կապվի գույքային գործարք կնքել ցանկացող կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ:

• Խելացի պայմանագրով աշխատանքային հոսքը մասամբ վերացնում է ավանդական նոտարների միջնորդական դերը: Գործող համակարգում նոտարը ստուգում է գործարքի կողմերի ինքնությունը, փաստաթղթերի և ստորագրությունների իսկությունը: Նոտարը ստուգում է նաև, թե կողմերի հայտարարությունները համապատասխանո՞ւմ են իրական աշխարհի փաստերին և արտահայտվա՞ծ են ազատ կամքով: Նոր համակարգում այս տարրերը տրամադրվելու են ինքնաբերաբար՝ էլեկտրոնային ձևով: Սակայն կան որոշ կասկածներ, թե առանց արտաքին արբիտրի ինչպես կարելի է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտարարությունների համապատասխանությունն արտաքին իրականությանը:

• Ներկայում իրավական պահանջներին անհամապատասխանությունը համակարգի հետագա տարածման հիմնական խոչընդոտն է: Էլեկտրոնային ստորագրություններն ու օգտատերերի ստանձնած պարտավորությունները անշարժ գույքի գործարքներում դեռ իրավաբանորեն պարտադիր չեն ճանաչվում: Այս առումով նոր օրենսդրություն է անհրաժեշտ:

2.2.4. uPort ապակենտրոնացված ինքնություն. Ցուգ, Շվեյցարիա

Նկար 8. uPort-ի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Պետության հաստատած ապակենտրոնացված ինքնություն Շվեյցարիայում: 1. Ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ՝ տեղական, հանրային ծառայություն՝ բնակության հաստատում, միջսահմանային բաղադրիչ՝ չկա, միջոլորտային բաղադրիչ՝ այո, տեղադրությամբ ստեղծվող արժեք՝ տեղադրությունը ստատիկ է, ծրագրային ապահովում՝ բաց կոդով: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություններ՝ չկան, գործառույթ՝ ծագման ապացուցում՝ գրառման իսկության տեխնիկական հավաստմամբ: **3. Կառավարում.** դերեր՝ կառավարություն, բաց կոդի համայնք, տեխնոլոգիական մատակարար, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ հանրային՝ առանց թույլտվության, կոնսորցիումի կառավարում՝ խառը՝ կոնսորցիումի տարբեր գործընկերներով: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում՝ մոտ 300 մարդ, տարողություն՝ 30 հազար, թողունակություն՝ անհայտ, մասշտաբայնացում՝ 7 գործարք/վրկ, հասունություն՝ վաղ փուլի փորձնական նախագիծ: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ՝ uPort բջջային հավելված, ոչ DLT համակարգեր՝ արտաքին վեբ պորտալ, API շերտ՝ uPort Connect API, DLT հարթակ՝ բաժնեմասի ապացույցի՝ Proof-of-Stake կոնսենսուս, ենթակառուցվածք՝ Ethereum բլոկչեյն, օգտատիրոջ տվյալները պահվում են տեղային: **6. Ծախսեր.** միանվագ՝ ինտեգրման և տեղադրման ծախսեր, պարբերական՝ գործարքային և շահագործման ծախսեր: **7. Օգուտներ.** քանակական՝ վարչարարության և տվյալների պահպանման ծախսերի նվազում, որակական՝ էլեկտրոնային ինքնություն առանց կենտրոնական վարչարարի, քաղաքացիների վերահսկողություն տվյալների նկատմամբ:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Ցուգ քաղաքը Ethereum բլոկչեյնում գործարկել է պետականորեն տրամադրվող ինքնություն՝ uPort անվամբ: Նախագծի նպատակն է տրամադրել վստահելի և ինքնուրույն բլոկչեյնային ինքնություն՝

էլեկտրոնային կառավարման ծառայություններում իսկորոշվելու և անձնական տվյալները երրորդ կողմերին փոխանցելու համար: Նախագիծն ինքնին կենտրոնացած չէ բլոկչեյնային ինքնությունն օգտագործող հանրային ծառայությունների մշակման վրա: Քաղաքացու տեսանկյունից uPort ծառայությունը հնարավորություն է տալիս որոշակի ընկերություններին կամ պետական հաստատություններին ընտրողաբար բացահայտելու կոնկրետ տեղեկություններ՝ քաղաքացիներին տալով լիարժեք վերահսկողություն և փաստացի սեփականություն իրենց անձնական տվյալների նկատմամբ:


Նախագծի առաջին փուլում uPort ինքնությանն ուղեկցող միակ փորձարկվող ծառայությունը բնակության հաստատումն է: Ցուգ քաղաքի հավաստած բլոկչեյնային թվային ինքնության գրանցումը Ethereum-ում մեկնարկել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին: Փորձնական փուլը կտևի առնվազն վեց ամիս: uPort հավելվածը բլոկչեյնում ստեղծում է եզակի և անփոփոխ ծածկագրային հասցե և այն կապում սմարթֆոնում գտնվող օգտատիրոջ տեղային դրամապանակին: uPort ինքնության գրանցման գործընթացը պատկերված է Նկար 9-ում:

Գործառույթներ

uPort-ն առաջարկում է ինքնության հաստատման և անձնական տվյալների կառավարման նոր լուծում: Այն ներմուծում է անձի ինքնության սեփականության, կառավարման, ներկայացման և հավաստման ապակենտրոնացված մոդել: Առայժմ նոր թվային ինքնությամբ աշխատող միակ հանրային ծառայությունը բնակության հաստատումն է: Սակայն նախագիծը նպատակ ունի ընդգրկել տեղական իշխանությունների մատուցած այլ հանրային ծառայություններ՝ հարցումներ, էլեկտրոնային քվեարկություն, հեծանիվների վարձույթ, գրքերի փոխառություն, հարկային հայտարարագրեր կամ կայանման վճարումներ: Քաղաքացիները պետք է Յուգի քաղաքապետարանում գրանցեն uPort ինքնությունը, որը Ethereum-ում խելացի պայմանագրի հանրային հասցեն է: Քաղաքի գրանցման գրասենյակն ունի uPort հավելվածի վարչարարական իրավունքներ: Քաղաքապետարանում անձամբ կատարվող ստուգումից հետո քաղաքապետարանը տալիս է իր մասնավոր բանալիով ստորագրված հավաստում՝ որպես սերվերի կողմում թողարկված հավաստագիր: Սա նշանակում է, որ uPort ինքնությունը ճանաչվում է որպես պետականորեն տրամադրված պաշտոնական ինքնություն: Կապակցման այս գործընթացը պետք է կատարվի միայն մեկ անգամ:

Նկար 9. uPort գործընթացի ընդհանուր պատկերը

Նկար 9. uPort գործընթացի ընդհանուր պատկերը



1–2	Քաղաքացին ներբեռնում է հավելվածը. ստեղծվում է Ethereum-ի խելացի պայմանագրի հանրային հասցե՝ uPort ID:
3ա–բ	uPort ID-ն գրանցվում է քաղաքապետարանի կայքում և կապվում բլոկչեյնի հանրային հասցեին ու բնակչի գրանցմանը:
4–5	Քաղաքացին ստորագրում է գրանցման դիմումը և անձամբ այցելում քաղաքապետարան՝ ստուգման համար:
6	Ցուգի քաղաքապետարանը ստորագրում է ID-ն և հաստատումն ուղարկում հավելվածին:

JRC, 2019 · Հայերեն վերակառուցում

Դերակատարներ և բաղադրիչներ՝ քաղաքացի, uPort հավելված, բլոկչեյն, քաղաքապետարան: Քաղաքացի → uPort հավելված՝ 1. ներբեռնել uPort հավելվածը: uPort հավելված → բլոկչեյն՝ 2. ստեղծել uPort ID: Քաղաքացի → քաղաքապետարան՝ 3ա. uPort ID-ն գրանցել քաղաքապետարանի կայքում: Բլոկչեյն → քաղաքապետարան՝ 3բ. uPort ID-ն կապել հանրային բլոկչեյն հասցեին: Քաղաքացի → uPort հավելված՝ 4. ստորագրել գրանցման դիմումը: Քաղաքացի → քաղաքապետարան՝ 5. այցելել քաղաքապետարան՝ դիմումն անձամբ ստուգելու համար: Քաղաքապետարան → uPort հավելված՝ 6. Ցուգի քաղաքապետարանը ստորագրում է ID-ն:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

1. Յուգի քաղաքացին uPort հավելվածը ներբեռնում է իր բջջային հեռախոսում,

2. տեղադրման ժամանակ ինքնաբերաբար ստեղծվում է uPort ID՝ Ethereum բլոկչեյնում խելացի պայմանագրի հանրային հասցե,

3. քաղաքացին Յուգի քաղաքապետարանի կայքում գրանցում է uPort ID-ն՝ որպես ստուգելի անձնական տեղեկություն ավելացնելով Յուգի իր գործող ID համարը և ծննդյան ամսաթիվը: Դրանով uPort ID-ն ինքնաբերաբար կապվում է Յուգի թվային քաղաքացիների գրանցամատյանի անձնական ID-ին,

4. քաղաքացին հավելվածով ծածկագրային եղանակով ստորագրում է գրանցման դիմումը, որն այնուհետև ուղարկվում է քաղաքապետարան,

5. քաղաքացին անձամբ այցելում է քաղաքապետարան՝ դիմումը ստուգելու համար,

6. Յուգի քաղաքապետարանը ծածկագրային եղանակով ստորագրում է ID-ն և հաստատումն ինքնաբերաբար ուղարկում uPort հավելվածին:

Կառավարում

uPort հավելվածը կառավարող կոնսորցիումն ունի պետական և մասնավոր կողմեր համադրող խառը կառուցվածք: Այն ներառում է ConsenSys-ը, TI&M AG-ն, Լյուցեռնի տնտեսագիտական համալսարանի Յուգի ֆինանսական ծառայությունների ինստիտուտը (IFZ) և Յուգ քաղաքը: Յուգի քաղաքապետարանը պատասխանատու է Յուգի բնակչի համարը uPort հասցեին կապելու համար և հաստատում է այդ ինքնությամբ օգտագործվող ծառայությունները: Ի վերջո, վերջնական օգտատերերի համար կոնկրետ ծառայությունների զարգացումը պետք է բխի էկոհամակարգից՝ հանրային կազմակերպությունների, ձեռնարկությունների և uPort-ի ու Ethereum-ի բաց կոդի համայնքի ներգրավմամբ:

Օգտագործում

Ծառայությունը գործարկվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին: Փորձնական նախագծի սկզբնական փուլում օգտագործվում է Ethereum Rinkeby փորձարկման ցանցը՝ Testnet-ը, այլ ոչ Ethereum-ի հիմնական ցանցը: Հետագայում ծառայությունը կհեռանա Testnet-ից, քանի որ այն ունի միայն սահմանափակ թվով հանգույցներ և թույլ կառավարման կառուցվածք: Ցուգի 30 000 բնակչից առայժմ գրանցվել է մոտ 300-ը: Ինքնությունների այս քանակը կարելի է սպասարկել Testnet-ում, որը կարող է գրանցել վայրկյանում մինչև 15 գործարք: Սակայն ներկա ճարտարապետությամբ այլ համայնքների ընդգրկումը կարող է խնդրահարույց լինել:

Թարգմանական նշում. Նկար 8-ում մասշտաբայնացման համար նշված է 7 գործարք/վրկ, իսկ այս պարբերությունում Testnet-ի համար՝ մինչև 15: Տարբեր համատեքստերի բնագրային արժեքները պահպանվել են:

Տեխնիկական ճարտարապետություն

Օգտատիրոջ տեսանկյունից համակարգի հետ շփման հիմնական կետը uPort հավելվածն է: Այն բոլոր անձնական տվյալները տեղային պահպանում է օգտատիրոջ սարքում: Տեղադրման ժամանակ uPort հավելվածը ստեղծում է եզակի մասնավոր բանալի, որը պահվում է բջջային սարքում, և երկու խելացի պայմանագիր, որոնք աշխատում են Ethereum վիրտուալ մեքենայում: Վերջինս Ethereum-ի վրա հիմնված խելացի պայմանագրերի կատարման միջավայր է: Մասնավորապես, օգտատիրոջ ինքնության հանգույցի դեր են կատարում երկու տեսակի խելացի պայմանագիր՝ վերահսկիչ պայմանագիրը և ինքնության՝ պրոքսի պայմանագիրը: Ինքնության պայմանագիրը պահում է անձի մշտական նույնացուցիչները: Այն կարող է փոխազդել այլ խելացի պայմանագրերի և uPort ինքնությունների հետ: Ինքնիշխանության հատկությունը նշանակում է, որ այլ խելացի պայմանագրերի կամ uPort օգտատերերի հետ փոխազդելիս անձի ինքնության վերաբերյալ հայտարարություններ կարող է անել միայն ինքնության խելացի պայմանագիրը: Այս հայտարարությունները չեն ապահովվում և չեն հաստատվում հավաստագրման որևէ կենտրոնացված մատակարարի կողմից: Ինքնության պայմանագիրը վերահսկվում է վերահսկիչ պայմանագրով: Վերջինս շնորհում կամ հետ է կանչում հայտարարություններ ստորագրելու լիազորությունը: Այն քաղաքացուն նաև թույլ է տալիս վերականգնել ինքնության հասանելիությունը, եթե կորել է մասնավոր բանալին պարունակող հեռախոսը: Դա արվում է ինքնության պայմանագրում հանրային բանալին փոխարինելով և համապատասխան նոր մասնավոր բանալին նոր բջջային սարքում տեղադրելով:

uPort գրանցամատյանը համատեղ օգտագործվող պայմանագիր է, որը թույլ է տալիս ստուգել կոնկրետ կողմերին արված մասնավոր հայտարարությունները: Փաստորեն այն շղթայից դուրս տվյալների՝ շղթայի ներսում գտնվող հղման կետն է: Այն պարունակում է միայն օգտատիրոջ հանրային պրոֆիլը՝ նրա մշտական Ethereum հասցեով

և տեղային պահվող բոլոր մասնավոր տվյալների հեշով: Հավաստման նպատակով քաղաքացին կարող է իր ընտրած կոնկրետ կողմին բացահայտել Ethereum հանրային հասցեին կապակցված ինքնության տեղեկությունների մի մասը: Տվյալները գաղտնագրվում են այդ կողմի հանրային բանալիով և ստորագրվում ուղարկողի մասնավոր բանալիով: Ստացողն այս հավաստագրերը ստանում է իր սարքում տեղադրված uPort հավելվածով: uPort գրանցամատյանի միջոցով նա ստուգում է տվյալների ամբողջականությունն ու աղբյուրը: Այս կոնկրետ ներդրման դեպքում ստացողը կարող է նաև ստուգել՝ ուղարկողն ունի՞ արդյոք Ցուգի քաղաքապետարանի հավաստումը:

Անձնական տվյալների փոխանակումն իրականացվում է uPort հավելվածում, սակայն ցանցով ուղարկվելուց առաջ ամբողջ տեղեկությունն անանունացվում է: uPort գրանցամատյանով փոխանցվող միակ տարրերը հավաստման վերաբերյալ հայտարարություններն ու հաղորդագրություններն են: Ստեղծվելուց հետո օգտատիրոջ ինքնությանը համապատասխանող Ethereum հանրային հասցեն հնարավոր չէ ջնջել: Սակայն օգտատերը կարող է որոշել սարքից ջնջել բոլոր անձնական տվյալները՝ վերացնելով դրանք փոխանցելու հնարավորությունը:

Ինքնության խելացի պայմանագրից մուտքի գործառույթ ստեղծելու համար երրորդ կողմերի հավելվածները կարող են օգտագործել uPort Connect API-ն: Դրա ինտեգրումը թույլ է տալիս հաղորդակցվել uPort դրամապանակի հետ՝ ի վերջո uPort օգտատերերին հնարավորություն տալով մուտք գործել երրորդ կողմերի հավելվածներ: Գործարքները մշակվում են Ethereum-ի հայտարարությունների գրանցամատյանով, ուր uPort ինքնությունները կարող են հաղորդագրություններ ուղարկել՝ մշտական հանրային գրառման համար:

uPort հավելվածը կարելի է համարել ոչ DLT արտաքին տվյալների աղբյուր, որն անձնական տվյալները տեղային պահում է բջջային սարքում: Ցուգի բնակչության գրանցամատյանը ևս DLT-ի մաս չէ. այն պաշտոնական պետական տվյալների շտեմարան է, որին կարող են

կցվել uPort ինքնությունները: DLT համակարգից դուրս կա արտաքին վեբ պորտալ՝ uPort հասցեները գրանցելու և QR կոդով դրանք Ցուգի բնակիչների համարներին կապելու համար: Արտաքին անձնական տվյալներն են անունը, ծննդյան ամսաթիվը, ID համարը և քաղաքացիությունը:

Այս բլոկչեյնի կոնսենսուսի մեխանիզմը բաժնեմասի ապացույցն է՝ Proof-of-Stake, որի դեպքում մասնակիցները համակարգում դրամական միջոցներ են ներդնում: Բլոկչեյնում պահվող տվյալները միայն հեշի տեսք ունեն, մինչդեռ օգտատիրոջ անձնական տվյալները միշտ պահվում են տեղային: uPort օգտատերերի միջև ինքնության տվյալների պահպանումն ու փոխանակումը կազմակերպվում են բաշխված՝ բովանդակությամբ հասցեավորվող ֆայլային համակարգի միջոցով:

Ծախսեր և օգուտներ

Բլոկչեյնի փորձնական նախագծի օգուտներն են՝

• ավելի ցածր գործառնական ծախսերը: Ցուգի քաղաքապետարանը կարող է անձնական տվյալներ պահելուց անցնել իր բոլոր ծառայությունների համար անձի ինքնության ընդամենը մեկ ստուգման: Սա կարող է բերել գործառնական ծախսերի խնայողության:

• Կիբեռհարձակումների ռիսկի նվազում և ենթակառուցվածքի ավելի ցածր ծախսեր: Ինքնիշխան ինքնության լուծումը նվազեցնում է նույնականացնող տեղեկությունների կենտրոնացված շտեմարաններ պահպանելու անհրաժեշտությունը: Երբ ինքնությունների սեփականությունն ու հավաստումը փոխանցվում են քաղաքացիներին, անձնական տվյալներով սերվերներ և շտեմարաններ հյուրընկալելու կարիք չկա: Ավելին, բաշխված ճարտարապետության մեջ վերանում է անձնական տվյալների մեծածավալ արտահոսքի ռիսկը:

• Քաղաքացիների համար արդյունավետության աճ: Հավաստման նոր ձևը ժամանակ է խնայում ծառայություններին հասանելիություն

ստանալիս: Եթե մեծ թվով ձեռնարկություններ և հանրային վարչակազմեր իրենց ծառայություններում իսկորոշվելու և դրանցից օգտվելու համար ընդունեն ինքնության միասնական լուծում, հնարավոր կլինի արդյունավետության աճ ապահովել: Ծառայությունները կարող են ինտեգրվել, և տարբեր գաղտնաբառեր անհրաժեշտ չեն լինի:

Նախագծի ծախսերն են՝

• մշակման ծախսերը: Թեև նախագծի մշակման ու կառավարման ծախսերը չեն բացահայտվել, առաջին 8 ամսում համակարգի ինտեգրման համար ծախսվել է մոտ տասը լրիվ դրույքի համարժեք աշխատուժ,

• շահագործման ծախսերը: Ապագայում համակարգի գործարկման համար քաղաքապետարանում անհրաժեշտ կլինի միայն մեկ աշխատակից: Սակայն գործարքային ծախսերը կարող են կարևոր գործոն դառնալ: Գնահատվում է, որ Ethereum-ի հիմնական ցանց տեղափոխվելու դեպքում յուրաքանչյուր նոր օգտատիրոջ ավելացումը կարժենա 10 ԱՄՆ դոլար:[6] Ցուգի 300 000 բնակչի դեպքում, որոնցից յուրաքանչյուրի գրանցման համար անհրաժեշտ է մեկ գործարք, ծախսը կարող է կազմել 3 000 000 ԱՄՆ դոլար: Քանի որ խելացի պայմանագրերի ուղարկած հայտարարությունները նույնպես ծախսատար են Ethereum-ի հիմնական ցանցում, uPort ինքնության օգտագործումը կարող է առաջացնել նույնիսկ ավելի բարձր գործարքային ծախսեր:

Թարգմանական նշում. բնագրի այս ծախսային օրինակում նշված է 300 000 բնակիչ, մինչդեռ նույն դեպքի «Օգտագործում» և «Հիմնական հետևություններ» բաժիններում՝ 30 000: Բնագրի երկու թվերն էլ պահպանվել են՝ անհամապատասխանությունը տեսանելի թողնելով:

Հիմնական հետևություններ

• uPort ինքնությունը թույլ է տալիս իսկորոշվել առանց տարածված օգտանուն/գաղտնաբառ մեթոդի կամ մասնավոր և հանրային բանալիների ենթակառուցվածքի: uPort ինքնությունը խելացի պայմանագրի հասցե է, որը կարող է փոխազդել այլ խելացի պայմանագրերի և օգտատերերի հետ: Կան ինքնությանը հասանելիություն տվող բանալիների վերականգնման եղանակներ, ինչը այլ բլոկչեյններում առկա չէ:

• uPort ինքնության օգտատերերը կարող են անձնական տեղեկություններն ընտրողաբար բացահայտել այլ կողմերի՝ վերահսկողություն ստանալով սեփական ինքնության նկատմամբ: Նրանք կարող են ընտրել՝ որքան տվյալ, ում և երբ բացահայտել: Արդյունքում ընկերություններն ու հավելվածները կարող են օգտատերերից ստանալ անձնական տվյալների միայն նվազագույն հավաքածուն՝ ինչպես պահանջում է Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR):

• Անձնական տվյալները բջջային սարքում պահվում են անվտանգ՝ գաղտնագրված ձևով: Անձնական հավաստումները միշտ ուղարկվում են շղթայից դուրս: Դրանք կարող են ստուգվել բլոկչեյնում և ծառայել որպես օգտատիրոջ իսկորոշում ծառայություն մատուցողների կամ հանրային հաստատությունների համար՝ ապահովելով արդյունավետության և անվտանգության օգուտներ:

• Շվեյցարիայի Ցուգի քաղաքապետարանի փորձնական ծառայության գործարկումից ի վեր Ցուգի 30 000 բնակչից մոտ 300-ը գրանցել է uPort ինքնություն: Ներկայում uPort ինքնությանն ուղեկցող միակ հանրային ծառայությունը բնակության հաստատումն է: Սակայն ապագայում էկոհամակարգի դերակատարները կարող են մշակել այլ ծառայություններ՝ հարցումներ, էլեկտրոնային քվեարկություն, հեծանիվների վարձույթ, գրքերի փոխառություն, հարկային հայտարարագրեր և կայանման վճարումներ:

6. Գրելու պահին՝ 2018 թվականի ապրիլին:

2.2.5. Infrachain կառավարման շրջանակ. Լյուքսեմբուրգ

Նկար 10. Infrachain-ի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Բլոկչեյնի կառավարման շրջանակ: 1. Ընդհանուր բնութագրեր. ներգրավված կառավարման մակարդակ՝ ազգային, հանրային ծառայություններ՝ հանրային ծառայությունները, օրինակ՝ քվեարկությունը, հնարավոր դարձնող բաղադրիչ, միջսահմանային բաղադրիչ՝ այո՝ Եվրոպայի ներսում, միջոլորտային բաղադրիչ՝ այո, տեղադրությամբ ստեղծվող արժեք՝ տեղադրությունը ստատիկ է, ծրագրային ապահովում՝ բաց կոդով: **2. Գործառույթներ.** միջնորդական դերից ազատված հաստատություններ՝ չկան, գործառույթներ՝ գրառման իսկության տեխնիկական հավաստում, համատեղ շտեմարան, խելացի պայմանագրերով ավտոմատացում: **3. Կառավարում.** դերեր՝ կառավարություն, ձեռնարկություններ, տեխնոլոգիական մատակարար, բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ մասնավոր և հանրային՝ թույլտվությամբ, կոնսորցիումի կառավարում՝ ապակենտրոնացված: **4. Օգտագործում.** ընթացիկ օգտագործում՝ անհայտ, տարողությունը, թողունակությունն ու մասշտաբայնացումը՝ կախված բլոկչեյնից, հասունություն՝ վաղ փուլի փորձնական նախագիծ: **5. Տեխնիկական ճարտարապետություն.** օգտատիրական շերտ՝ կիրառելի չէ, ոչ DLT համակարգեր՝ կիրառելի չէ, API շերտ՝ կիրառելի չէ, DLT հարթակ՝ մասնավոր կոնսենսուս (PoW): **6. Ծախսեր.** միանվագ՝ չբացահայտված սարքավորումների ծախս, պարբերական՝ տարեկան 1–6 հազար եվրո անդամավճար, կառավարման ծախս և գործարքների վճարներ: **7. Օգուտներ.** քանակական՝ կիրառելի չէ, որակական՝ անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության բարձրացում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Infrachain-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը գործարկվել է 2016 թվականի նոյեմբերին Լյուքսեմբուրգում: Կազմակերպության նպատակն է աջակցել բլոկչեյնի առանձին համակարգերի շահագործմանը մասնակցող անկախ և կեղծումներից պաշտպանված հանգույցների ստեղծմանը: Infrachain-ը մշակում է


գոյություն ունեցող և ապագա թույլտվությամբ բլոկչեյնների «վրա» տեղադրվող կառավարման շերտ: Infrachain-ի կառավարման շրջանակում անձնական կյանքի պաշտպանությանը, կիբեռանվտանգությանը, իրավական պահանջների կիրառմանը և գործունեության անընդհատությանը նույնքան ուշադրություն է դարձվում, որքան կենտրոնացված համակարգերում: Շրջանակը նախատեսում է ծառայությունների և ցանցային շերտերի տարանջատում, ինչպես նաև տարբեր հանրային ու մասնավոր ծառայություններ հյուրընկալող անկախ հանգույցներից կազմված հենակետային բլոկչեյն ենթակառուցվածքի ստեղծում:

Ներկայում առանձին մասնավոր բլոկչեյն ենթակառուցվածքները համապատասխանում են անվտանգության և գաղտնիության որոշ պահանջների, սակայն չկա տարբեր ներդրումներում կիրառվող ընդհանուր կանոնների համապարփակ հավաքածու: Դա կարելի է ապահովել վիրտուալ շերտով, որը ծառայում է որպես հյուրընկալող ցանցի օպերատոր, իսկ մասնակից հանգույցներն աշխատում են ծառայության մակարդակի ընդհանուր համաձայնագրի (SLA) ներքո: Քանի որ ֆիզիկական հանգույցները պատկանում են տարբեր կազմակերպությունների, հյուրընկալող ցանցը կունենա դաշնային կառուցվածք՝ ընդհանուր կառավարման շրջանակով: Ակնկալվում է, որ հյուրընկալող օպերատորի ցանցը կառաջարկի հանրային բլոկչեյններին բնորոշ բարձր կայունություն և արտադրողականություն՝ միաժամանակ հյուրընկալելով բազմաթիվ մասնավոր բլոկչեյն համակարգեր:

Նախագիծն աջակցություն է ստանում Լյուքսեմբուրգի ազգային կառավարությունից: Նախաձեռնության դերակատարները պարտավորվել են տրամադրել և շահագործել հավաստագրված հանգույցներ, որոնք համապատասխանում են SLA-ով պարտադրվող կառավարման պայմաններին: Հավաստագրումը հիմնվելու է տեղեկատվական անվտանգության ISO27001 ստանդարտի վրա: Հյուրընկալող օպերատորի ցանցի աշխարհագրական ընդգրկումը դիտարկվում է որպես համաեվրոպական:

Նկար 11. Infrachain կառավարման շրջանակի ընդհանուր պատկերը

Նկար 11. Infrachain կառավարման շրջանակի ընդհանուր պատկերը



JRC, 2019 · Հայերեն վերակառուցում

Վերևից ներքև շերտերը՝ «Հավելվածներ», «Infrachain-ի վիրտուալ շերտ», «Բլոկչեյնի հանգույցներ»: Վիրտուալ շերտը և բլոկչեյնի հանգույցներն ընդգրկված են «Infrachain-ի կառավարման շերտում», որի բաղադրիչներն են՝ «SLA-ներ՝ հանգույցների օպերատորների հետ» և «Հանգույցների հավաստագրում»: Հավելվածների շերտը գտնվում է այդ կառավարման ընդգրկումից վերև:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և փաստաթղթային հետազոտության հիման վրա:

Գործառույթներ

Նախագիծը քաղաքացիների համար որևէ կոնկրետ գործառույթ չի տրամադրում, սակայն նախաձեռնությունը գործում է որպես բլոկչեյն հավելվածների և անկախ հավաստագրված հանգույցների եվրոպական ցանցի միջև համաղրման հարթակ: Այս իմաստով որևէ հանրային հաստատության միջնորդական դեր չի վերանում: Կարելի է պնդել, որ նախաձեռնությունը կարող է վերացնել ամպային ծառայությունների կամ թույլտվությամբ բլոկչեյնների մատակարարների միջնորդական դերը, քանի որ հավաստագրված հանգույցների օպերատորները կտրամադրեն նմանատիպ գործառույթներ: Նախաձեռնությունը թույլ է տալիս հյուրընկալել միայն մասնավոր՝ թույլտվությամբ կամ առանց թույլտվության բլոկչեյններ:

Կառավարում

Infrachain-ը ստեղծված է որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և մասնավոր հատվածի նախաձեռնություն է: Լյուքսեմբուրգի կառավարությունն ընդամենը անդամներից մեկն է: Մյուս գործարար անդամներից են KPMG-ն, KYC3-ը, Scorechain-ը, SnapSwap-ը, Bitbank-ը, Abax Consulting-ը, Allen & Overy-ն և այլք: Ընդհանուր առմամբ նախագծի կառավարման կառուցվածքն ապակենտրոնացված է, քանի որ սա համայնքային նախագիծ է, և որոշումներն ընդունվում են նախաձեռնության անդամների հետ քննարկմամբ: Ներկայում ամենաշատն օգտագործվում է Ethereum արձանագրությունը, սակայն նպատակն է չկապվել որևէ բլոկչեյնի հետ: Վերջերս Infrachain-ը միացել է Hyperledger կոնսորցիումին:

Օգտագործում

Նախագիծն այժմ սկզբնական փորձնական փուլում է, սակայն որոշ կիրառություններ արդեն փորձարկվել են Infrachain-ի հիմնադիր անդամների հավաստագրված հանգույցներում:[7] Այնուամենայնիվ, բազմաթիվ հատկանիշներ դեռ մշակվում են, օրինակ՝ GDPR-ի նկատմամբ մոտեցումը, SLA շրջանակը և ճարտարապետության տարրերը:

Infrachain-ն օգտագործող ակտիվ նախագծերի ընթացիկ թիվը հայտնի չէ, թեև մի քանի նախագիծ բացահայտվել է: Օրինակներից է LuxTrust ստարտափը, որի երկու երրորդը պատկանում է Լյուքսեմբուրգի կառավարությանը: LuxTrust-ը համադրում է իսկորոշման, ստորագրման և փաստաթղթերի կառավարման ծառայությունները՝ մեկ այլ ստարտափի՝ Cambridge Blockchain-ի մշակած մասնավոր բլոկչեյնի վրա: Նախագիծն օգտագործում է Infrachain շրջանակը որպես բլոկչեյնի կառավարման մաս և ռեսուրսների համադրման համար:

Տեխնիկական ճարտարապետություն

Infrachain-ը գործող հանգույցների հավաստագրումն ու SLA-ներն օգտագործում է կառավարման շերտ ստեղծելու համար, որն ավելացնում է հանգույցների նկատմամբ վստահությունն ու հաշվետվողականությունը, ապահովում բլոկչեյն նախագծերի կայուն գործառնական միջավայրը և կարգավորող պահանջներին համապատասխանությունը: Կառավարման շերտը կախված չէ որոշակի բլոկչեյնից, այսինքն՝ չի կենտրոնանում որևէ կոնկրետ արձանագրության վրա: Հավաստագրված հանգույցների օպերատորները SLA-ներ են տրամադրում Infrachain-ին, իսկ Infrachain-ը՝ հավելվածների մատակարարներին:

7. Մշակված կիրառություններից մեկը «ճանաչիր քո հաճախորդին» մոտեցումն է: KYC-ն առնչվում է գործարքի կողմի ինքնության ստուգմանը՝ խարդախությունը կանխելու նպատակով:

Այս նախագծի շարժառիթներից մեկն այն է, որ մասնավոր տվյալները կարող են պահվել շղթայի ներսում: SLA-ն սահմանում է կառավարման պատշաճ կառուցվածքը՝ ապահովելու, որ հավաստագրված հանգույցները համապատասխանեն անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության պահանջներին: Ներկայում այս կիրառության փորձարկման միջավայրն աշխատում է հինգ հանգույցով, որոնցից մեկը շահագործում է Լյուքսեմբուրգի կառավարությունը. միջավայրը հիմնված է Ethereum արձանագրության վրա:

Ծախսեր և օգուտներ

Բլոկչեյնի փորձնական նախագծի օգուտներն են՝

• հուսալիության և դիմակայունության բարձրացումը: Infrachain կազմակերպությունը նախագծերին թույլ է տալիս ստանալ բլոկչեյնների հուսալիության ընդհանուր օգուտները՝ խափանման մեկ կետից կախվածության մեղմում, տվյալների բաշխված պահպանում և կեղծումներից պաշտպանվածություն՝ միաժամանակ համապատասխանելով տվյալների անվտանգության, անձնական կյանքի և հանրային ծառայությունների կարգավորումներին,

• ավելի թեթև՝ պակաս ծախսատար կոնսենսուսի մեխանիզմները: Infrachain համադրման հարթակը նախագծերին թույլ է տալիս հասնել խափանումների և բյուզանդական հարձակումների նկատմամբ դիմակայունության այնպիսի բարձր աստիճանի, որը սովորաբար ապահովվում է միայն հանրային՝ առանց թույլտվության բլոկչեյններով՝ հաշվարկատար կոնսենսուսի մեխանիզմներով: Հավաստագրված հանգույցները բնապահպանական առումով բարենպաստ են, քանի որ չեն գործարկում աշխատանքի ապացույցի՝ Proof-of-Work-ի պես ծանր կոնսենսուսի մեխանիզմներ,

• թափանցիկությունն ու ճկունությունը: Infrachain-ի կառավարման շերտը թույլ է տալիս ապահովել հանրային բլոկչեյններին բնորոշ նույն թափանցիկությունը՝ միաժամանակ պահպանելով մասնավոր շղթաների ճկունությունն ու ամուր իրավական շրջանակը: Թեև

հանգույցները մասնավոր են, գրառումների վարումը շարունակում է բաշխված մնալ՝ մեկ դերակատարի համար գրեթե անհնար դարձնելով գրանցամատյանի կեղծումը: Բացի այդ, Infrachain-ի SLA-ները ապահովում են տարբեր հանգույցների որոշակի անկախություն:

Նախագծի այս փուլում ուղղակի արդյունավետության աճ կամ տնտեսական խնայողություններ հնարավոր չի եղել բացահայտել:

Բլոկչեյնի փորձնական նախագծի ծախսերն են՝

• անդամակցության ծախսերը: Infrachain-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ ստեղծված որպես պետական և մասնավոր գործընկերություն, որի ֆինանսավորումը տրամադրում են անդամները՝ ներառյալ Լյուքսեմբուրգի կառավարությունը: Գումարները չեն բացահայտվել: Infrachain կազմակերպության անդամավճարները տարեկան 1–6 հազար եվրոյի միջակայքում են,

• կառավարման և սարքավորումների ծախսերը: Նախագծի կառավարումը հիմնական ծախսային գործոնն է: Infrachain-ը մտադիր է դառնալ Եվրոպայի գլխավոր բլոկչեյն դաշնությունը: Դրա համար անհրաժեշտ է կապ հաստատել շահակիցների հետ և համաձայնություն ձևավորել կառավարման շրջանակի ու նախաձեռնության կառավարման շուրջ: Կառավարման ծախսերի ճշգրիտ գումարը չի բացահայտվել: Նույնպես հայտնի չէ հավաստագրված հանգույց ստեղծելու սարքավորումների ծախսը:

Հիմնական հետևություններ

• Infrachain նախագիծը նպատակ ունի ստեղծելու կառավարման շրջանակ և անկախ՝ դաշնային կառուցվածքով միավորված հանգույցներից կազմված հյուրընկալող ցանցի օպերատոր: Հանգույցները կհամապատասխանեն տվյալների պահպանման, անվտանգության և անձնական կյանքի պաշտպանության կարգավորումներին և կաշխատեն SLA-ների հիման վրա:

• Infrachain շրջանակը գոյություն ունեցող մասնավոր բլոկչեյն ենթակառուցվածքների «վրա» տեղադրվող վիրտուալ շերտ է: Այն վերացնում է տվյալների կեղծումից պաշտպանվածությունն ապահովելու համար հաշվարկատար մայնինգի գործողությունների անհրաժեշտությունը, քանի որ ընդունվում են միայն հավաստագրված հանգույցներ:

• Հանրային ծառայությունները կարող են օգտվել այս տեսակի նախագծից՝ ավելի արագ գործարկվելով: Սեփական բարդ լուծումները ստեղծելու փոխարեն դրանք կարող են որդեգրել կառավարման շրջանակը և օգտագործել հավաստագրված հանգույցների ընդհանուր պաշարը:

2.2.6 Կենսաթոշակային ենթակառուցվածք. Նիդերլանդներ

Նկար 12. Կենսաթոշակային ենթակառուցվածքի դեպքի ուսումնասիրության ամփոփում

Նիդերլանդների կենսաթոշակային վարչարարության ենթակառուցվածք

1. Ընդհանուր բնութագրեր: Պետական կառավարման ներգրավված մակարդակ՝ ազգային: Մատուցվող կամ հնարավոր դարձող հանրային ծառայություններ՝ բարելավված կենսաթոշակային վարչարարություն: Անդրսահմանային բաղադրիչներ՝ չկան: Միջոլորտային բաղադրիչներ՝ կան: Տեղադրության միջոցով արժեքի ստեղծում՝ տեղադրությունը ստատիկ է: Ծրագրային ապահովման բացություն՝ բաց կոդ և փակ անհատականացված կոդ:

2. Գործառույթներ: Որպես միջնորդ վերացվող հաստատություններ՝ չկան: Ապահովվող գործառույթներ՝ գրառման իսկության տեխնիկական հավաստում, համատեղ տվյալների շտեմարան, խելացի պայմանագրերով ավտոմատացում:

3. Կառավարում: Ներգրավված դերեր՝ պետություն, բիզնեսներ, տեխնոլոգիական մատակարար, բաց կոդի համայնք: Բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ մասնավոր թույլտվությամբ: Կոնսորցիումի կառավարում՝ խառը, կոնսորցիումի տարբեր գործընկերներ:

4. Օգտագործում: Ընթացիկ օգտագործում՝ 5000 օգտատեր: Հզորություն՝ անհայտ: Թողունակություն՝ անհայտ: Մասշտաբայնացման հնարավորություն՝ սահմանափակ: Հասունություն՝ գաղափարի իրագործելիության ապացույց:

5. Տեխնիկական ճարտարապետություն: Օգտատիրոջ շերտ՝ օգտատերերի խմբին հատուկ հավելված: DLT-ից դուրս համակարգեր՝ աշխատավարձերի և կենսաթոշակների առկա շտեմարաններ: API շերտ՝ ներկայում անհայտ: DLT հարթակի շերտ՝ մասնակցության ապացույց (Proof-of-Stake): Ենթակառուցվածքի շերտ՝ բլոկչեյնում պահվում է միայն հեշը, գործարքների մանրամասների պահպանման եղանակն անհայտ է:

6. Ծախսեր: Միանվագ ծախսեր՝ չեն բացահայտվել: Պարբերական ծախսեր՝ չեն բացահայտվել:

7. Օգուտներ: Քանակական օգուտներ՝ գնահատված €500 մլն, վարչարարության ավելի ցածր ծախսեր, գործարքային ավելի ցածր ծախսեր: Որակական օգուտներ՝ ավելի մեծ թափանցիկություն, տվյալների անվտանգություն, կարգավորող վերահսկողության բարելավում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և գրասենյակային հետազոտության հիման վրա:

> Թարգմանական նշում. բնագրի այս նկարում նշված է Proof-of-Stake, մինչդեռ ստորև՝ տեխնիկական ճարտարապետության նկարագրությունում և Աղյուսակ 7-ում, նշվում է ընթացիկ Proof-of-Work: Բնագրի այդ անհամապատասխանությունը պահպանված է:


Կենսաթոշակային ենթակառուցվածքը (Pension Infrastructure, PI) համայնքի համատեղ մասնակցությամբ գործող կենսաթոշակային վարչարարության ամբողջական բլոկչեյնային ներքին համակարգ է: Նախագծի նպատակն է քաղաքացիների համար ստեղծել ավելի ճկուն և թափանցիկ կենսաթոշակային վարչարարության համակարգ՝ միաժամանակ էապես նվազեցնելով կենսաթոշակների կառավարման ծախսերը: Նախագծի մեկնակետն այն պատկերացումն էր, որ բլոկչեյնային վճարումների և կենսաթոշակային վարչարարության միջև մեծ նմանություններ կան: Երկու համակարգերում էլ մասնակիցներն ունեն անձնական հաշվեկշիռ, և այդ հաշվեկշիռների միջև գործարքներ են կատարվում:

Փորձնական աշխատանքը մեկնարկել է՝ արձագանքելով աշխատանքային հարաբերությունների ավելի ու ավելի անհատականացման բացահայտված միտմանը: Ժամանակակից աշխատողները կյանքի ընթացքում ունենում են մի քանի գործատու և աշխատանքի տարբեր տեսակներ: Դա ազդում է կենսաթոշակային վարչարարության վրա, քանի որ ապագա կենսաթոշակառուները հաճախ միանում են տարբեր կենսաթոշակային ֆոնդերի առաջարկած մի քանի անհատական կենսաթոշակային սխեմաների: Բացի այդ, մարդիկ իրենց աշխատանքային ուղու ընթացքում ավելի հաճախ են նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվում: Դա ինքնազբաղված աշխատողների համար ավելի անհատականացված կենսաթոշակային լուծումների կարիք է ստեղծում: Նախատիպի կառուցումը սկսվել է 2018 թվականին՝ Նիդերլանդների երկու խոշորագույն կենսաթոշակային կազմակերպությունների համագործակցությամբ: Նախագիծն ունի բազմազան շահակիցներ՝ գործատուներ, ինքնության ազգային ծառայություն, հարկային մարմին, աշխատավարձերի հաշվարկման ծառայություն մատուցողներ, կենսաթոշակային ֆոնդեր, տեխնոլոգիական մատակարարներ և քաղաքացիներ:

Նիդերլանդների APG կենսաթոշակային կազմակերպությունն ուսումնասիրում է բլոկչեյնի կիրառման մի քանի տարբերակ, սակայն PI նախագիծն ամենաառաջադեմն է կիրառության կառուցվածքի

մշակվածության և լուծման առաջընթացի առումով: Նիդերլանդների ազգային կառավարությունը նախագծում ներգրավված է Ֆինանսական շուկաների նիդերլանդական մարմնի (AFM) և Հարկային ազգային ծառայության (Belastingdienst) միջոցով: Ստորև բերված նկարում ներկայացված է PI նախագծի ընդհանուր կառուցվածքը:

Նկար 13. Կենսաթոշակային ենթակառուցվածքի նախագծի ընդհանուր կառուցվածքը



Կենտրոնական համակարգ: Կենսաթոշակային կազմակերպություններ՝ APG + PGGM: Դրանց կառավարման շերտից դեպի խելացի պայմանագրերի միջուկ ուղղված գործողություն՝ «գրել խելացի պայմանագրեր»: Կառավարման շերտից բլոկչեյնին՝ «լիակատար վերահսկողություն»: Խելացի պայմանագրերի միջուկից բլոկչեյնին՝ «ավտոմատացնում է բլոկների ավելացումը»: Ներքին հաջորդ շերտը՝ API շերտ, «տրամադրել մասնակի տեղեկություններ՝ պատկերացում կազմելու համար»:

Արտաքին շտեմարաններ: Աշխատողների և աշխատավարձերի համակարգեր, կենսաթոշակային ֆոնդեր, հարկային մարմնի ներքին համակարգ: Բլոկչեյնի և արտաքին շտեմարանների միջև կապերը նշված են «ստանալ» և «հղում»:

Տվյալներ մուտքագրող արտաքին մասնակիցներ: Ինքնության կառավարման մարմին՝ RIVG. դեպի բլոկչեյն՝ «ավելացնել BRP»: Գործատուներ. դեպի բլոկչեյն՝ «թարմացնել աշխատավարձի փոփոխությունը»:

API շերտից տեղեկություններ ստացող արտաքին մասնակիցներ: Հարկային մարմին՝ «բազմաթիվ ֆոնդերում կուտակված բոլոր կենսաթոշակների ամբողջական պատկերը»: Քաղաքացիներ՝ «կենսաթոշակային սխեմայի վերաբերյալ իրական ժամանակի տեղեկություններ»: Կարգավորողներ՝ «մշտադիտարկում/աուդիտ»:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և գրասենյակային հետազոտության հիման վրա:

Գործառույթներ

Համակարգը տարբեր գործառույթներ է առաջարկում՝ կախված մասնակցի դերից: Օրինակ՝ հարկային մարմնին այն տրամադրում է որոշակի անհատի՝ բազմաթիվ կենսաթոշակային ֆոնդերում կուտակված վճարումների ամբողջական պատկերը: Քաղաքացուն այն իրական ժամանակում տեղեկություններ է տալիս իր կենսաթոշակային սխեմայի զարգացման և կենսաթոշակային հաշվեկշռի մասին: Գործատուները կարող են ուղղակիորեն մուտքագրել աշխատավարձի փոփոխությունը: Կարգավորողներն ակտիվ դեր չունեն, սակայն կարող են տեսնել տվյալների մի մասը:

Նախագիծը պահանջում է բլոկչեյնի մի քանի գործառույթների համակցություն՝ բաշխված գրանցում, անդամակցության կառավարում, տեղեկությունների փոխանակում, ավտոմատ կատարում և թվային մատնահետքեր՝ հեշավորում: Ներկայում որևէ հաստատություն չունի պատրաստի տեխնիկական ենթակառուցվածք, որն ապահովում է այդ բոլոր գործառույթները: Համակարգն աստիճանաբար զարգացվում է ներքին ուժերով՝ կապեր ստեղծելով բոլոր ներգրավված կողմերի ներքին համակարգերի միջև:

Կառավարում

PI-ն APG-ի և PGGM-ի՝ Նիդերլանդների երկու խոշորագույն կենսաթոշակային կազմակերպությունների համատեղ նախագիծն է: Ենթակառուցվածքը համատեղ մշակվում է Accenture-ի հետ: Նախագծի շահակիցներն են՝

• պետական մասնակիցներ՝ հարկային մարմին, AFM և ինքնության կառավարման մարմին (RIVG),

• բաց կոդով ծրագրային ապահովման (OSS) համայնք՝ Ethereum-ի մշակողներ,

• տեխնոլոգիական մատակարար՝ Accenture,

• քաղաքացիներ՝ կենսաթոշակային ֆոնդի անդամներ և կենսաթոշակառուներ,

• բիզնեսներ՝ գործատուներ և վճարային լուծումներ մատակարարողներ:

Փորձնական նախագիծն օգտագործում է մասնավոր բլոկչեյնի ճարտարապետություն՝ Ethereum արձանագրության փոփոխված տարբերակով: Ցանցի հանգույցների ինքնությունը հայտնի է, և դրանք ներկայացնում են ենթակառուցվածքի մշակմանը մասնակցող շահակիցներին: Այսպիսով՝ կիրառվում է մասնավոր թույլտվությամբ բլոկչեյնի տիպը: Կոնսորցիումն ունի խառը դաշնային կառավարման կառուցվածք: Ապակենտրոնացված կառավարումը նպաստում է բաշխված շտեմարանի համատեղ ստեղծմանը և էկոհամակարգի տարբեր շահակիցների մեկուսացված համակարգերի ինտեգրմանը: Առկա է նաև կենտրոնացված կառավարման տարր, քանի որ APG-ն ու PGGM-ն նախագիծն ուղղորդում են որոշակի տեխնիկական ուղղությամբ:

Օգտագործում

Ներկայում նախագիծը գաղափարի իրագործելիության ապացուցման փուլում է: Ենթակառուցվածքի բոլոր հիմնական տարրերը, բիզնես մոդելը և նախագծում ներգրավված կարգավորողի պահանջներին համապատասխանությունն արդեն մշակված են: Նախագիծը դեռ չի կարելի փորձնական ներդրում համարել, քանի որ որոշ գործառույթներ ավարտված չեն: Օրինակ՝ կենսաթոշակային հաշվեկշռի հաշվարկը հնարավոր է միայն երկրի ներսում աշխատած անձանց համար, բայց ոչ նրանց, ովքեր մի քանի անգամ բնակվել են արտասահմանում: Լիարժեք գործող համակարգ ակնկալվում է 2–3 տարի անց: Ընթացիկ փորձարկման դեպքը հիմնված է APG-ի սեփական աշխատողների կենսաթոշակային տվյալների վրա (PPF APG), և ներկայում մասնակցում է մոտ 5000 օգտատեր:

Նախագիծն օգտագործում է Ethereum արձանագրության թույլտվությամբ տարբերակ: Անհայտ են թե՛ գործարքների ընթացիկ թիվը, թե՛ մշակման ենթակա գործարքների առավելագույն թիվը: Այս նախագծում մասշտաբայնացումը կարող է դժվարություն լինել՝

օգտագործվող մեծ թվով խելացի պայմանագրերի պատճառով, որոնք բազմաթիվ հաղորդագրություններ են ուղարկում: Ավելացվում են նոր օգտատերեր՝ պարզելու, թե որ պահից փորձարկվող ենթակառուցվածքում հզորության խնդիրներ են սկսում դրսևորվել:

Տեխնիկական ճարտարապետություն

DLT շերտի հիմքում խելացի պայմանագրերն են: Դրանք օգտագործվում են քաղաքացու կենսաթոշակային հաշվեկշռի կուտակման կանոնները սահմանելու համար: Դրանք նաև սահմանելու են, թե ով կարող է դիտել, փոփոխել և օգտագործել տվյալները: Օգտագործվող կատարման միջավայրը Ethereum վիրտուալ մեքենան է՝ աշխատանքի ապացույցի (Proof-of-Work) կոնսենսուսի մեխանիզմով: Այն Ethereum բլոկչեյնային ցանցում կատարում է ծրագրային սցենարներ և ավտոմատացնում օգտատերերի ու խելացի պայմանագրերի միջև գործարքները: Կենսաթոշակային ենթակառուցվածքի գրանցամատյանը պարունակում է կենսաթոշակի կուտակման ամբողջ կյանքի ցիկլում կատարվող գործարքների ընդհանուր պատկերը: Դա ներառում է, օրինակ, գործատուի և կենսաթոշակային ֆոնդի միջև միջոցների փոխանցումը, ինչպես նաև աշխատավարձի փոփոխությունը:

Հավանական է, որ կենսաթոշակային ֆոնդերը կունենան վարչարարական հավելվածներ՝ համակարգի նկատմամբ որոշակի վերահսկողություն պահպանելու համար: Համակարգում վարչարարական իրավունքների որոշակի աստիճանը կարևոր է համարվում, քանի որ ենթակառուցվածքի խելացի պայմանագրերը պետք է հարմարվեն իրական աշխարհի և կարգավորման միջավայրի փոփոխություններին: Համակարգը հիմնվում է արտաքին տվյալների հոսքերի վրա, որոնք ստացվում են կենսաթոշակային ֆոնդերի տարբեր շտեմարաններից, գործատուների համակարգերից և հարկային մարմնի ներքին համակարգերից: Հավանական է, որ այդ տվյալները պահվեն DLT շերտից դուրս, իսկ բլոկչեյնում լինի դրանց հղվող հեշը: Գրելու պահին տվյալների մշակման մանրամասները հրապարակային չեն: Ամեն դեպքում, գործընկերները պետք է որոշ

չափով կիսեն շտեմարանները, իսկ բլոկչեյնը նպաստում է վստահելի համատեղ օգտագործման միջավայրի ստեղծմանը:

Տարբեր շահակիցների օգտատիրական հավելվածները դեռ պետք է ստեղծվեն: Յուրաքանչյուր շահակից ենթակառուցվածքից տարբեր արդյունքներ է ստանում: Օրինակ՝ քաղաքացիները կունենան հավելված, որն իրական ժամանակում տեղեկություններ է տալիս իրենց կենսաթոշակային սխեմայի մասին: Գործատուների հավելվածը կապահովի նրանց աշխատավարձային համակարգերի ինտեգրումը կենսաթոշակային ֆոնդերին: Կենսաթոշակային ենթակառուցվածքի բոլոր հավելվածներում նույնականացման իսկության ստուգումը կհիմնվի Նիդերլանդների ինքնության կենտրոնացված գրանցամատյանի (BRP) ինքնությունների վրա: Քաղաքացիների ազգային գրանցամատյանի ինտեգրումը համակարգին պահանջում է օգտատերերի նույնացուցիչների զգույշ մշակում: Թեև գաղտնիությունն ապահովելու համար օգտատերերի նույնացուցիչները բլոկչեյնում պետք է ապանույնականացվեն, օրինակ՝ հարկային մարմնին իր դերին վերապահված գործառույթներն օգտագործելու համար անհրաժեշտ են չապանույնականացված նույնացուցիչներ: Օրինակ՝ հարկային ծառայությունները կարող են աշխատավարձերի և կենսաթոշակային սխեմաների տվյալներն ինտեգրել իրենց սեփական ենթակառուցվածքին՝ քաղաքացիների հարկային հայտարարագրերն ավտոմատ կազմելու համար:

Ծախսեր և օգուտներ

Բլոկչեյնի փորձնական նախագծի օգուտները ներառում են հետևյալը:

Կենսաթոշակային վարչարարության ծախսերի խնայողություն: Կենսաթոշակային վարչարարությունը պահանջում է բազմաթիվ աշխատատար գործեր՝ վարչական ստուգումներ, փաստաթղթերի պատճենահանում և այլն: Ներկայում համակարգը հիմնված է կենսաթոշակային ֆոնդերի, պետական և մասնավոր հատվածի համակարգերի միջև օրենքով պահանջվող մեծ թվով երկկողմ

կապերի վրա: Դա ենթադրում է շտեմարանների միջև տվյալների շարունակական պատճենահանում:

Նիդերլանդներում կենսաթոշակային վարչարարության ընդհանուր ծախսերը գնահատվում են €1 մլրդ: Նախագիծը նախաձեռնած կենսաթոշակային ֆոնդերն ակնկալում են, որ բլոկչեյնի վրա հիմնված կենսաթոշակային ենթակառուցվածքը կարող է ապահովել €500 մլն ծախսային խնայողություն:

Բաշխված շտեմարանի ստեղծմամբ պայմանավորված արդյունավետություն: Բոլոր մասնակիցների համար միասնական հավաստի տվյալների աղբյուր ծառայող բաշխված շտեմարանն արդյունավետություն է ստեղծում կենսաթոշակային վարչարարությունում: Ընթացիկ իրավիճակը բնութագրվում է բազմաթիվ տարբեր համակարգերով, որոնք միացված են արհեստականորեն ստեղծված և աստիճանաբար ձևավորված մեծ թվով կապերով: Արդյունավետությունը ստեղծվում է՝ բոլոր կողմերին հնարավորություն տալով օգտագործել նույն ենթակառուցվածքը և իրական ժամանակում օգտվել նույն տվյալներից. տեղեկությունը մուտքագրվում է միայն մեկ անգամ և այլևս պատճենահանման կամ բազմացման կարիք չունի:

Քաղաքացիների գործարքային ծախսերի նվազում: Նախագծի նպատակներից մեկը կենսաթոշակային ֆոնդերի անդամների տնտեսական ծախսերի նվազեցումն է: Քաղաքացու տեսանկյունից գործարքային ծախսերը նվազում են, քանի որ տեղեկությունը, թեև բաշխված է, հասանելի է մեկ միասնական միջերեսով: Ներկայում քաղաքացիների՝ կենսաթոշակային ֆոնդին մասնակցության միջին ծախսը գնահատվում է տարեկան €80: Նպատակն է այդ ծախսը նվազեցնել մինչև €15:[8]

Տեղեկությունների անվտանգության և թափանցիկության բարձրացում: Բաշխված համակարգերն ավելի անվտանգ են համարվում, քան կենտրոնացված շտեմարանները: Հանգույցի հարձակման կամ խափանման դեպքում քաղաքացու հաստատված կենսաթոշակային հաշվեկշիռը պահվում է մյուս հանգույցներում:

Բացի այդ, տեղեկությունը գրանցվում է ընդհանուր ենթակառուցվածքում և չի կարող մեկ մասնակցի կողմից փոփոխվել կամ ջնջվել: Տեղեկությունների ավելի մեծ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը կարգավորողին թույլ են տալիս ամբողջ համակարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնել առանց տեղեկությունների անհամաչափության և անմիջապես հայտնաբերել վտանգները կամ խախտումները:

Մշակման և ներդրման ծախսերը չեն բացահայտվել: Դրանց ընդհանուր մակարդակը դեռ հայտնի չէ, քանի որ այդ ծախսերը կախված են բազմաթիվ անհայտ գործոններից:

Հիմնական հետևություններ

• Նախագիծը կենտրոնանում է կենսաթոշակային համակարգի վարչարարության բոլոր կողմերի վրա՝ սկսած քաղաքացիներին իրենց բոլոր կենսաթոշակային սխեմաների պատմական և ընթացիկ հաշվեկշիռների հասանելիություն տալուց մինչև գործատուների աշխատավարձային տվյալների հիման վրա հարկային հայտարարագրերի ավտոմատ կազմումը: Թեև նախագծում ներկայացված են մասնակիցների բոլոր տեսակները, բաշխված կենսաթոշակային ենթակառուցվածքի բարդության պատճառով այս ներդրումը դեռ գտնվում է կյանքի ցիկլի շատ վաղ փուլում:

• Նախագծի նպատակն է ստեղծել նոր համատեղ շտեմարան, որը կենսաթոշակային համակարգում ներգրավված բոլոր մասնակիցներին կտրամադրի իրենց կարիքներին համապատասխանեցված և արդիական տվյալներ: Ակնկալվում է, որ բլոկչեյնի վրա հիմնված նոր ներդրումը կապահովի բազմամիլիոնանոց խնայողություններ՝ բարձրացնելով կենսաթոշակային վարչարարության արդյունավետությունը, ուժեղացնելով համակարգի կարգավորող վերահսկողությունը և նվազեցնելով քաղաքացիների գործարքային ծախսերը:

8. Թվերը տրամադրվել են նախագծի թիմի հետ հարցազրույցի ժամանակ: ↩

2.2.7 Stadjerspas խելացի վաուչերներ. Գրոնինգեն, Նիդերլանդներ

Նկար 14. Stadjerspas դեպքի ուսումնասիրության ամփոփում

Խելացի վաուչերների համակարգ Նիդերլանդներում

1. Ընդհանուր բնութագրեր: Պետական կառավարման ներգրավված մակարդակ՝ տեղական: Մատուցվող կամ հնարավոր դարձող հանրային ծառայություններ՝ նպաստների տրամադրում ցածր եկամուտ ունեցող բնակիչներին: Անդրսահմանային բաղադրիչներ՝ չկան: Միջոլորտային բաղադրիչներ՝ կան: Տեղադրության միջոցով արժեքի ստեղծում՝ տեղադրությունը ստատիկ է: Ծրագրային ապահովման բացություն՝ սեփականատիրական:

2. Գործառույթներ: Որպես միջնորդ վերացվող հաստատություններ՝ չկան: Ապահովվող գործառույթներ՝ գրառման իսկության տեխնիկական հավաստում, համատեղ շտեմարան, խելացի պայմանագրերով ավտոմատացում:

3. Կառավարում: Ներգրավված դերեր՝ պետություն, ծառայություններ մատուցողներ, տեխնոլոգիական մատակարար: Բլոկչեյնի կառավարման ճարտարապետություն՝ հանրային թույլտվությամբ: Կոնսորցիումի կառավարում՝ կենտրոնացված:

4. Օգտագործում: Ընթացիկ օգտագործում՝ 20 հազար օգտատեր: Հզորություն՝ անհայտ: Թողունակություն՝ վայրկյանում 7 գործարք: Մասշտաբայնացման հնարավորություն՝ վայրկյանում 7 գործարք: Հասունություն՝ գործառնական շահագործում:

5. Տեխնիկական ճարտարապետություն: Օգտատիրոջ շերտ՝ QR կոդ, զննարկիչ (բջջային հավելված): DLT-ից դուրս համակարգեր՝ համայնքային գրանցամատյաններ: API շերտ՝ վարչարարական API: DLT հարթակի շերտ՝ լիազորության ապացույցի (Proof-of-Authority) կոնսենսուս: Ենթակառուցվածքի շերտ՝ Zcash արձանագրություն:

6. Ծախսեր: Միանվագ ծախսեր՝ չեն բացահայտվել: Պարբերական ծախսեր՝ չեն բացահայտվել:

7. Օգուտներ: Քանակական օգուտներ՝ վարչարարության և գործարքների ավելի ցածր ծախսեր: Որակական օգուտներ՝ հանրային հաշվետվողականության ու աուդիտի հնարավորության բարելավում, արդյունավետ վերաբաշխում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և գրասենյակային հետազոտության հիման վրա:

Stadjerspas-ը լիարժեք գործող ծառայություն է, որը բլոկչեյնային ենթակառուցվածքն օգտագործում է Գրոնինգենի համայնքի ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին զեղչված ծառայություններ տրամադրելու համար: Քաղաքում վաուչերների համակարգի միջոցով ներառականության խթանումը սկսվել է 1994 թվականին: Մինչև 2013 թվականը վաուչերներն ամբողջովին թղթային էին: 2016 թվականին Գրոնինգենի վաուչերների համակարգը տեղափոխվել է DutchChain տեխնոլոգիական ընկերության մշակած բլոկչեյն: Բլոկչեյնի վրա հիմնված համակարգի հիմնական հավելյալ արժեքը ծրագրավորվող դրամական հոսքերի շնորհիվ հանրային միջոցների առավել հասցեական օգտագործումն է: Ծախսման մանրամասն պայմաններն ու իրավասության չափանիշները ծրագրավորվում են խելացի պայմանագրում: Հնարավոր չափանիշներն են շահառուների և լիազորված ծառայություն մատուցողների մանրամասն բնութագրերը, ֆինանսական շեմերը կամ օգտագործման սահմանաչափերը: Խելացի վաուչերները կարող են օգտագործվել, օրինակ, մարզական ակումբներում, կինոթատրոններում կամ բնակարանատերերի արևային վահանակները սուբսիդավորելու համար: Համայնքի

տեսանկյունից Stadjerspas-ն ապահովում է, որ որոշակի նպատակի համար հատկացված հանրային միջոցները ծախսվեն բացառապես այդ նպատակով և ուղղվեն շահառուների նախատեսված խմբին:

Համակարգն աշխատում է հետևյալ կերպ:

1. Քաղաքացին համայնքապետարանին դիմում է Stadjerspas ստանալու համար՝ տրամադրելով իր անունը, հասցեն և քաղաքացու համարը:

2. Համայնքապետարանը ստուգում է՝ արդյոք գրանցված քաղաքացին որևէ խելացի վաուչերից օգտվելու իրավունք ունի: Եթե այո, համայնքապետարանը բլոկչեյնում ստեղծում է օգտատիրոջ ապանույնականացված ինքնությունը՝ այն կապելով շղթայից դուրս պահվող անձնական տվյալների հետ:


3. Համայնքապետարանը քաղաքացուն տրամադրում է Stadjerspas՝ անձնական QR կոդով, որը հղվում է բլոկչեյնի վրա հիմնված խելացի վաուչերների համակարգում նրա նույնացուցչին: Համայնքապետարանն իր սեփական համակարգում նաև ձեռքով քաղաքացուն հատկացնում է խելացի վաուչերներ:

4. Քաղաքացին օգտվում է լիազորված մատակարարի ծառայությունից: Յուրաքանչյուր մատակարար ունի հավելված, որը սկանավորում է անցաքարտի QR կոդը՝ խելացի վաուչերն ակտիվացնելու և զեղչը հաշվարկելու համար: Ամեն անգամ, երբ խելացի վաուչերն օգտագործվում է, խելացի պայմանագիրը ստուգում է՝ արդյոք օգտատերը համապատասխանում է չափանիշներին և քանի անգամ է արդեն օգտագործել այդ վաուչերը:

5. Շահառուների համար ևս կա հավելված՝ լիազորված մատակարարների առաջարկները դիտելու և ամրագրումներ կատարելու համար: Այն, սակայն, համակարգի պարտադիր բաղադրիչ չէ:

6. Որոշակի ժամանակահատվածից հետո համայնքապետարանից մատակարարներին կատարվում են SEPA վճարումներ:

Նկար 15. Stadjerspas գործընթացի հաջորդականությունը



Տեխնոլոգիական մատակարար. խելացի պայմանագրերի տրամաբանություն և օգտատերերի ինքնություններ:

Մասնակիցներ և հանգույցներ: Քաղաքացի, համայնքապետարան, տեխնոլոգիական մատակարար՝ խելացի պայմանագրերի տրամաբանություն և օգտատերերի ինքնություններ, բիզնեսներ, Zcash բլոկչեյն:

0. Համայնքապետարանը տեխնոլոգիական մատակարարի մոտ սահմանում է խելացի վաուչերի չափանիշներն ու մանրամասները՝ այսինքն խելացի պայմանագրերը: **1.** Քաղաքացին դիմում է համայնքապետարանին Stadjerspas-ի համար: **2.** Համայնքապետարանն իր շտեմարանում ստուգում է՝ արդյոք քաղաքացին իրավասու է: **3a.** Համայնքապետարանը տեխնոլոգիական մատակարարի մոտ ստեղծում է օգտատիրոջ ինքնությունը: **3b.** Համայնքապետարանը հաստատում է Stadjerspas-ը և քաղաքացուն հանձնում ֆիզիկական անցաքարտը: **4a.** Քաղաքացին օգտվում է բիզնեսի զեղչված ծառայությունից և տրամադրում իր եզակի նույնացուցիչը: **4b.** Բիզնեսը ներկայացնում է քաղաքացու նույնացուցիչը. դա գործարկում է խելացի վաուչերը, և այդ գործողությունն ամրագրվում է Zcash բլոկչեյնում: **5.** Համայնքապետարանը բիզնեսներին SEPA վճարումներ է կատարում՝ զեղչերը փոխհատուցելու համար:

Աղբյուր՝ հեղինակների մշակում՝ նախագծերի թիմերից հավաքված տվյալների և գրասենյակային հետազոտության հիման վրա:

Համակարգը սուբսիդավորում է մասնավոր ծառայություններ, որոնցից ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներն այլապես չէին կարողանա օգտվել՝ այդպիսով խթանելով ներառականությունը: Համայնքապետարանը կամ վաուչեր տրամադրող գործընկերը կարող է սահմանել խելացի վաուչերների օգտատերերի իրավասության չափանիշներ՝ օրինակ բնակության թաղամասի, եկամտի, երեխաների թվի կամ բնակչի համարին կապված ցանկացած տվյալների հիման վրա: Համակարգի օգտատերերը QR կողը ներկայացնելով կարող են բջջային հավելվածում կամ վեբ հարթակում տեսնել այն վաուչերները, որոնցից օգտվելու իրավունք ունեն: QR կողը հատուկ է տվյալ քաղաքացուն: Վաուչերի օգտագործման յուրաքանչյուր դեպք համակարգում գրանցում է զեղչված ծառայություն մատուցողը՝ սկանավորելով օգտատիրոջ QR կողը: Հավելվածը կամ անցաքարտն օգտագործող քաղաքացիները չեն գիտակցում, որ փոխգործակցում են բլոկչեյնային համակարգի հետ: Նույնը վերաբերում է սուբսիդավորվող ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

Գործառույթներ

Բլոկչեյնի այս ներդրումն օգտագործում է խելացի վաուչերի գործառույթն ու ավտոմատ վճարումները: SEPA վճարումները ակնթարթային չեն. դրանք կատարվում են որոշակի ժամանակահատվածի ավարտին՝ համակարգում կատարված գործարքների հիման վրա: Բլոկչեյնային համակարգը հանրային ֆինանսավորման թափանցիկություն և ծրագրավորման հնարավորություն է ապահովում՝ մասնավորապես ավելացնելով բաշխված գրանցման, անդամակցության կառավարման, տեղեկությունների փոխանակման և ավտոմատ կատարման գործառույթներ: Այն, սակայն, չի փոխարինում որևէ գործող համակարգի:

Կառավարում

Բլոկչեյնային համակարգը Գրոնինգենի համայնքապետարանի մատուցած պաշտոնական ծառայության մասն է: Կառավարման կառուցվածքը կենտրոնացված է, քանի որ Գրոնինգենի համայնքապետարանը և DutchChain-ը գտնվում են հաճախորդի ու ծառայություն մատուցողի հարաբերություններում: Նախագծի շահակիցներն են՝

• պետական մասնակից՝ Գրոնինգենի համայնքապետարան,

• տեխնոլոգիական մատակարար՝ DutchChain Systems,

• Գրոնինգենի և Թեն Բուրի քաղաքացիներ,

• բիզնեսներ՝ խելացի վաուչերներով սուբսիդավորվող ծառայություններ մատուցողներ:

Վերլուծված բլոկչեյնային լուծումների ճնշող մեծամասնությունը կա՛մ լրացնում է գործող հանրային ծառայությունները, կա՛մ մասամբ փոխարինում դրանց: Լրացնող լուծումները կառուցվում են առկա գործընթացների վրա, ինչպես Exonum նախագծում: Մասամբ փոխարինող լուծումներն առաջարկում են ծառայություն մատուցելու կամ վարչական գործառույթը կազմակերպելու նոր եղանակներ: Վերջին դեպքում բլոկչեյնն ստանձնում է հանրային հաստատությունների որոշ առաջադրանքներ՝ օրինակ ինքնության հավաստումը կամ իրավասության ստուգումը: Այդ փոփոխությունները կրճատում են թղթային աշխատանքը և վարչակազմի ժամանակը խնայում: Դեպքերից ոչ մեկում բլոկչեյնը չի վերացնում հանրային հաստատության միջնորդությունը: Chromaway-ը միակ նախագիծն է, որը նախատեսում է նոտարի միջնորդության վերացում:

10. Բլոկչեյնի վրա հիմնված կառուցվածքներն առաջացնում են հատուկ ծախսային հոդվածներ, սակայն ներդրման ընդհանուր ծախսերը չպետք է գերազանցեն կենտրոնացված կառուցվածքների ծախսերը

Stadjerspas նախագծի տվյալների հիման վրա, որտեղ բլոկչեյնային լուծումն ընտրվել է պետական մրցույթով, ներդրման ծախսերի ընդհանուր մակարդակը մրցունակ է: Բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունները նաև ունեն կենտրոնացված ծառայություններին նման միանվագ ծախսերի կառուցվածք: Մյուս կողմից՝ առանց թույլտվության բլոկչեյններ օգտագործող կառուցվածքները ներառում են նոր ծախսային հոդված՝ գործարքների վավերացման վճարներ՝ արտահայտված տատանվող արժեքով կրիպտոարժույթներով: Բազմաթիվ գործարքների վավերացման համար հաշվարկային առումով ծանր և, հետևաբար, էներգատար կոնսենսուսի մեխանիզմների օգտագործումը կարող է վարչակազմի կամ քաղաքացիների համար նշանակալի շահագործման ծախսեր առաջացնել: Այն նաև արտաքին բնապահպանական ծախս է ստեղծում:

11. Բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունները մի շարք օգուտներ են խոստանում էկոհամակարգին

Հանրային հատվածում բլոկչեյնի օգուտների հիմնական աղբյուրները գործընթացների արդյունավետությունն ու գործարքային տվյալների թափանցիկությունն են: Գրանցման և ստուգման ժամանակի կրճատումը, գործարքների ավելի արագ ու հուսալի վերջնական կատարումը և թղթային օրինակների վերացումը կարող են պոտենցիալ մեծ խնայողություններ ապահովել շահագործման և վարչարարության ծախսերում: Բլոկչեյնը խոստանում է նաև մի շարք որակական ձեռքբերումներ, որոնք մեծացնում են գրառումների վարման նկատմամբ վստահությունը՝ գրանցամատյանի ավելի բարձր անվտանգություն և դիմակայունություն, տվյալների ամբողջականության և աուդիտի հնարավորության բարելավում: Կենտրոնացված վավերացման գործառույթի վերացումը նաև ռազմավարական օգուտներ է բերում էկոհամակարգի ոչ պետական մասնակիցներին: Օրինակ՝ օգտատերերը կարող են լիակատար վերահսկողություն ստանալ իրենց անձնական տվյալների նկատմամբ և մեծապես անկախանալ կենտրոնական պահոցներից: Վերջապես, թվային օգտատիրական միջերեսների հետ համակցված բլոկչեյնային ծառայությունները կարող են բարելավել պետական մարմինների հետ փոխգործակցության փորձառությունը: Թղթային օրինակների վերացումն ու փաստաթղթերը վավերացնելու կամ հավաստագրված պատճեններ ստանալու համար համայնքապետարան այցելելու անհրաժեշտության վերացումն այն փոփոխությունների օրինակներից են, որոնք քաղաքացիները կարող են ակնկալել և կողջունեն:

3. Բլոկչեյնային ծառայությունների մասշտաբի ընդլայնման ներուժի ուսումնասիրություն

Գլուխ 2-ում ներկայացված դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս Եվրոպայի հանրային հատվածում բլոկչեյնային տեխնոլոգիայի զարգացման արդի վիճակը: Վերլուծված բոլոր ծառայությունները, ներառյալ գործառնական շահագործման մեջ գտնվող ներդրումները, ներկայում սահմանափակվում են մեկ տեղական կամ ազգային վարչակազմով: Այս գլխում քննվում է այդ ծառայությունների մասշտաբի ընդլայնման ներուժը:

Մասշտաբի ընդլայնումն այստեղ հասկացվում է որպես ծառայության տարածում մեկ այլ տեղական կամ ազգային վարչակազմում, այլ ոչ պարզապես մեկ ներդրման շրջանակում օգտագործողների թվի աճ:[11] Կարևոր է նշել, որ ծառայության մասշտաբի ընդլայնման ներուժը գնահատում ենք՝ դիտարկելով բացառապես նախագծման ընդհանուր սկզբունքները: Մասնավորապես, չենք գնահատում նախագծերի շրջանակում առաջարկվող կոնկրետ տեխնիկական լուծումները կամ առանձին նախագծային կոնսորցիումի կամ տեխնոլոգիա մատակարարողի կազմակերպական կարողությունները՝ միաժամանակ մի քանի ներդրում իրականացնելու համար:[12] Մի կողմ ենք թողնում նաև որոշ դեպքերում հնարավոր՝ սեփականատիրական ծրագրային բաղադրիչների վերօգտագործման սահմանափակումները:

3.1. Ենթադրություններ

Նույն ծառայության ընդունումը տարբեր վարչակազմերի կողմից կարող է հիմնավորվել տեխնիկական և տնտեսական նկատառումներով: Օրինակ՝ տարբեր վարչակազմեր կարող են օգտագործել բաց ստանդարտների վրա հիմնված նույն ծրագրային արձանագրությունները կամ ստեղծել վավերացնող հանգույցների համատեղ ենթակառուցվածք: Սակայն ամենից կարևորն այն է, որ բլոկչեյնի վրա հիմնված որոշ ծառայություններ մասշտաբն ընդլայնելու դեպքում կարող են պահանջարկի կողմում առաջացնել մեծ դրական արտաքին ազդեցություններ: Օրինակ՝ կրթական որակավորումը հավաստող փաստաթղթերի ստուգման համընդհանուր համակարգի ստեղծումը եվրոպական մակարդակում կարող է ավելի մեծ արժեք ապահովել, քան երկրների առանձին համակարգերը: Այս դեպքում լրացուցիչ արժեքը պայմանավորված է միջսահմանային կրթությանն ու դիպլոմների ճանաչմանն աջակցելով, ինչպես նաև աշխատուժի միջսահմանային շարժունակության աճով: Այդ օգուտներն իրացնելու համար անհրաժեշտ կլինի հավաստագրման ծառայության համակարգված ներդրում՝ երկրների համակարգերի փոխգործունակությամբ և ընդհանուր կառավարմամբ: Այս սցենարը ենթադրում է համակարգում ԵՄ մակարդակում կամ առնվազն երկրների խմբի մակարդակում: Որոշ ծառայություններ տարբեր վարչակազմերում տարածվելուց կարող են պահանջարկի կողմում էական արտաքին ազդեցություններ չառաջացնել: Այնուամենայնիվ, կարող է նպատակահարմար լինել նույն նախագծային լուծումը տարբեր երկրներում կրկնօրինակելը և փորձարկված արձանագրությունից կամ համատեղ ենթակառուցվածքից օգտվելը: Ուստի, կախված վարչակազմերի միջև և միջսահմանային արտաքին ազդեցությունների բնույթից, տրամաբանորեն կարելի է առանձնացնել մասշտաբի ընդլայնման երկու տարբերակ՝ կրկնօրինակում և համակարգված ներդրում: Դրանք ավելի մանրամասն նկարագրված են ստորև՝ Աղյուսակ 10-ում:

Մասշտաբի ընդլայնման ներուժը գնահատելիս պետք է հաշվի առնել մի շարք տեխնիկական, իրավական և տնտեսական հարցեր, օրինակ՝

• արդյոք լուծման մասշտաբի ընդլայնման դեպքում հնարավոր է լրացուցիչ օգուտներ կամ դրական ցանցային արտաքին ազդեցություններ ստանալ,

• արդյոք հավանական է ընդգրկման տնտեսման առաջացումը, օրինակ՝ ենթակառուցվածքի կրկնությունից խուսափելու միջոցով,

• մշակված ծառայությունը որքանով է նպաստում Եվրոպական միության քաղաքականության կարևոր ուղղությանը,

11. Հայտնի է, որ թվային համակարգերը, ներառյալ ապակենտրոնացված կամ հավասարը հավասարի համակարգերը, ընդհանուր առմամբ հեշտությամբ են մասշտաբայնացվում: Դա պայմանավորված է առաջարկի կողմի երկու գործոնով՝ մասշտաբի տնտեսմամբ և հզորության ծախսերի նվազումով: Մասշտաբի տնտեսումն այն է, որ համակարգի առկա հզորության շրջանակում լրացուցիչ օգտագործողի կամ գործարքի ավելացումն առաջացնում է զրոյական սահմանային ծախսեր: Հզորությունը կարելի է մեծացնել՝ ավելացնելով հաստատուն ծախսերով սարքավորման տարրեր: Ժամանակի ընթացքում հզորության ընդլայնման միավոր հաստատուն ծախսը կտրուկ նվազել է միկրոէլեկտրոնիկայի շարունակական նորարարության շնորհիվ: Հանրային՝ առանց թույլտվության բլոկչեյններն այս կանոնից բացառություն են, քանի որ գործարքները վավերացնելու համար օգտագործում են հաշվարկային մեծ ռեսուրսներ պահանջող մեխանիզմ, որը սահմանափակում է հզորության ընդլայնումը: Սակայն DLT համակարգերի մյուս տեսակները հեշտությամբ են մասշտաբայնացվում: ↩

12. Մասշտաբի ընդլայնման վերլուծության եզրակացությունները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես որևէ առանձին տեխնոլոգիա մատակարարողի կամ վերլուծված ծառայություններում կիրառված որևէ կոնկրետ տեխնիկական լուծման օգտին կամ դեմ հանձնարարական: ↩

• արդյոք հիմքում ընկած բլոկչեյնային ճարտարապետությունն ու գործառույթները բավարար տեխնիկական հասունություն ունեն գործառնական շահագործման համար, այդ թվում՝ իրավական պահանջներին համապատասխանության առումով,

• արդյոք կպահանջվեն հատուկ հարմարեցումներ չներդաշնակեցված իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներին:

Աղյուսակ 10. Բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունների մասշտաբի ընդլայնման տարբերակներ

Տարբերակ՝ կրկնօրինակում

Նկարագրություն. լուծումը որպես ծառայություն առաջարկվում է մեկ այլ անդամ պետության կամ տեղական վարչակազմի:

Հետևանքներ՝ ծրագրային ապահովում և արձանագրություններ. օգտագործվում են օգտագործողների նույն հավելվածները, API-ները և բլոկչեյնային արձանագրությունները:

Հետևանքներ՝ կառավարում և փոխգործունակություն. բլոկչեյնները տրամաբանորեն և ինստիտուցիոնալ առումով տարանջատված են: Յուրաքանչյուր անդամ պետությունում գործում է առանձին կառավարման մարմին: Իրավական ներդաշնակեցում չի պահանջվում: Տեխնիկական և իմաստաբանական փոխգործունակություն չի պահանջվում, թեև դրանք գոյություն ունեն ըստ սահմանման:

Հետևանքներ՝ ենթակառուցվածք. մեկ այլ անդամ պետությունն օգտագործում է կա՛մ առանձին, կա՛մ ընդհանուր ենթակառուցվածք:

Օրինակ 1. Շվեդիան իր անշարժ գույքի գործարքների լուծումը վերածում է պատրաստի արտադրանքի և դրա առանձին գործարկումը՝ «օրինակը», որպես ծառայություն առաջարկում Ֆրանսիային: Այսպիսով, Ֆրանսիան օգտագործում է շվեդական ենթակառուցվածքը կամ ընդլայնում այն՝ ավելացնելով որոշ թվով սեփական սերվերներ:

Օրինակ 2. Իտալիան կրկնօրինակում է Մալթայի՝ կրթական հավաստագրերի ստուգման լուծումը՝ օգտագործելով հասանելի բաց կոդով գրադարանները և սեփական ենթակառուցվածքը:

Կիրառման հնարավոր ոլորտներ. անդամ պետությունների բացառիկ կամ համատեղ իրավասության ոլորտներ՝ հարկում, սոցիալական քաղաքականություն, արդյունաբերական քաղաքականություն, առողջության պաշտպանություն, կրթություն:

Տարբերակ՝ համակարգված ներդրում

Նկարագրություն. լուծումը համակարգված կերպով ներդրվում է տարբեր անդամ պետություններում՝ համատեղ կառավարմամբ:

Հետևանքներ՝ ծրագրային ապահովում և արձանագրություններ. օգտագործվում են օգտագործողների նույն հավելվածները, API-ները և բլոկչեյնային արձանագրությունները:

Հետևանքներ՝ կառավարում և փոխգործունակություն. բլոկչեյնները տրամաբանորեն փոխկապակցված են: Գործում է ընդհանուր կառավարման մարմին՝ կազմված յուրաքանչյուր անդամ պետության հանրային հատվածի դերակատարներից: Պահանջվում է իրավական ներդաշնակեցում: Ապահովված է տեխնիկական և իմաստաբանական փոխգործունակությունը:

Հետևանքներ՝ ենթակառուցվածք. անդամ պետություններն օգտագործում են ընդհանուր ենթակառուցվածք:


Օրինակ. ԵՄ-ում ստեղծվում են անշարժ գույքի գործարքների կամ հավաստագրերի ստուգման ընդհանուր շրջանակներ: Բոլոր շահագրգիռ անդամ պետությունները ներդնում են այդ շրջանակը՝ հիմնվելով եվրոպական ուղեցույցների և ստանդարտների վրա: Ծառայության գործարկման համար ստեղծվում է առանձին եվրոպական ենթակառուցվածք: Յուրաքանչյուր երկիր տեղակայում է որոշ թվով սերվերներ: Յուրաքանչյուր անդամ պետությունում օգտագործվում են նույն արձանագրություններն ու ստանդարտները:

Կիրառման հնարավոր ոլորտներ. ԵՄ բացառիկ կամ համատեղ իրավասության ոլորտներ՝ մաքսային գործ, ներքին շուկա, սպառողների պաշտպանություն, կրթություն, նորարարական քաղաքականություն:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Վերոնշյալ նկատառումների հիման վրա ուսումնասիրվում են մասշտաբի ընդլայնման ներուժի վրա ազդող հինգ տարբեր տեխնիկական, տնտեսական և ինստիտուցիոնալ գործոններ՝ օգուտներ, ծախսեր, տեխնոլոգիական հասունություն, ԵՄ քաղաքականության առաջնահերթություններ, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն: Հաշվի առնելով հասանելի էմպիրիկ ապացույցների որակական բնույթը՝ մասշտաբի ընդլայնման ներուժում յուրաքանչյուր գործոնի ներդրումը գնահատվում է ամենապարզ՝ եռաստիճան կարգային սանդղակով, որի մակարդակները ներկայացված են Հարվիի շրջաններով: Այդ գործոնների գնահատումից հետո մասշտաբի ընդլայնման երկու տարբերակները գնահատվում են մեկ այլ եռաստիճան սանդղակով: Նկար 16-ը ներկայացնում է երկու սանդղակների մեկնաբանությունը:

Նկար 16. Մասշտաբի ընդլայնման գնահատման սանդղակներ



Տվյալ գործոնի ներդրումը մասշտաբի ընդլայնման ներուժում՝ ցածր (դատարկ կապտականաչ շրջան), միջին (կիսով չափ լցված կապտականաչ շրջան), բարձր (ամբողջությամբ լցված կապտականաչ շրջան)։ Յուրաքանչյուր տարբերակի վերաբերյալ հանձնարարական՝ տարբերակը չի առաջարկվում (դատարկ կանաչ շրջան), տարբերակը կարելի է դիտարկել (կիսով չափ լցված կանաչ շրջան), տարբերակն առաջարկվում է (ամբողջությամբ լցված կանաչ շրջան)։

Աղբյուր՝ հեղինակների մշակում։

Ստորև յուրաքանչյուր ծառայության մասշտաբի ընդլայնման ներուժը գնահատում ենք առանձին։

3.2. Առանձին ծառայությունների գնահատում

Հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան

Հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի ծառայությունը տրամադրում է սեփականության իրավունքի թվային վկայական և բլոկչեյնն օգտագործում է որպես գործարքի գոյությունը հաստատող՝ ստուգելի ապացույցի լրացուցիչ շերտ: Ծառայությունը նաև արագացնում է իրավունքների գրանցումը՝ օգտագործելով մասնավոր բլոկչեյն: Համանման գործառույթներով հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի միջսահմանային ներդրումից ստացվելիք օգուտները սահմանափակ են: Անշարժ գույքի գործարքների մեծ մասը կատարվում է երկրների ներսում, իսկ իրավունքների գրանցման ընդհանուր ծառայությունը գործելու համար պետք է լիովին համապատասխանեցված լինի բոլոր երկրների իրավական համակարգերին: Յուրաքանչյուր անդամ պետություն ունի իր հաստատությունները՝ գործարքների գրանցման և ստուգման մեջ իրենց առանձին դերերով: Այդ դերերն անհրաժեշտ կլինի ներդաշնակեցնել: Այդ ներդաշնակեցման ծախսերը, հավանաբար, կգերազանցեն օգուտները: Վիճելի է նաև բլոկչեյնի վրա հիմնված գրանցման համակարգի առավելությունը արդյունավետ կենտրոնացված գրանցամատյանի նկատմամբ:

Գործարքների մշակման թողունակությունը բավարար է գործառնական շահագործման ներդրման համար: Բլոկչեյնային շերտն արդեն թույլ է տալիս մասնավոր հանգույցների միջև վայրկյանում կատարել 5 000 գործարք, իսկ գրանցված իրավունքների հեշերը կարելի է խմբաքանակներով տեղադրել հանրային բլոկչեյնում: Սակայն համակարգը մեկ այլ երկիր տարածելու համար անշարժ գույքի գործարքների գրանցման համար պատասխանատու հաստատությունները պետք է գործեն որպես տեղակայող հանգույցներ: Դրանից բխող ճարտարապետական հետևանքները, հավանաբար, կնվազեցնեն ընդգրկման տնտեսումը: Բացի այդ, հողի նկատմամբ սեփականության իրավունքների

գրանցման ներդաշնակեցումը ԵՄ քաղաքականության առանցքային ուղղություն չէ: Ուստի ծառայության համակարգված ներդրում չի առաջարկվում: Կրկնօրինակումը կլինի ավելի գործնական տարբերակ, քանի որ այս դեպքում ենթակառուցվածքը հնարավոր կլինի ավելի հեշտ հարմարեցնել իրավական միջավայրին:

Աղյուսակ 11. Հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ ցածր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ ցածր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:
Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Կրթական հավաստագրերի ստուգում

Ծառայությունն օգտագործողներին և ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ստուգել իրենց կրթական որակավորումը հավաստող փաստաթղթերը: Միջսահմանային ներդրման դեպքում մեծանում է համակարգում տրված հավաստագրի հնարավոր կիրառման աշխարհագրությունը: Միջսահմանային չափումը բաշխված գրանցամատյանի համար ապահովում է հստակ գործնական հիմնավորում, որին գործող ավանդական համակարգերից ոչ մեկը չի արձագանքում: Տարբեր երկրներ տարածվելը կբարձրացնի համակարգի արժեքը: Ծառայության օգտակարությունն աճում է ընդհանուր լուծումն ընդունող և օգտագործող ձեռնարկությունների ու հաստատությունների թվի աճին զուգընթաց: Մասշտաբի ընդլայնումը կպահանջի լրացուցիչ ինտեգրում կրթական հաստատությունների համակարգերին՝ հավաստագրեր տրամադրելու համար: Տեխնիկական ճարտարապետությունը հնարավորություն է տալիս բլոկչեյնում պահել հավաստագրերի հեշերի խմբաքանակները:

Եթե ծառայությունը տարածվի տարբեր երկրներում, պետք է օգտագործվի նույն բլոկչեյնային հարթակը: Բացի այդ, կրթական հավաստագրերի ճանաչումն աջակցում է ԵՄ քաղաքականության կարևոր ուղղություններին: Այն կլրացնի ECTS-ի հիման վրա համալսարանների կրթական ծրագրերի նկարագրերի ստանդարտացումը և կաջակցի միջսահմանային փոխանակման ծրագրերին: Դասընթացների ավարտի վկայականների և ակադեմիական դիպլոմների համաեվրոպական ճանաչումը կբարելավի աշխատաշուկաների գործունեությունը և կբարձրացնի աշխատուժի շարժունակությունը: Արդյունքում, ծառայության համակարգված տարածումն այլ երկրներում կարող է ավելի մեծ օգուտներ բերել, քան ծախսեր, և նպաստել քաղաքականության առանցքային ուղղություններին: Օգտագործվող տեխնոլոգիան այս կոնկրետ կիրառման համար բավականաչափ հասուն է, սակայն հավաստագրերի տարբեր տեսակներ ավելացնելու դեպքում ավելի մեծ ջանքեր կպահանջվեն իմաստաբանական փոխգործունակությունն ապահովելու համար: Բաց կոդով ծրագրային ապահովման վրա հիմնված լուծումն ավելի մեծ հավանականությամբ կտարածվի և կընդգրկի քաղաքացիների վերաբերյալ գրանցումների տարբեր տեսակներ, օրինակ՝ ծննդյան կամ ամուսնության վկայականներ: Հնարավոր են և՛ կրկնօրինակումը, և՛ մասշտաբի ընդլայնումը: Կրկնօրինակումը կլինի ավելի աստիճանական մոտեցում, որը, հավանաբար, անհրաժեշտ է՝ հաշվի առնելով կրթական հաստատությունների հետ պահանջվող ինտեգրումը: Սակայն դրան կարող է նպաստել նաև համակարգված մոտեցումը, որը կապահովի ապակենտրոնացված եղանակով ստուգելի ակադեմիական դիպլոմների համաեվրոպական ճանաչում: Ծառայության ներդրման ներկա հիմնական խոչընդոտը կապված է էլեկտրոնային հավաստագրերի օգտագործման և բլոկչեյնում դրանց վավերացման հնարավոր անօրինականության հետ:

Աղյուսակ 12. Կրթական հավաստագրերի մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ բարձր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:

Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ առաջարկվում է:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Անշարժ գույքի գործարքներ

Մշակված ծառայությունը չի սահմանափակվում հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցմամբ: Այն նպատակ ունի բոլոր դերակատարների համար հեշտացնել անշարժ գույքի գործարքի ամբողջ ընթացքը՝ միաժամանակ բարձրացնելով գործընթացի անվտանգությունն ու թափանցիկությունը: Ծառայությունն ընդգրկում է նաև հիփոթեքային փաստաթղթերի և մուրհակների ներգրավմամբ անշարժ գույքի գործարքները: Ինչպես հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյանի ծառայության դեպքում, միջսահմանային անշարժ գույքի գործարքների ներդրման օգուտները սահմանափակ են: Բացի այդ, ներկայիս համակարգում արդեն մտահոգություններ կան գործարքների օրինականության վերաբերյալ: Այլ երկրներ տարածվելը միայն կմեծացնի այդ անորոշությունը: Թեև գնահատելը դժվար է, մասնավոր՝ թույլտվությամբ բլոկչեյնի ճարտարապետական կառուցվածքը, հավանաբար, թույլ կտա բավական հեշտ ընդլայնել մասշտաբը: Սակայն այլ երկրներում անշարժ գույքի գործարքներում ներգրավվում են յուրահատուկ հաստատություններ, ուստի միջսահմանային աշխատանքային հոսքը կառավարող խելացի պայմանագրերը պետք կլինի վերանախագծել և ընդլայնել: Արդյունքում, տեխնոլոգիական հասունության և իրավական ներդաշնակեցման այս փուլում ծառայությունը չափազանց բարդ է եվրոպական այլ երկրներ տարածելու համար: Կրկնօրինակումը կարող է հնարավոր լինել, եթե առկա լինեն նույն տեսակի դերակատարներ և համեմատաբար նման կարգավորող միջավայր:

Աղյուսակ 13. Անշարժ գույքի գործարքների մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ ցածր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ միջին, քաղաքականության առաջնահերթություն՝ ցածր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ ցածր:

Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ կարելի է դիտարկել, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Ապակենտրոնացված ինքնություն

Բլոկչեյնի վրա հիմնված ինքնության լուծումն օգտագործում է DLT՝ բնակությունը հավաստելու, էլեկտրոնային կառավարման ծառայությունների համար իսկորոշում կատարելու և պետական մարմինների կողմից հավաստված անձնական տվյալներ փոխանցելու նպատակով: Այն հիմնարար բաղադրիչ է այլ ապակենտրոնացված կամ կենտրոնացված ծառայությունների համար, որոնք պահանջում են օգտագործողների ինքնության կառավարում: Ավանդական ինքնության փաստաթուղթը տրամադրող մարմինը պահում է ինքնությունների կենտրոնացված գրանցում և կշարունակի դա անել՝ հավաստելու համար, որ անձն իսկապես նա է, ում ներկայանում է: Սակայն դա անհրաժեշտ է կատարել ընդամենը մեկ անգամ, որից հետո քաղաքացին կարող է բլոկչեյնային տեխնոլոգիայի միջոցով ներկայացնել իր ինքնության ստուգելի ապացույցը՝ առանց իշխանություններին ներգրավելու: Ծառայությունը կարող է օգտագործվել բազմաթիվ հանրային կամ մասնավոր ծառայություններին իսկորոշված մուտք տրամադրելու համար՝ այդպիսով ապահովելով միայն մեկ անգամ ներկայացնելու սկզբունքը (European Commission, 2017a): Այդ սկզբունքը պահանջում է, որ անհատներն ու ձեռնարկությունները հանրային վարչակազմերին նույն տեղեկությունը մեկից ավելի անգամ ներկայացնելու պարտավորություն չունենան: Ապակենտրոնացված ինքնության նույնականացուցիչների հնարավոր տարածումն արդեն ուսումնասիրվում է Շվեյցարիայի կանտոնային և դաշնային մակարդակներում: Այս ծառայությունն այլ տարածաշրջաններ կամ երկրներ տարածելու օգուտները ներառում են հանրային և մասնավոր կազմակերպությունների համար օգտագործողների կառավարման միասնական համակարգը և ինքնության ընդհանուր, փոխգործունակ լուծումը, որը հնարավոր է օգտագործել տարբեր երկրների կամ տարածաշրջանների մի շարք հանրային ու մասնավոր ծառայություններում: Մինչ այդ անհրաժեշտ է հաղթահարել որոշ տեխնիկական խոչընդոտներ, օրինակ՝ բլոկչեյնային հարթակի և խելացի պայմանագրերի գործարկման միջավայրի ընտրությունը: Քաղաքացիների էլեկտրոնային իսկորոշումը ԵՄ քաղաքականության

առանցքային ուղղություն է, ինչի վկայությունն է eIDAS կանոնակարգի ստեղծումը (European Parliament & European Council, 2014): Այս լուծման կիրառումը տարբեր երկրներում կարող է օգտակար լինել նաև բլոկչեյնի այլ փորձնական ներդրումների, օրինակ՝ քվեարկության համար, քանի որ մյուս դեպքերի ուսումնասիրություններում օգտագործողների կառավարման համակարգերը հաճախ նշվում են որպես խնդիր: Հնարավոր է կրկնօրինակել մեկ լուծում, սակայն սկզբունքորեն ինքնության կառավարման մի քանի տարբեր համակարգեր կարող են համագոյակցել, եթե ապահովված է դրանց միջև փոխգործունակությունը: Ուստի բոլոր անդամ պետություններում վերևից վար համակարգված կերպով հենց նույն լուծումը ներդնելու օգուտներն ակնհայտ չեն: Ավելի մեղմ համակարգումը՝ ընդհանուր ստանդարտներին հետևելու ապահովմամբ, թվում է լավագույն սցենարը:

Աղյուսակ 14. Ապակենտրոնացված ինքնության կառավարման մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ միջին, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ միջին, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:
Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ կարելի է դիտարկել:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Բլոկչեյնի կառավարման շրջանակ և տեղակայման ենթակառուցվածք

Բլոկչեյնի ընդհանուր կառավարման շրջանակը վերջնական օգտագործողներին որևէ ծառայություն չի տրամադրում: Այն սահմանում է համապատասխանության մի շարք պայմաններ թույլտվությամբ բլոկչեյններում վավերացնող հանգույցների համար և տարանջատում է ենթակառուցվածքային ու կիրառական շերտերը: Հանրային ծառայությունների տեղակայման համար հավաստագրված, անկախ հանգույցներից կազմված հենակետային բլոկչեյնային ենթակառուցվածքի ստեղծումն արդեն դարձել է ԵՄ քաղաքականության առաջնահերթություն: Ընդունվում է, որ նման ենթակառուցվածքի վրա բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունները կարելի է ներդնել ավելի արագ, ավելի անվտանգ և ավելի պաշտպանված ձևով: Դրան ներհատուկ միջսահմանային կիրառության շնորհիվ ակնհայտ են մասշտաբի ընդլայնման ներուժն ապահովող դրական ազդեցությունները: Որքան շատ ձեռնարկություններ ու հաստատություններ ընդունեն ընդհանուր շրջանակը և մասնակցեն տեղակայման ենթակառուցվածքին, այնքան այն կդառնա անվտանգ ու հուսալի: Հետևաբար օգուտների առումով առկա են դրական ցանցային արտաքին ազդեցություններ: Կառավարման շրջանակը կնպաստի հանրային հատվածում թույլտվությամբ բլոկչեյնային ցանցերի օգտագործման աճին· դրանք, ընդհանուր առմամբ, ապահովում են ավելի առաջադեմ գործառույթներ և կարող են մշակել ավելի շատ գործարքներ: Ծախսերն ու տեխնիկական հետևանքները կլինեն սահմանափակ: Շրջանակը կարող է օգտագործվել իրավական խոչընդոտները վերացնելու և քաղաքացիների տվյալներ ներառող բլոկչեյնային կիրառությունները գործառնական շահագործման հասցնելու համար: Հնարավոր են և՛ կրկնօրինակումը, որի դեպքում տարբեր երկրներ աջակցում են նախաձեռնությանը, և՛ համակարգված մասշտաբի ընդլայնումը, որի դեպքում ցանցն ընդլայնվում է՝ ընդգրկելով եվրոպական բոլոր երկրները:

Աղյուսակ 15. Բլոկչեյնի կառավարման շրջանակի մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ բարձր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ միջին, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:

Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ առաջարկվում է:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Կենսաթոշակների վարչարարություն

Այս ծառայությունը նպատակ ունի կենսաթոշակային համակարգի կառավարման համար տրամադրել բլոկչեյնի վրա հիմնված ներքին վարչարարական համակարգ: Ապակենտրոնացված, բայց ինտեգրված տեղեկատվական համակարգի հնարավոր օգուտները՝ գործատուների, աշխատողների, հարկային մարմինների և կենսաթոշակային հիմնադրամների միջերեսներով, հսկայական են: Օգուտները ստացվում են էկոհամակարգի տարբեր դերակատարների՝ գործարքների նույն տվյալներին հասանելիության միջոցով: Սակայն մեկ երկրի կենսաթոշակային համակարգին հարմարեցված վարչարարական համակարգը հեշտ չէ տարածել այլ անդամ պետություններում՝ ինստիտուցիոնալ կառուցվածքների մեծ տարբերությունների պատճառով: Համակարգված տարածումը, հավանաբար, կունենա մեծ տեխնիկական հետևանքներ և համապատասխան ծախսեր: Այն կպահանջի ներգրավել ավելի շատ դերակատարների, որոնք գործում են տարբեր իրավական պայմաններում և կենսաթոշակային կարգավորումների ներքո: Կասկածելի է նաև՝ արդյոք բլոկչեյնային ենթակառուցվածքը կկարողանա ապահովել մեկ բարդ համակարգի պահանջվող թողունակությունը: Ընդ որում, նման լուծման օգուտները հիմնականում կհասնեն այն քաղաքացիներին, որոնք իրենց աշխատանքային կյանքի ընթացքում աշխատել են տարբեր երկրներում, այլ ոչ միայն սեփական երկրում աշխատածներին: Այս կիրառության կապը քաղաքականության առաջնահերթությունների հետ նույնպես սահմանափակ է, թեև այն կարող է մեծանալ առաջիկա տարիներին՝ համաեվրոպական կենսաթոշակային ծրագրերի հաջողության դեպքում: Վերջերս Եվրոպական հանձնաժողովն առաջարկել է Համաեվրոպական անհատական կենսաթոշակային արտադրանքը (PEPP)՝ նպատակ ունենալով շուկա բերել թափանցիկ, ճկուն և հեշտ փոխանցելի կենսաթոշակային ծրագիր: Այս նախաձեռնությունն ակնհայտորեն նպատակ ունի ստանդարտացված կենսաթոշակային արտադրանքով արձագանքել ավելի շարժունակ դարձող աշխատուժի կարիքներին, սակայն դեռևս փոփոխություններ չի մտցնում կենսաթոշակների վարչարարության

ոլորտում: Հաշվի առնելով տեխնոլոգիայի ներկայիս անհասուն վիճակը՝ ծառայությունը թվում է չափազանց բարդ, իսկ դրա էկոհամակարգը՝ չափազանց մեծ, որպեսզի մեկ երկրի սահմաններից դուրս մասշտաբի ընդլայնումը օգուտ տա: Եթե տեխնոլոգիան հասնի գործառնական շահագործման համար բավարար հասունության, ծառայությունը հնարավոր կլինի կրկնօրինակել մեկ այլ երկրում՝ զգալի հարմարեցումներից հետո:

Աղյուսակ 16. Կենսաթոշակների վարչարարության համակարգի մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ միջին, ծախսեր՝ ցածր, տեխնոլոգիական հասունություն՝ ցածր, քաղաքականության առաջնահերթություն՝ միջին, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:

Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ կարելի է դիտարկել, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Խելացի վաուչերներ

Խելացի վաուչերները նպատակ ունեն նպաստել սոցիալական ներառմանը՝ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին հատկացնելով սուբսիդավորվող ծառայություններ: Դրա համար ծառայությունը սահմանում է անհատականացված թվային իրավունքներ: Վաուչերների օգտագործումը վերահսկվում է բլոկչեյնի վրա հիմնված համակարգով: Կիրառելով ծրագրավորվող փողի գաղափարը՝ ծառայությունը բարելավում է հանրային միջոցների բաշխման արդյունավետությունն ու դրանց ծախսման հաշվետվողականությունը: Այս գործառույթը հնարավոր է ընդլայնել և ավելի մեծ մասշտաբով կիրառել՝ այլ հաստատությունների կողմից որոշակի նպատակների համար միջոցներ հատկացնելու և քաղաքացիների ավելի մեծ շրջանակի հասնելու միջոցով: Մասշտաբայնացումը խնդիր չի համարվում, հատկապես Lightning ցանցի մշակման պայմաններում:[13] Համակարգի ընդգրկումը հնարավոր է ընդլայնել նաև դրամաշնորհների կառավարման ուղղությամբ: Ավելի լայնամասշտաբ ներդրման համար պետք է ներառել ինքնության հաստատման հուսալի մեխանիզմ:

13. Lightning ցանցը Bitcoin արձանագրության վրա կառուցված լրացուցիչ շերտ է՝ ակնթարթային վճարումները հեշտացնելու և միաժամանակ մասշտաբայնացումն ապահովելու համար: Այն ներկայում մշակման փուլում է՝ https://lightning.network: ↩

Անվտանգության տեսանկյունից ծառայությունը կշարունակի կախված մնալ արտաքին անվտանգության միջոցներից, օրինակ՝ զեղչից կամ դրամաշնորհից օգտվելու համար լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց: Սոցիալական ներառումը նաև Եվրոպական միության առանցքային առաջնահերթություններից է: Առավել նպատակահարմար կլինի կրկնօրինակումը, որի դեպքում տարբեր համայնքներ կամ տարածաշրջաններ կարող են օգտվել ընդհանուր ենթակառուցվածքից: Ներկայիս համակարգը ազգային կամ համաեվրոպական մակարդակ տարածելը խնդիրներ է առաջացնում՝ կապված կոնկրետ իրավական միջավայրին համապատասխան օգտագործողների կառավարման հուսալի համակարգ ունենալու հետ: Խնդրահարույց է նաև վերևից վար ներդրման տնտեսական հիմնավորումը, քանի որ դրական արտաքին ազդեցություններն անմիջապես ակնհայտ չեն:

Աղյուսակ 17. Վաուչերային համակարգի մասշտաբի ընդլայնման ուսումնասիրություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ ցածր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:
Մասշտաբի ընդլայնման տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

3.3. Մասշտաբի ընդլայնման ուսումնասիրությունից բխող դիտարկումներ

Ծառայությունների մասշտաբի ընդլայնման ներուժի ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ ընդհանուր պատկերին և դիտարկումներին:

Աղյուսակ 18. Բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունների մասշտաբի ընդլայնման ներուժը

Ծառայություն՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցամատյան

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ ցածր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ ցածր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Ծառայություն՝ կրթական հավաստագրերի ստուգում

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ բարձր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ առաջարկվում է:

Ծառայություն՝ անշարժ գույքի գործարքներ

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ ցածր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ միջին, քաղաքականության առաջնահերթություն՝ ցածր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ ցածր:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ կարելի է դիտարկել, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Ծառայություն՝ ապակենտրոնացված ինքնություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ միջին, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ միջին, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ կարելի է դիտարկել:

Ծառայություն՝ կառավարման շրջանակ և ենթակառուցվածք

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ բարձր, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ միջին, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ բարձր:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ առաջարկվում է:

Ծառայություն՝ կենսաթոշակների վարչարարություն

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ միջին, ծախսեր՝ ցածր, տեխնոլոգիական հասունություն՝ ցածր, քաղաքականության առաջնահերթություն՝ միջին, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ կարելի է դիտարկել, համակարգված ներդրում՝ չի առաջարկվում:

Ծառայություն՝ խելացի վաուչերներ

Գործոնների ներդրումը. օգուտներ՝ միջին, ծախսեր՝ միջին, տեխնոլոգիական հասունություն՝ բարձր, քաղաքականության առաջնահերթություն՝ բարձր, ինստիտուցիոնալ և իրավական պահանջներին համապատասխանություն՝ միջին:

Տարբերակներ. կրկնօրինակում՝ առաջարկվում է, համակարգված ներդրում՝ կարելի է դիտարկել:

Աղբյուր՝ հեղինակների մշակում:

Թարգմանչի նշում. բնագրի Աղյուսակ 17-ում խելացի վաուչերների «օգուտներ» գործոնը գնահատված է «ցածր», իսկ համակարգված ներդրումը՝ «չի առաջարկվում»: Նույն էջի ամփոփիչ Աղյուսակ 18-ում համապատասխան արժեքներն են «միջին» և «կարելի է դիտարկել»: Երկու աղյուսակների արժեքները պահպանվել են այնպես, ինչպես բնագրում են:

Դիտարկված յոթ լուծումներից երկուսը կարելի է առաջարկել համակարգված ներդրման համար՝ (i) բլոկչեյնի կառավարման շրջանակը՝ տեղակայման ենթակառուցվածքով, և (ii) կրթական հավաստագրերի ստուգումը: Երկու ծառայություններն էլ առաջացնում են փոխգործունակությամբ պայմանավորված դրական արտաքին ազդեցություններ և համապատասխանում են ԵՄ քաղաքականության առաջնահերթություններին: Կառավարման շրջանակն ու տեղակայման ենթակառուցվածքը կարող են հիմք ստեղծել տվյալների պահպանման վայրի հետ կապված իրավական խոչընդոտները մեղմելու համար և խթանել քաղաքացիների տվյալներ ներառող բլոկչեյնային կիրառությունների անցումը գործառնական շահագործման: Հավաստագրերի ստուգման ծառայությունը հնարավորություն է տալիս ստեղծել համաեվրոպական բազմակողմ հարթակ՝ միավորելով տրամադրողներին՝ համալսարաններին, հավաստագրերի կրողներին և երրորդ կողմերին՝ գործատուներին ու համալսարաններին: Հավաստագրերը գրանցվում են էլեկտրոնային եղանակով՝ ստանդարտացված ձևով, և պահվում են կրողի մոտ: Մասնակիցների

բոլոր երեք խմբերի համար օգուտները, ներառյալ ուժեղ դրական արտաքին ազդեցությունները, ակնհայտ են:

Երկու այլ ծառայություններ՝ խելացի վաուչերներն ու ապակենտրոնացված ինքնությունը, վերևից վար սցենարի համար սահմանային դեպքեր են: Լավագույն դեպքում երկու ծառայություններն էլ պահանջում են փոխգործունակություն, բայց ոչ պարտադիր՝ նույն տեխնիկական բնութագրերը: Վերաբաշխման քաղաքականությունները մնում են անդամ պետությունների իրավասության ներքո: Ուստի խելացի վաուչերների համակարգի մասշտաբի ընդլայնումը կարող է հիմնավորվել մինչև ազգային մակարդակ, սակայն դրանից բարձր մակարդակում քիչ իմաստ ունի: Մյուս կողմից, պետական մարմինների կողմից հավաստված ապակենտրոնացված ինքնությունը բլոկչեյնային տեխնոլոգիայի վրա հիմնված՝ արմատական փոփոխություններ բերող թվային ծառայությունների առանցքային հիմնարար բաղադրիչն է: Ամենայն հավանականությամբ, քաղաքացիները կնախընտրեն նույնականացում պահանջող բոլոր թվային ծառայությունների համար օգտագործել իրենց վերահսկողության տակ գտնվող անձնական տվյալների կառավարման միայն մեկ համակարգ: Սակայն սկզբունքորեն հիմք չկա բոլորին պարտադրել հենց նույն լուծումն օգտագործելը, եթե մրցակցային հիմունքներով առաջարկվող ինքնության կառավարման տարբեր համակարգերը ստանդարտացված են: Կարևոր քայլ է արվել eIDAS կանոնակարգով, որը պարտադրում է Եվրոպայում էլեկտրոնային նույնականացման սխեմաների փոխադարձ ճանաչում մինչև 2018 թվականի սեպտեմբերի 29-ը:

Վերևում քննարկված բոլոր չորս ծառայությունները, և հատկապես երկու սահմանային լուծումները, կարող են նաև կրկնօրինակվել տարբեր վարչակազմերում: Ներկա փուլում այս մոտեցումը կառաջարկվեր՝ ավելի շատ փորձարկումներ և տեխնիկական ստուգումներ հնարավոր դարձնելու համար: Այնուամենայնիվ, օգուտների ամբողջ շրջանակը հնարավոր է առավելագույնի հասցնել

միայն փոխգործունակության պայմաններում, որը պահանջում է կա՛մ լիարժեք վերևից վար ներդրում, կա՛մ առնվազն մեղմ համակարգում:

Մնացած երեք ծառայություններից կենսաթոշակների վարչարարությունը և անշարժ գույքի գործարքները ցածր գնահատական ունեն տեխնիկական հասունության կամ իրավական պահանջներին համապատասխանության առումով, ուստի ներկա փուլում պատրաստ չեն մասշտաբի ընդլայնմանը: Կրկնօրինակման հիմնական խոչընդոտներն են պահանջվող հարմարեցումների ծավալը և տեխնիկական սահմանափակումները, օրինակ՝ թողունակությունը: Փաստորեն, երկու ծառայություններն էլ դեռ գտնվում են գաղափարի իրագործելիության ապացույցի փուլում: Ջարգացման կենսաշրջանում առաջընթացից հետո հնարավոր կլինի վերանայել մասշտաբի ընդլայնման գնահատումը՝ ներքևից վեր մոդելի ուղղությամբ: Հողի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման ծառայությունն արդեն հասել է տեխնոլոգիական հասունության և ցուցադրել իրավական պահանջներին համապատասխանություն, սակայն բավարար դրական արտաքին ազդեցություններ չի առաջացնում: Ուստի այս ծառայությունը կարելի է միայն կրկնօրինակել մեկ այլ երկրում:

4. Եզրակացություններ և քաղաքականության առաջարկություններ

Այս ուսումնասիրությունն անդրադարձել է Եվրոպայի հանրային հատվածում իրականացվող մի շարք բլոկչեյնային մշակումների՝ գնահատելու համար, թե բլոկչեյնային տեխնոլոգիան ինչպես է սկսում ազդել կառավարությունների գործունեության և քաղաքացիների կյանքի վրա: Այս բաժնում ձևակերպվում են ուսումնասիրության վերջնական եզրակացությունները և առաջարկվում քաղաքականության գործողություններ՝ թվային պետական կառավարման համար բլոկչեյնային տեխնոլոգիայի ամբողջ ներուժն օգտագործելու նպատակով: Եզրակացություններն ու առաջարկությունները կառուցված են ուսումնասիրության չորս հետազոտական հարցերի շուրջ՝

• **Ընդգրկում·** հանրային հատվածի տեսանկյունից բլոկչեյնը ո՞ր գործողություններին կարող է ծառայել, և կառավարություններն այս տեխնոլոգիայով ներկայում ի՞նչ են անում:

• **Օգուտներ·** ի՞նչ օգուտներ է բլոկչեյնը բերում թվային պետական կառավարմանը և, մասնավորապես, քաղաքացիներին:

• **Մասշտաբի ընդլայնում·** ընթացիկ նախագծերի շրջանակում մշակված բլոկչեյնային ո՞ր ծառայությունները կարելի է տարածել ներկա ընդգրկումից դուրս:

• **Քաղաքականության օրակարգ·** ի՞նչ քաղաքականության գործողություններ են անհրաժեշտ՝ այս տեխնոլոգիաները լիովին օգտագործելու ի նպաստ հասարակության և քաղաքացիների:

4.1. Ուսումնասիրության հիմնական եզրակացությունները

Ընդգրկումը· հակառակ տարածված ներկայացումներին՝ բլոկչեյնը մինչ այժմ հանրային հատվածի համար ո՛չ արմատապես վերափոխող, ո՛չ էլ նույնիսկ գործող կարգը խախտող ազդեցություն է ունեցել: Մենք չենք դիտարկել նոր գործարար մոդելների ստեղծում, ծառայությունների նոր սերնդի ի հայտ գալ կամ պետական գործառույթներ իրականացնող որևէ հանրային հաստատության միջնորդական դերի ուղղակի վերացում: Ներկա պատկերը չի ներառում իսկապես վերափոխող ծառայություններ, որոնք ապակենտրոնացված քվեարկություն կամ քաղաքացիական կառավարում կապահովեին՝ առանց կառավարությունների անմիջական մասնակցության:

Հանրային ծառայություններ մշակող ընթացիկ նախագծերի տեսանկյունից բլոկչեյնային տեխնոլոգիան հիմնականում առաջարկում է գրանցումների վարման արդյունավետության բարելավումներ: Փաստաթղթերի քաղվածքները գրանցելով բոլորի համար բաց հանրային բաշխված գրանցամատյանում՝ կառավարությունները կարող են բարձրացնել իրենց կենտրոնացված գրանցամատյանների գրանցումների վարման հուսալիությունը: Բլոկչեյնային գրանցամատյանը կարելի է թարմացնել միայն նոր գրառումներ ավելացնելու եղանակով՝ ընթացիկ գրառումները կապելով նախորդ գործարքներին: Դա ենթադրում է, որ գրանցամատյանի տարբեր վիճակների միջև անցումները փաստագրող պատմությունն ամբողջական է, ճշգրիտ և լիովին ստուգելի: Գրանցամատյանի բաշխված լինելը նշանակում է, որ յուրաքանչյուր հանգույց գործարկում է գրանցամատյանի նույն ընդհանուր պատճենը, ինչը համակարգը դարձնում է խափանումների կամ չարամիտ վարքագծի նկատմամբ դիմակայուն: Բլոկչեյնի վրա հիմնված որոշ ներդրումներ պարզապես օգտագործում են այս տեխնոլոգիական հատկությունները՝ գոյություն ունեցող կենտրոնացված գրանցման ծառայությունների վրա վստահության

լրացուցիչ շերտ ստեղծելու համար: Բլոկչեյնի՝ նախագծմամբ ապահովվող վստահության և անվտանգության այս հատկությունների վրա հիմնված ծառայությունները ներկայում փորձարկումների հիմնական ուղղությունն են և ամենամոտն են շուկայական հասունությանը:

Սակայն հանրային հատվածում բլոկչեյնի փորձարկումները չեն սահմանափակվում բաշխված կոնսենսուսի միջոցով գրառումների տեխնիկական հավաստմանն ուղղված պարզ կիրառություններով: Որոշ նախագծեր բլոկչեյնն օգտագործում են որպես համատեղ տվյալների շտեմարանի տեխնոլոգիա: Այդպիսի շտեմարանը տվյալների միասնական հավաստի աղբյուր է, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել բազմաթիվ դերակատարների՝ մասնավոր կողմերի, հանրային մարմինների և քաղաքացիների մասնակցությամբ գործարար գործընթացները: Խելացի պայմանագրերը բլոկչեյնում ամրագրված ծրագրավորվող գործարկելի ծրագրեր են, որոնք համակարգի որոշակի վիճակից կախված փոխազդում են այլ խելացի պայմանագրերի և իրական օգտագործողների հետ: Դա հնարավորություն է տալիս վերահսկել և իրականացնել ավելի առաջադեմ աշխատանքային հոսքեր՝ հիմնվելով տարբեր հնարավոր հանգամանքների վրա, որոնք կարող են ձևավորվել օգտագործողների կամ արտաքին գործոնների ազդեցությամբ: Մյուս կողմն այն է, որ խելացի պայմանագրի բովանդակությունը պետք է խնամքով նախագծվի և ճիշտ կոդավորվի՝ ճշգրիտ պայմաններում ճշգրիտ վարքագիծ առաջացնելու համար: Իրական ներդրումներում պետք է գործեն անհամապատասխանությունների կարգավորման մեխանիզմներ՝ սխալ աշխատանքի կամ կոդի սխալների դեպքերն ուղղելու համար:

Խելացի պայմանագրերը բլոկչեյնային տեխնոլոգիայի առաջադեմ և հզոր գործառույթ են, որը բարձրացնում է գործարքների արդյունավետությունը և նվազեցնում անորոշությունը: Վերլուծված նախագծերում խելացի պայմանագրերը կիրառվում են սոցիալական նպաստների հասցեականության ապահովման, անշարժ գույքի շուկաներում տնտեսական գործարքների հեշտացման, ինչպես նաև

կենսաթոշակային համակարգի կարգավորող կանխատեսմանը և վարչարարությանն աջակցելու համար: Աշխատանքային հոսքերի վրա հիմնված առաջադեմ կիրառությունները շուկա հասնելու ավելի երկար ճանապարհ ունեն՝ իրենց բարդության և պահանջներին համապատասխանության խնդիրների պատճառով: Ավելի նեղ կիրառությունները, որոնք խելացի պայմանագրերն օգտագործում են որոշակի առաջադրանքի համար, օրինակ՝ իրավասության ստուգման կամ անձնական նույնականացուցիչների պահպանման, արդեն գործունակ են:

Բլոկչեյնը նաև խոստանում է իշխանությունը կենտրոնական միջնորդից փոխանցել էկոհամակարգին: Այն հանգամանքը, որ գործարքների տեխնիկական վավերությունն ապահովելու համար այլևս անհրաժեշտ չեն կենտրոնացված կողմեր, կարող է տարբեր հետևանքներ ունենալ կառավարման և քաղաքական գործընթացների համար՝ սկսած ուղղակի ժողովրդավարության ինքնակառավարվող և ինքնուրույն պահպանվող ձևերի ընդլայնումից: Բլոկչեյնն առաջարկում է պետական հաստատությունների թափանցիկությունը բարձրացնելու միջոցներ այնպիսի ոլորտներում, ինչպիսին հանրային ֆինանսներն են, կամ ընտրական ընթացակարգերի նկատմամբ քաղաքացիների վերահսկողությունն ընդլայնելու հնարավորություններ: Բլոկչեյնի՝ որպես կառավարման նոր մեխանիզմի այս հնարավոր վերափոխող կիրառությունները ներկայում չեն ուսումնասիրվում ընթացիկ փորձարկումներում: Այս միտումը, հավանաբար, կշարունակվի առաջիկա տարիներին երկու պատճառով: Նախ՝ ներկա փուլում տեխնոլոգիան կարծես չի երաշխավորում այնպիսի հուսալիություն, որ նրան վստահվի միակ միջնորդի դերը: Նրան աջակցելու համար ներկայում դեռ անհրաժեշտ են բազմաթիվ կենտրոնացված տեխնոլոգիաներ, օրինակ՝ կենտրոնական գրանցամատյաններ: Երկրորդ՝ բյուրոկրատական հաստատությունները կարող են շահագրգռված չլինել իրենց իշխանությունը սահմանափակելու մեջ՝ հօգուտ անմիջապես քաղաքացիների միջև հաստատված կոնսենսուսի մեխանիզմի:

Օգուտները՝ որոշ ոլորտներում հանրային ծառայությունների մատուցման համար բլոկչեյնային տեխնոլոգիաների օգտագործմամբ հնարավոր է ստանալ զգալի աստիճանական բարելավումներ: Բլոկչեյնի հետ կապված օգուտների երկու հիմնական խմբերն են անվտանգության բարձրացումը՝ տվյալների ամբողջականության, անփոփոխելիության և կազմակերպությունների միջև տվյալների համահունչության ուժեղացմամբ, և արդյունավետության աճը, օրինակ՝ մշակման ժամանակի կրճատումն ու ծախսերի նվազումը:

Ընթացիկ փորձարկումները դեռ համեմատաբար վաղ փուլում են, և գործառնական շահագործման ներդրումները քիչ են: Այնուամենայնիվ, վերլուծված նախագծերը ցույց են տալիս, որ բլոկչեյնային տեխնոլոգիայից իսկապես կարելի է ակնկալել արդյունավետության ու հուսալիության բարձրացում և գործարքային ծախսերի ու անորոշության նվազում: Այս հնարավոր օգուտները կբաշխվեն վարչակազմի, քաղաքացիների և ամբողջ հասարակության միջև: Բլոկչեյնի միջոցով գրառումների տեխնիկական հավաստում կիրառող ծառայությունները մեծացնում են տվյալների ստուգելիությունն ու վարչական գործընթացների թափանցիկությունը: Գրանցամատյանի գրառումների անփոփոխելիությունը կարող է մեծացնել քաղաքացիների և ընկերությունների վստահությունը պետական գրանցումների վարման նկատմամբ: Բլոկչեյնը կարող է բարձրացնել նաև այն շուկաների հուսալիությունը, որտեղ պետական հաստատությունները մասնակցում են որպես տեղեկություն տրամադրողներ և գործարքները հեշտացնողներ: Բացի վստահությունից ու հուսալիությունից, բլոկչեյնն առաջացնում է դրամական արտահայտությամբ չափելի արդյունավետության աճ: Օրինակ՝ հիփոթեքի մշակման և հողի նկատմամբ սեփականության իրավունքների փոխանցման ընթացակարգերի պարզեցումը խելացի պայմանագրի աշխատանքային հոսքի միջոցով անշարժ գույքի գործարքների ժամանակը շաբաթներից կրճատում է մինչև ժամեր: Ավելի արագ վերջնահաշվարկը նվազեցնում է անշարժ գույքի գործարքային ծախսերը և բարելավում շուկայի իրացվելիությունը՝

հնարավորություններ ստեղծելով ավելի մեծ տնտեսական ակտիվության համար: Գործարքների առարկա գույքի բարձր արժեքը հաշվի առնելով՝ այս խնայողությունները տարեկան կարող են կազմել հարյուրավոր միլիոն եվրո: Բլոկչեյնի վրա հիմնված կենսաթոշակների կառավարման համակարգը խելացի պայմանագրերով կազմակերպված աշխատանքային հոսքերից հնարավոր մեծ օգուտների մեկ այլ օրինակ է: Խելացի պայմանագրերը թույլ են տալիս գործընթացների բարձր աստիճանի ավտոմատացում, որը հանգեցնում է վարչարարական ծախսերի նվազման, թղթային աշխատանքի և պահպանման ծախսերի վերացման: Այս պահին որոշ նախագծերի ակնկալած տպավորիչ դրամական օգուտները դեռ միայն խոստումներ են, որոնք պետք է ապացուցվեն, երբ ծառայությունները գործարկվեն:

Համատեղ գրանցամատյանը պետական հաստատություններին նոր հնարավորություններ է տալիս նաև քաղաքականության մշակման և կարգավորող վերահսկողության ոլորտներում: Օրինակ՝ կենսաթոշակային համակարգի վիճակի կամ ձեռնարկությունների միջև գործարքների մասին փաստացի տեղեկությանն անմիջական հասանելիությունը մեծապես կբարելավի խարդախությանը կամ հարկերից խուսափելուն հակազդելու կառավարության հնարավորությունները: Սոցիալական ներառմանը նպաստող խելացի վաուչերների ծրագիրը ևս հաջող օրինակ է: Բացի կառավարման գործընթացի ավտոմատացումից բխող վարչարարական խնայողություններից, խելացի պայմանագրերը բարելավում են հանրային միջոցների բաշխման արդյունավետությունն ու շահառուներին դրանց հասցեական ուղղումը:

Քաղաքացու տեսանկյունից բլոկչեյնն այլ թվային ապակենտրոնացված տեխնոլոգիաների հետ համակցված կարող է վերացնել ավելորդ բյուրոկրատիան, թղթային օրինակների կամ քաղաքապետարան այցելությունների անհրաժեշտությունը՝ դրանց փոխարեն առաջարկելով հեռավար գործող բջջային հավելվածներ: Հանրային իշխանությունների հետ շփման բարելավված փորձառության մի մասը կապված է ինքնուրույնության ձեռքբերման

հետ, որը հայտնի է նաև որպես սեփական տվյալների ինքնիշխան վերահսկողություն: Լիովին վերահսկելով իրենց անձնական տվյալները՝ քաղաքացիները մեծապես անկախանում են կենտրոնական պահոցներից, որոնց մնում է միայն հավաստող դեր կատարել: Կարևոր է նշել, որ քանի որ բլոկչեյնի վրա հիմնված ծառայությունները հիմնականում փորձնական փուլում են կամ գործում են փոքր մասշտաբով, այդ օգուտները դեռ հասանելի չեն: Արժե նաև հիշել, որ բլոկչեյնային տեխնոլոգիան ծառայության տեխնիկական նախագծում միշտ մի քանի շերտերից ընդամենը մեկն է: Ուստի օգտագործողների՝ ծառայությունից ստացած արժեքը պետք է վերագրել տարբեր տեխնոլոգիաների և գործառույթների համակցությանը:

Մասշտաբի ընդլայնումը· կրթական հավաստագրերի ստուգումը ընտրանքում վերջնական օգտագործողին ուղղված միակ ծառայությունն է, որը կարելի է առաջարկել վերևից վար ներդրման համար՝ համաեվրոպական բազմակողմ հարթակի տեսքով: Ծառայությունը ցանցային օգուտներ է առաջացնում համալսարանների, քաղաքացիների և գործատուների միջև և արձագանքում է քաղաքականության առաջնահերթություններին: Տեխնիկական նախագիծը հասուն է և հիմնվում է գոյություն ունեցող բաց կոդով ստանդարտների ու հանրային բլոկչեյնային ենթակառուցվածքի վրա: Թեև մի քանի այլ ծառայություններ արդեն ունեն համեմատաբար հասուն տեխնիկական նախագծեր, որոնք կարող են գործարկվել տարբեր վարչակազմերում, նման կրկնօրինակումը նախ և առաջ պետք է ծառայի փորձարկման նպատակներին: Տեխնոլոգիայի կենսաշրջանի այս փուլում կենսական նշանակություն ունի տարբեր տեխնիկական նախագծերով փորձարկումների շարունակումը: Մինչև մասշտաբի ընդլայնումը պետք է մշակվեն տեխնիկական և կառավարման ստանդարտներ՝ տարբեր նախագծերի փոխգործունակությունն ապահովելու և գործունակ ծառայություններին նպաստելու համար:

Վերլուծված ծառայությունների մեծ մասն իր ներկայիս ձևով պատրաստ չէ մասշտաբի ընդլայնմանը: Դա պայմանավորված է անբավարար տեխնիկական հասունությամբ կամ իրավական միջավայրին անհամապատասխանությամբ, օրինակ՝ թվային ստորագրությունների և ծածկագրային ապացույցներով գրառումների հավաստման օրինականության առումով: Բարդ նախագծերի դեպքում մասշտաբի ընդլայնման մեկ այլ խոչընդոտ է տեղական ինստիտուցիոնալ միջավայրին ծավալուն հարմարեցման անհրաժեշտությունը: Օրինակ՝ բլոկչեյնը որպես համատեղ տվյալների շտեմարան օգտագործող լուծումները պահանջում են էկոհամակարգում առկա տարբեր ավանդական տվյալների շտեմարանների ինտեգրում: Ներկայում մի շարք նախագծեր աշխատում են այս տարբեր տեխնիկական խնդիրները լուծելու ուղղությամբ: Ուստի նույնիսկ ներկայում գաղափարի իրագործելիության ապացույցի փուլում գտնվող ամենաբարդ լուծումները անհրաժեշտ հարմարեցումից հետո ինչ-որ պահի կարող են կրկնօրինակվել տարբեր վարչակազմերում: Սակայն նույնիսկ տեխնիկական ու իրավական խոչընդոտները հաղթահարելու դեպքում դեռևս հիմնավոր պատճառ չկա կառչելու մեկ տեխնիկական լուծումից՝ մի քանի մրցակցող, բայց ստանդարտացված նախագծերի միջև ընտրություն ունենալու փոխարեն, օրինակ՝ ինքնության կառավարման համար: Նախնական ստանդարտացումը հատկապես կարևոր է հիմնարար ծառայությունների՝ կառավարման շրջանակի և ապակենտրոնացված ինքնության կառավարման համար, քանի որ այս տարրերը վերջնական օգտագործողին ուղղված ծառայությունների կառուցման բաղադրիչներն են:

Վերլուծված յոթ ծառայություններից երկուսը կարելի է առաջարկել վերևից վար ներդրման համար: Այս ծառայությունների ամբողջ օգուտն իրացնելու համար ներդրման և գործարկման ընթացքում անհրաժեշտ է տարբեր անդամ պետությունների հաստատությունների ավելի սերտ համակարգում: Վերևից վար ներդրումները պետք է ուղղորդվեն ընդհանուր ուղեցույցներով՝ անվտանգության կամ գաղտնիության պահանջներին համապատասխանությունն ու տեխնիկական փոխգործունակությունն

ապահովելու համար: Կրթական հավաստագրերի ստուգման ծառայությունը հիմնվում է բաց կոդով գրադարանների և փաստաթղթավորման վրա, որոնք կազմում են բաց կոդով ստանդարտ: Բացի այդ, այն օգտագործում է հանրային բլոկչեյնների փորձարկված միջավայրը, կախված չէ առանձին հարթակից և իրականացնում է գրառումների տեխնիկական հավաստման լավ հայտնի գործառույթը: Հաշվի առնելով քաղաքացիների համար հստակ արժեքը և փաստաթուղթ տրամադրողների՝ մեկ մատակարարից կախվածության մեջ հայտնվելու վտանգի բացակայությունը՝ կրթական հավաստագրերի ստուգման ծառայության մասշտաբը կարելի է ընդլայնել մինչև ԵՄ մակարդակ:

Քաղաքականության օրակարգը· բլոկչեյնի վրա հիմնված լուծումների անհամատեղելիությունը գոյություն ունեցող իրավական և կազմակերպական շրջանակների հետ բլոկչեյնի վերափոխող ներուժն իրացնելու հիմնական խոչընդոտն է: Ուստի քաղաքականության գլխավոր նպատակը պետք է լինի բաշխված գրանցամատյանների տեխնոլոգիական հասունության և դրանց էկոհամակարգի հասունության բարձրացումը: Բլոկչեյնի վերափոխող ներուժի իրացումը պահանջում է մի շարք գործողություններ, որոնք մանրամասն ներկայացված են հաջորդ բաժնում: Քաղաքականության գործողությունները պետք է ուղղված լինեն ոչ միայն տեխնոլոգիան գոյություն ունեցող էկոհամակարգերին հարմարեցնելուն, այլև բլոկչեյնի՝ գործող կարգը փոխելու ներուժով առկա գործընթացները, կազմակերպություններն ու կառուցվածքները վերափոխելուն:

4.2. Առաջարկվող քաղաքականության օրակարգը

Բլոկչեյնի վերափոխող ուժն իրացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել բաշխված գրանցամատյանների տեխնոլոգիական հասունությունն ու դրանց էկոհամակարգի հասունությունը: Քաղաքականության այս գլխավոր նպատակը կարելի է վերածել կոնկրետ նպատակների և գործողությունների ամբողջության, որը կխթանի բլոկչեյնային տեխնոլոգիայի ամբողջ ներուժի օգտագործումը՝

1. **Ուղղորդում և գիտելիքի փոխանակում**· ստեղծել ծրագրեր՝ անդամ պետությունների միջև բլոկչեյնի ներդրման լավագույն փորձը փոխանակելու և տեխնոլոգիայի վերաբերյալ գիտելիքը զարգացնող ուղեցույցներ ու առաջարկություններ տրամադրելու համար:

